

ԱՐԱՄԵԱԳՈՐԾԻ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

677
Տ-85

Տ. Ա. ՄՈԴԵՍՏՈՎԱ

ՎԻԼԱԿՈՒՀՈՒ
ՌԻՉԵԿԻՑԸ



3 3 4

ՏՏՀԱՏ-ՌԻՍՏԱՆԿՐԱՏՐԱԺԻՆ-ՑԵՐԵՎԱՆ

4 JUL 2013

Հ 7.300

ԱՆԱԾԱԳՈՐԾԻ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ա. ՄՈԴԵՍՏՈՎԱ

677 ԱԿ

1-85


ՎԻԼԱԿՈՒՑՈՒ ՈՒՂԵԿԻՑԸ

Ա. Ա. ԿՈԽՈՐԻՄՆՈՎԴԻ ԽՄԲՍԳՐՈՒԹՅՈՒՆ

ՈՈՒԽԵՐԵՆԻՑ ԹԱՐԳՄ. Զ. ԶԱԽՄԱԽԱԶ ՑԱՆ

1934

ԹԻՏՐՈՒՄ ՈՒՍՄԱԿԴՐՈՏԲԱԺԻՆ
ՑԵՐԵՎԱՆ



ՌՈՒՍ-ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Այս գրքույկը լույս ե տեսնում «Պակաս վորակավորված բանվորների զրադարան» սերիայով: Այդ գրադարանի նպատակն է՝ ոգնճլ բանվորին իր վորակը բարձրացնելու համար:

Հաճախ կարելի յե տեսներ թե ինչպես իր բախտին թողնված բանվորը ձեռք ե բերում աննպատակահարմար (սխալ) արտադրական ունակություններ: Դրանից խուսափելու և պրոֆեսիոնալ նոր գիտեմքներ յուրացնելու գործում բանվորին ոժանդակելու նպատակով՝ նրան պետք ե մատչելի արտադրական գրքույկ տալ: Հենց այդպիսի գրքույկ ե հանդիսանում այս բրոշյուրը:

Գրքում պատահում են այնպիսի արտահայտություններ և բառեր, վորոնք մաթեմատիկական և ֆիզիկական գիտելիքներ են պահանջում: Ուստի զրքի սկզբում կա ներածական մի գլուխ, վորտեղից ընթերցողը կարող ե քաշել այն տեղեկությունները, վորոնք անհրաժեշտ են նրան՝ հետագա նյութը հասկանալու համար: Բոլոր մնացած գժվար և անհասկանալի տեղերը բացատրվում են կամ բնագրում, կամ ծանություններում և կամ մեջբերումներում:

Հրատարակչությունն ուշագրություն և դարձրել գրքի մեջ դնել մատչելի նկարներ և ձեւապատկերներ: Ապա, վորպեսզի գրքույկը, վորքան կարելի յե, մեծ չափով ողտագործվի արտադրական խմբակների, հատվածային բրիգադների, հեռակա խմբակների կողմից, այդ նպատակով այնպեղ հարցեր (տեղ-տեղ ել ննդիրներ) են գրված: «Պակաս վորակավորված բանվորների գրադարան» կազմակերպելու գործին ակտիվ մասնակցում ե Մանածագործների կենտրոնական կոմիտեն: Այդ մասնակցությունն արտահայտվում ե ընդհանուր պլանը կազմելով, հրատարակչությանը վորոշ հեղինակներ հանձնարարելով, գրքի բովանդակության վերաբերյալ ցուցմունքներ տալով, նույնպես և բանվորական ժողովներում մի քանի գրքույկներ կարգալով:



Այս գրքի քննադատական հատուկ ուսումնասիրությունը Միության կենտրոնական կոմիտեն հանձնարարել է ընկ. Կուպրիանովին:

Այս սերիայի կոլեկտիվ ուսումնասիրությունն ու քննադատությունը բանվորների իրենց կողմից—լավագույն գրավականն ե խկական լավորակ տեխնիկական մասսայական գիրք հորինելու համար: Այս նպատակներով հրատարակչությունը խնդրում է՝ բոլոր ցանկացողներն իրեն ուղարկեն (հետեւվալ հասցեյով՝ *Москва, ГСП, 2, просп. Владимира 4, Государственное Техническое Издательство, БПК*) իրենց դիտողությունները, հարցերը և այլն: Այդ բոլորը կոգտագործվի գրքի վերահրատարակության գեղքում: Այդպիսով, ամեն ընթերցող բանվոր ինքն անմիջապես կմասնակցի բանվորների համար գրքեր հրատարակելու այս կարևոր գործին:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՀԱՄԱՐՈՑ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ԹՎԱԲՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԹՎԱԲՆՈՒԹՅՈՒՆ ԶՈՐՄ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այն թվերը, վորոնք գումարվում են, կոչվում են գումարելիներ: Գումարման արդյունքը կոչվում ե գումար:

$$\begin{array}{r} \text{Որինակ} \\ + \end{array} \begin{array}{l} 20 \\ 5 \\ \hline 25 \end{array} \begin{array}{l} \text{գումարելիներ} \\ \text{գումար:} \end{array}$$

Այն թիվը, վորից հանվում ե մի ուրիշ թիվ, կոչվում ե նվազելի: Այն թիվը, վոր հանվում ե՝ կոչվում ե հանելի: Հանման արդյունքը կոչվում ե տարերություն:

$$\begin{array}{r} \text{Որինակ} \\ - \end{array} \begin{array}{l} 20 - \text{նվազելի} \\ 5 - \text{հանելի} \\ \hline 15 - \text{տարերություն:} \end{array}$$

Յեթե մի թիվ բազմապատկվում ե մի ուրիշ թիվ, ապա առաջինը կոչվում ե բազմապատկելի, յերկրորդը՝ բազմապատկիչ, բազմապատկման արդյունքը՝ առաջրյալ:

$$\begin{array}{r} \text{Որինակ} \\ \times \end{array} \begin{array}{l} 20 - \text{բազմապատկելի} \\ 5 - \text{բազմապատկիչ} \\ \hline 200 - \text{առաջրյալ:} \end{array}$$

Յեթե մի թիվ բաժանվում ե մյուսի վրա, ապա առաջինը կոչվում ե բաժանելի, յերկրորդը՝ բաժանարար, բաժանման արդյունքը՝ բանորդ: Յեթե թիվը լրիվ չի բաժանվում մյուսի վրա, ապա ստացվում ե նաև մնացորդ:

$$\begin{array}{r} \text{Որինակ} \quad \text{բաժանելի} \quad 23 \\ \hline 20 \\ \hline \text{մնացորդ} \quad 3 \end{array} \begin{array}{l} 5 \text{ բաժանարար} \\ 4 \text{ քանորդ} \end{array}$$

Ինչպես ե սացվում կոտորակը

Յեթե մենք միավորը կամ մի ամբողջը (ասենք՝ խնձորը) բաժառ նենք մի քանի հավասար մասերի, ապա կստանանք կոտորակ:

Այսպես՝ յեթե վերցնենք միավորը և բաժանենք 5 հավասար մասերի, կոտորակը կլինի՝ մեկ հինգերորդական: Յեթե վերցնենք յերեք այլպիսի հավասար մասեր, մենք կունենանք վոչ թե մեկ հինգերորդական, այլ յերեք հինգերորդական:

Ինչպես ե գրվում կոտորակը

Մի գիծ են քաշում և նրա տակ գրում այն թիվը, վոր ցույց ե տալիս, թե ամբողջը քանի հավասար մասի յե բաժանված: Գծի վերեւ վում գրում են այն թիվը, վոր ցույց ե տալիս, թե քանի այլպիսի մասեր ենք վերցնում: Այսպես՝ յերեք հինգերորդական կոտորակը կարելի յե գրել՝ $\frac{3}{5}$ և այլն:

Կարելի յե գրել և թեք գծով, այսինքն՝ $\overset{3}{\diagdown} \diagup$:

Վերևի թիվը կոչվում ե համարիչ, իսկ ներքեինը՝ հայտարար: Այսպես՝ մեր կոտորակում ($\frac{3}{5}$) համարիչը 3 ե, հայտարարը՝ 5:

Ի՞նչ ե տանորդական կոտորակը

Այն կոտորակն ե, վոր բաղկացած ե տասերորդական, հարյուրերորդական, հազարերորդական և այլ մասերից:

Ինչպես ե կարդացվում տանորդական կոտորակը

Պետք ե կարդալ ստորակետից առաջ գրած թիվը և ավելացնել «ամբողջ» բառը, հետո կարդալ ստորակետից հետո գրած թիվը և հետո ավելացնել «տասերորդական» բառը, յեթե ստորակետից հետո մի թվանշան ե, իսկ հարյուրերորդական, յեթե ստորակետից հետո յերկու թվանշան ե և այլն:

Որինակ՝ 0,12 (զերո ամբողջ տասներկու հարյուրերորդական): 3,156 (յերեք ամբողջ հարյուրինսունվեց հազարերորդական):

Ինչպես ե գրվում անորդական կոտորակը

Առաջ գրում են ամբողջ թիվը, հետո ստորակետ են դնում, հետո գրում են թվի կոտորակային մասի թիվը: Պետք ե հետեւ, վոր կոտորակային մասում միայն մի թվանշան լինի, յեթե մասերը տասերորդական են. յերկու թվանշան լինի, յեթե մասերը հարյուրերորդական են և այլն: Զերո ամբողջ տասնեհինսգ հարյուրերորդականը գըր-

գում ե այսպես՝ 0,15 (ստորակետից հետո յերկու թվանշան): Յերեք ամբողջ հարյուրը հիսունվեց հազարերորդականը գրվում ե այսպես՝ 3,156 (ստորակետից հետո յերեք թվանշան): Յեթե թվանշանները պակասում են, այն ժամանակ, ստորակետի և նրան հաջորդող թվանշանի մեջտեղում զերոներ են գրում, այսինքն՝ պակաս թվանշանները լրացնում են զերոներով: Յենթադրենք՝ պետք ե զրել զերո ամբողջ տասնեհինգ հազարերորդական: Յեթե զրենք 0,15, ապա կստանանք զերո ամբողջ տասնեհինգ հարյուրերորդական (սխալն առաջացավ նըրաւանից, վոր ստորակետից հետո յերեք թվանշան պետք ե լիներ): Յեթե ստորակետից հետո պակասող թվանշանը լրացնենք զերոյով, այն ժամանակ կստանանք թվի ճիշտ ձևակերպումը, այսինքն 0,015:

Ինչպես պես ե մեծացնել տանորդական կոտորակը 10, 100, 1000 յեկան այլն անգամ

Տասնորդական կոտորակը 10 անգամ մեծացնելու համար ստորակետը պետք ե տեղափոխել մեկ թվանշան դեպի աջ. հարյուր անգամ մեծացնելու համար — յերկու թվանշան դեպի աջ և այլն:

Այսպես, որինակ՝ յեթե ուզում ենք 3,156 կոտորակը 10 անգամ մեծացնել, մենք ստորակետը տեղափոխում ենք մեկ թվանշան դեպի աջ և ստանում են 31,56:

Ինչպես պես ե փոքրացնել տանորդական կոտորակը 10, 100, 1000 յեկան այլն անգամ

Տասնորդական կոտորակը 10 անգամ փոքրացնելու համար պետք ե ստորակետը տեղափոխել դեպի ձախ՝ մեկ թվանշան, 100 անգամ փոքրացնելիս — յերկու թվանշան դեպի ձախ և այլն:

Որինակ՝ մենք ուզում ենք 315,675 հարյուր անգամ փոքրացնել: Դրա համար ստորակետը տեղափոխում ենք յերկու թվանշան դեպի ձախ և ստանում են 3,15675:

Ծանոթություն I. Յեթե ստորակետի տեղափոխման ժամանակ թվանշանները պակասում են, պակասող թվանշանները զերոներով ենք լրացնում: Այսպես, որինակ՝ 0,156 կոտորակը հարյուր անգամ փոքրացնելու համար այսպես ենք գրում՝ 0,00156, 0,15 կոտորակը հազար անգամ մեծացնելու համար այսպես ենք գրում՝ 150, կամ ուզակի 150 առանց ստորակետի (վորովհետեւ ամբողջ թվի համար ստորակետն ավելորդ ե):

Ծանոթություն II. Տասնորդական կոտորակի վերջում զերոներ գրելը կամ չնշելը չի փոխում կոտորակի մեծությունը: Այսպես, որինակ՝ 0,150., 0,15., 0,15000 մինույն թվերն են:

Ինչպես են գումարվում տասնորդական կոտորակները

Տասնորդական կոտորակները գումարելու համար՝ իրար տակ են զրում այնպես, վոր ամբողջները լինեն ամբողջների տակ, տասնորդական մասը՝ տասնորդականի, հարյուրերորդականը՝ հարյուրերորդականի տակ և այլն: Հետո գումարում են, ինչպես ամբողջ թվերը: Միայն պետք է հիշել, վոր ստացած թվի մեջ ստորակետը պետք է զրել այնտեղ, վորտեղ նա գրված եր գումարելիների մեջ:

$$\begin{array}{r} \text{Որինակ՝} & 12,56 \\ & + 3,38 \\ \hline & 15,94 \end{array}$$

Ինչպես են համում տասնորդական կոտորակները

Մի տասնորդական կոտորակ մի ուրիշ տասնորդականից հանելու համար, պետք է կոտորակներից մեկը (փոքրը) գրել մյուսի (մեծի) տակ այնպես, վոր ամբողջները լինեն ամբողջների տակ, տասնորդականը՝ տասնորդականի, հարյուրերորդականը՝ հարյուրերորդականի տակ և այլն: Հետո հանում են, ինչպես ամբողջ թվերը: Միայն պետք է հիշել, վոր տարրերության մեջ ստորակետը պիտի լինի այնտեղ, վորտեղ նա գտնվում է նվազելիում և հանելիում:

$$\begin{array}{r} \text{Որինակ՝} & 25,378 \\ & - 1,265 \\ \hline & 24,113 \end{array}$$

Ինչպես են բազմապատկում տասնորդական կոտորակները

Տասնորդական կոտորակները բազմապատկելիս պետք է բազմապատկել ինչպես ամբողջ թվերը: Ստացած թվի (արտադրյալի) աջ կողմից (թվի աջ կողմից) ստորակետներով պետք է բաժանել այնքան թվանշան, վորքան թվանշան յեղել և ստորակետից հետո բազմապատկելիի և բազմապատկի մեջ միասին:

$$\begin{array}{r} \text{Որինակ՝} & 12,356 \\ & \times 0,024 \\ \hline & 49\ 424 \\ & 247\ 12 \\ \hline & 0,296\ 544 \end{array}$$

Ինչպես պետք է տասնորդական կոտորակը բաժանել ամբողջ թվի վրա

1. Տասնորդական կոտորակն ամբողջ թվի վրա բաժանելու համար անհրաժեշտ է այդ թվերը բաժանել վորպես [ամբողջ թվեր]: Միայն պետք է հիշել, վոր ստորակետին հասնելիս, պետք է անմիջապես քառորդում ևս ստորակետ դնել:

Որինակ՝ 25,375 | 5

5,015

2. Ամբողջ թիվը կոտորակի վրա բաժանելու համար պետք է բաժանարարում ստորակետը ջնջել, իսկ բաժանելիում այնքան վերո գրել, վորքան բաժանարարում ստորակետից հետո թվանշան կա: Այնուհետև բաժանում են, ինչպես ամբողջ թվերը:

$$\begin{array}{r} \text{Որինակ՝} & 25 | 0,025 \\ & 25000 | 25 \\ & & 1000 \end{array}$$

3. Տասնորդական կոտորակը տասնորդականի վրա բաժանելիս, պետք է բաժանարարում ջնջել ստորակետը, իսկ բաժանելիում ստորակետը գեպի աջ աեղափոխել այնքան թվանշան, վորքան թվանշան կար բաժանարարում ստորակետից հետո: Ապա կատարում ենք բաժանումը:

$$\begin{array}{r} \text{Որինակ՝} & 13,575 : 0,05 \\ & 1357,5 : 5 = 271,5 \end{array}$$

Յեթե բաժանելիում ստորակետը տեղափոխելիս թվանշանները պահպառ են, այն ժամանակ պակաս թվանշանները լրացնում են զերով:

$$\begin{array}{r} \text{Որինակ՝} & 2,565 : 0,0005 \\ & 25650 : 5 = 5130 \end{array}$$

Հարաբերություններ յել համեմատություններ*

Յենթագրենք, թե ունինք մի սալ, վորի լայնությունը 1 մետր է, իսկ յերկարությունը՝ 2 մ: Յեթե մենք ցանկանում ենք իմանալ թե քանի անգամ սալի յերկարությունը մեծ է նրա լայնությունից, ապա մենք պետք է 1-ը բաժանենք 1-ի վրա, կստանանք 2: Ուրեմն սալի յերկարությունը 2 անգամ մեծ է լայնությունից: Յեթե ցանկանում ենք իմանալ՝ քանի անգամ լայնությունը փոքր է յերկարությունից, այն ժամանակ լայնությունը՝ բաժանում ենք յերկարության վրա՝ ստանանք 1 : 2 = 1/2: Այդ նշանակում է, վոր լայնությունը կազմում է յերկարության կեսը, կամ թե՝ լայնությունը յերկու անգամ փոքր է յերկարությունից: Յերեմն յերկու թվեր համեմատելիս վերջնական արդյունքը չեն զրում, այլ միայն ցույց են տալիս այն գործողությունը, վոր կատարում են միայն համեմատելու համար, այսինքն՝ զրեւմ են՝ 2 : 1 կամ 1 : 2: Այս արտահայտությունները կոչվում են համեմատություններ: Ի՞նչ են նշանակում այդ արտահայտությունները: Տվյալ գեպքում նրանք նշանակում են հետեւյալը. սալի յերկարու-

* Այս բաժինն անհրաժեշտ է XV զլուխը հասկանալու համար:

թյունն այնքան անգամմեծ է նրա լայնությունից, վորքան անգամ 2-ը մեծ է 1-ից, կամ սալի լայնությունն այնքան անգամ փոքր է 2-ից: Այս հարաբերությունները սովորաբար այսպես են կարդում. յերկուսը հարաբերում են մեկին, կամ մեկը հարաբերվում է յերկուսին, (յերկու կետի, այսինքն՝ բաժանման նշանի փոխարեն, տառմ են՝ «հարաբերվում ե»):

Յեթե հարաբերությունն արտահայտվում է մեծ թվերով, ապա յերկու թվերն ել (կամ ինչպես ասում են՝ հարաբերության յերկու անդամները) կարելի յե բաժանել նույն թվի վրա: Այսպես, որինակ՝ փոխանակ 20 : 10, կարող են գրել՝ 2 : 1: Դրանից հարաբերությունը չի փոխվի, վորովհետև 20 : 10 հավասար է 2-ի և 2 : 1-ի, ելի հավասար է 2-ի: Այս գործողությունը կոչվում է հարաբերության կրնառում:

Վերցնենք 8 : 4 հարաբերությունը: Պարզ է, վոր հավասար է 2-ի: Վերցնենք 20 : 10 հարաբերությունը, նա յել հավասար է 2-ի: Այսպիսով յերկու հարաբերությունները հավասար են: Այդ կարելի յե հետեւյալ կերպ արտահայտել — յերկու հարաբերություններն իրար կողքի գրել, նրանց միջև դնել հավասարության նշան և կստանանք.

8 : 4 = 20 : 10

Այսպիսի արտահայտությունը (յերկու հարաբերությունների հավասարությունը) կոչվում է համեմատություն: Տեսնում ենք, վոր համեմատությունը բաղկացած է 4 թվերից: Նրանք կոչվում են համեմատության անդամներ: Համեմատության այն անգամները, վորոնք դըրսում են գրված, կոչվում են համեմատության դրսի անդամներ, իսկ մեջտեղում գրված անդամները՝ համեմատության ներսի անդամներ: Տվյալ գեպքում 8-ը և 10-ը համեմատության դրսի անդամներն են իսկ 4-ը և 20-ը — ներսի անդամներն են:

Համեմատությունը շատ հետաքրքիր հատկություն ունի, այն ե՝ յեթե համեմատության դրսի անդամները բաղմապատկենք, հետո յել — ներսի անդամները, մենք միենառուն արտադրյալը կստանանք: Մաթեմատիկական լեզվով այդ հատկությունն այսպես է արտահայտվում. համեմատության դրսի անդամների արտադրյալը հավասար է ներսի անդամների արտադրյալին: Այս հատկությունը պարզելու համար վերցնենք հետեւյալ որինակը. $100 : 20 = 50 : 10$: Տեսնում ենք, վոր $100 \times 10 = 1000$ և $50 \times 10 = 1000$:

Այս հատկությունների հիման վրա կարելի յե դուրս բերել յերկու հետաքրքիր կանոն, այսինքն՝

Կանոն. Յեթե մեզ հայտնի չե համեմատության դրսի անդամներից մեկը (յենթագրենք ջնջված ե, կամ սխալմամբ չի գրված), այն ժամանակ անհայտ անդամը գտնելու համար, ներսի յերկու անդամ-

ները պետք է բաղմապատկել և արտադրյալը բաժանել դրսի հայտնի անդամի վրա: Վերցնենք հետեւյալ որինակը.

x : 5 = 8 : 2: x-ը գրված է անհայտ (ջնջված կամ վոչ պարզ գրված) անդամի տեղը և կոչվում է իքս: Ինչպես պետք է վերականգնել անհայտ անդամը: 8-ը բաղմապատկում ենք 5-ով՝ $— 40$ և բաժանում ենք 2-ի վրա: Ստանում ենք 20: Ուրեմն այսի փոխարեն պետք է լինեք 20: Այդ ժամանակ մեր համեմատությունը հետեւյալ ձեն և ստանում: 20 : 5 = 8 : 2: Ինչպես ստուգել գործողությունների ճշտությունը: 20-ը բաղմապատկում ենք 2-ով, ստանում ենք 40, 8-ն ել բաղմապատկում ենք 5-ով, ելի ստանում ենք 40: Հետեւյալ համեմատությունը ճիշտ է:

Վերցնենք մի ուրիշ որինակ. 20 : x = 8 : 2: x գրված է համեմատության անհայտ անդամի տեղ: Ինչպես վերականգնեցնենք համեմատությունը: 20 բաղմապատկում ենք 2-ով, — ստանում ենք 40: Արտադրյալը բաժանում ենք 8-ի, ստանում ենք 5: Մեր համեմատության մեջ այսի փոխարեն դնում ենք 5 և ստանում ենք հետեւյալ համեմատություն՝ 20 : 5 = 8 : 2: Ստուգում ենք մեր լուծման ճշտությունը: 20-ը բաղմապատկում ենք 2-ով՝ $= 40$ և $5 \times 8 = 40$:

Համեմատության տեսությունը շատ հետաքրքիր կիրառում ունի գործնականում: Վերցնենք մի շարք որինակներ, վորտեղ համեմատությունը կիրառվում է:

Յենթագրենք Պետրոսյանը (բանվոր) 12 որում վաստակել է 55ռ., իսկ Սարգսյանն աշխատել է 36 որ: Հարց ե տրվում. վորքմն կվաստակի Սարգսյանը, յեթե յերկուսի որավարձերը հավասար են: Պարզության համար յերկու յոյնայտելու համար յաջմինքն է:

Պարզության համար յերկու յոյնայտելու համար յաջմինքն է.

Որեր Վաստակ

Պետրոսյան 12 55

Սարգսյան 36 x

(Սարգսյանի անհայտ վաստակի փոխարեն ա ենք գրում)

Այսպես ենք դատում. Սարգսյանի վաստակը շատ է Պետրոսյանի վաստակից (վորովհետեւ նա շատ որեր ե աշխատել) և շատ է այնքան անգամ, վորքան նրա աշխատանքի որերը շատ են Պետրոսյանի աշխատած որերից: Մենք կարող ենք այսպես արտահայտել. Սարգսյանի վաստակը հարաբերվում է Պետրոսյանի վաստակին այնպես (այսինքն $x : 55$), ինչպես Սարգսյանի որերի թիվը հարաբերվում է Պետրոսյանի վաստակին (այսինքն $36 : 12$): Միացնենք այս յերկու հարաբերվությունները (փակագծերի միջինները) հավասարության նշանով: Ստանում ենք $x : 55 = 36 : 12$:

Կանոնով գտնում ենք, վոր x -ը, այսինքն Սարգսյանի վաստակը հավասար է՝

Անհրաժեշտ է ուշագրություն դարձնել հետևյալ հանգամանքի վրա: Յեթե աշխատանքի ժամանակն ավելանում է, ապա ավելանում է և վաստակը: Այս կախումը կոչվում է ուղիղ համեմատականուրյուն: Այլ կախում ել կա: Վերցնենք յերկու ժամանակները, մեկը պտտող, մյուսը՝ պտտվող: Յենթադրենք, վոր պտտողը մի բոպեյում վորոշ թվով պըտույտներ և գործում: Այս ժամանակ պտտվող անվի պտույտների թիվը կախված կլինի նրա ատամների թվից: Պտտվող անվի պտույտների թիվը այնքան անգամ ավելի կլինի, վորքան պակաս է նրա ատամների թիվը: Ընդհակառակը, վորքան պակաս լինի պտտվող անվի պտույտների թիվը, այնքան անգամ նրա պտույտների թիվը ավելի կլինի: Այս կախումը կոչվում է համեմատականուրյուն:

ՏՈԿՈՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վորեւ թվի հարյուրերորդական մասն այդ թվի մեկ տոկոսն է կոչվում: Որինակ՝ $300 \cdot \frac{1}{100}$ մեկ տոկոսը $3 \cdot 1$ է: Տվյալ թվի $10,15$ և այլ տոկոսներն ստանալու համար՝ նախ պիտի վորոշել մեկ տոկոսը և ստացածը բազմապատկել տոկոսների թվով: Որինակ՝ մենք ցանկանում ենք ստանալ $600 \cdot \frac{1}{100}$ հինգ տոկոսը: $600 \cdot \frac{1}{100}$ մեկ տոկոսը $6 \cdot 1$ է, իսկ հինգ տոկոսը կլինի՝ $6 \times 5 = 30$: Տոկոսը պայմանական ձևով նշանակում են $\%$ նշանով:

Հետևազես $12 \cdot 1$ կարգացվում է՝ «տասներկու տոկոս»:

ՀԵՄԻԱՑ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՐԿՐԱԶԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՇՐՋԱՆԻ ՅԵՎ ՇՐՋԱՆԱԳԾԻ ՄԱՍԻՆ


Կարկինը մի գործիք է, վոր բաղկացած է յերկու վոտերից (նկ. 1): Կարկինի վոտերից մեկը սուր է (սուր ծայր ունի), իսկ մյուսը՝ սայր, մատիտ կամ գրելու այլ գործիք ամրացնելու համար:

Յեթե կարկինի մի վոտը խրենք մակերերեսույթի (թղթի, տախտակի և այլն) վոտեւե կետում, իսկ մյուս մատիտավոր ծայրով մակերեսույթի վրա գծենք, ապա կստանանք մի կլոր գիծ, վոր կոչվում է շրջանագիծ: Շրջանագծով պարփակված մակերեսույթի մասը կոչվում է շրջան: Այն կետը, վորի մեջ, շրջանագիծ գծելիս, խրեցինք կարկինի սուր ծայրը, կոչվում է կենտրոն (նկ. 2):


Յեթե շրջանագիծի կենտրոնն ուղիղ գծով միացնում ենք նրա վորեւ կետի հետ, ապա ստացած ուղիղ գծի հատվածը կոչվում է շառավիղ: Նույն շրջանագիծի բոլոր շառավիղներն իրար հավասար են:

Յեթե շրջանագիծի վորեւ կետից կենտրոնի միջով մի ուղիղ գիծ ենք տանում մինչև շրջանագիծի այլ կետը, ապա այդ ուղիղ հատվածը կոչվում է տրամագիծ: Տրամագիծը հավասար է յերկու շառավիղների յերկարությանը:

Շրջանագիծի յերկարությունն ստանալու համար՝ արամագիծի յերկարությունը պետք է բազմապատկել $3^{1/7}$ (ավելի ճշգու՝ 3,14): Որինակ՝ յեթե շրջանագիծի շառավիղը հավասար է $3^{1/2}$ մետրի, ապա տրա-



Նկ. 1



Նկ. 2.

մագիծը հավասար է $3^{1/2} \times 2$, այսինք՝ 7 մետր է, իսկ շրջանագիծը հավասար է $7 \times 3^{1/7}$, այսինքն՝ 22 մետրի: Շրջանի մակերեսը ստանալու համար՝ շառավիղի յերկարությունը պետք է բազմապատկել շառավիղով և ստացածը բազմապատկել $3^{1/7}$ (ավելի ճշգու՝ 3,14): Որինակ՝ յեթե շառավիղի յերկարությունը հավասար է 7-ամ-ի, ապա շրջանի մակերեսը հավասար կլինի:

$$(7 \times 7) \times 3^{1/7} = 49 \times 3^{1/7} = 154 \text{ քառ. սմ.}$$

Շրջանագիծն առանց կարկինի յել կարկինի յե գծել (լարի, մեխի և մատիտի միջոցով): Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր լարի յերկարությունը պետք է հավասար լինի շառավիղին:

ԱՆԿՑՈՒՆԵՐԻ ՅԵՎ ՄՐԱՆՑ ԶԱՓՈՒՄԸ


Յերկու ուղիղները, աճ և շճ, վորոնք մի կետում (նկ. 3) հատվում են իրար հետ, կազմում են չորս անկյուններ՝ 1, 2, 3 և 4:

Այդ ուղիղների հատման կետը բոլոր անկյունների գագարն է հանդիսանում, իսկ ուղիղներն — անկյունների կողմերը: Այդպիսով, նկարի վրա օ տառով նշանակված կետը չորս անկյունների լոնդանուր գագաթն է, իսկ աօ, օօ, օօ և շօ — նրանց կողմերը:


Անկյունը նշանակելիս՝ յերեք տառով են գրում, մեկը գագաթինը, յերկուսը՝ կողմերինը: Գագաթի տառը գրում են մեջ մեջտեղում: Հետեւ վապես աօ նշանակում է I անկյուն, ծօ8 — II և այլն:

Յեթե անկյան մի կողմը գագաթի շուրջը պատելով՝ մոտեցնենք յերկրորդ կողմին, ապա անկյունը կփոքրանա։ Հակառակ կողմով պտը-տելիս, անկյունը կմեծանա։

Յեթե աօ կողմը պտտենք, աօ անկյունը հավասարվի կից աօ անկյանը, ապա այդպիսի անկյուններն ուղիղ ե կոչվում, իսկ նրանց կողմերը — ուղղահայաց (նկ. 4):



Նկ. 3.



Նկ. 4


Ուղիղ անկյունից մեծ անկյունը բութ անկյուն է կոչվում (նկ. 5), իսկ ուղիղից փոքրը — սուր (նկ. 6):

Վերցնենք կարկինը, նրա վոտը դնենք անկյունների գագաթի վրա և շրջանագիծ գծենք։ Շրջանագիծի մասերն անկյունների կողմերի մեջ (նկ. 7) տարբեր են լինում (որինակ՝ աօ փոքրը ե ծ8 գծից)։ Ան-կյուններն ել տարբեր են (անկյուն աօ փոքր ե լինում ծօթ-ից)։

Յեթե մենք շրջանագիծը բաժանենք 360 հավասար մասերի, ապա ամեն մի մասը կոչչվի ասիմոն։



Նկ. 5.



Նկ. 6.


Նկ. 7.

Վերցնեք մի մասը և ծայրերը միացնենք կենտրոնի հետ։ Ստացած անկյունը կոչվում է մեկ ասիմոնի անկյուն։ Անկյունը կարող է ունենալ մեկ յերկու, տասը և այլն աստիճաններ։ Որինակ՝ 120 նշանակում ե «12 աստիճանի» անկյուն։ Աօ գիծը, վոր թեք անկյուն և կազմում աօ գիծ հետ, կոչվում է թիվ գիծ (նկ. 8):


Այդպիսի ուղիղի թեքությունը չափվում է ճամանակակից կորքան այս անկյունը մեծ ե, այնքան աօ գիծը թեքությունը մեծ ե։ Յենթագրենք, վոր ա կետից դցված ե շրջանագիծը։ Այն ժամանակ թեքության մեծությունը կարելի յե չափել այն աստիճանների թվով, վո-

* Շրջանագիծի մասերը կոչվում են աղիղներ և նշանակվում են այսպիսի նշա-

րոնք պարունակվում են անկյան կողմերի միջև գտնվող արջանագիծի մեջ։ Որինակ՝ յեթե այդ արջանագիծի մասը պարունակում է 25°, ապա ասում են, վոր անկյունը հավասար է 25°, կամ աօ հակված է հորի-զոնին 25° անկյունով։




Նկ. 8




Նկ. 9.

Յեթե մի ձեռքում պահենք թոկի ծայրը, իսկ նրա մյուս ծայրից կախենք փոքր ծանրություն, թոկը կձգվի։ Թոկն ընդունում է մի ուղղություն, վոր կոչվում է ուղղաձիգ ուղղություն։



Յեթե օ կետով այնպիսի մի գիծ տանենք, վոր աօ և աօ ան-կյուններն ուղիղ անկյուններ դառնան, ապա ծ8 գիծը հորիզոնական կլինի։

Իսկ յեթե յերկու գծերն ամբողջ յերկարությամբ վոչ իրար մոտենան, վոչ ել հեռանան, ապա ասում են, վոր այդ գծերն իրար զու-գահեն են։ Որինակ՝



ՉԵՎԵՐԻ ՅԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ


Թե ինչպիսի ձևեր ու մարմիններ են լինում, այդ յերկում ե հե-տեւալից։

I. Զ Ե Վ Ե Ր


Ա.) Անկանոն ձևեր, այսինքն՝ անհավասար կողմերով ձևեր (նկ. 10 — 13)։



Նկ. 10. Յեռանկյուն



Նկ. 11. Քառ-անկյուն




Նկ. 12. Հինգ-անկյուն



Նկ. 13. Վեց-անկյուն

Բ) Կանոնավոր ձևերը, այսինքն՝ հավասար կողմեր և հավասար ան-
կյուններ ունեցող ձևերն են (նկ. 14—18):



Նկ. 14. Կանո-
նոնավոր յե-
ռանձնյութ
Նկ. 15. Քառու-
կաւութ (կազմի
բը հավասար
անձնութեան
ուղիղ)


Նկ. 16. Կա-
նոնավոր
հինգանիյուն

Նկ. 17. Կա-
նոնավոր վե-
ցանիյուն

Նկ. 18. Կանոնա-
վոր ութանիյուն

Նկ. 14. Կանո- Նկ. 15. Քառա- Նկ. 16. Կա- Նկ. 17. Կա- Նկ. 18. Կանոնա-
նոնավոր յե- կուտի (կողմե- նոնավոր նոնավոր վե- վար ութանկյուն
ռանկյուն քը հավասարեն, հինգանկյուն ցանկյուն
անկյուններն
ուղիղ)

Դ) Գործնականում հաճախ պատահող ձեռքբն են (նկ. 19—21):



Նկ. 19. Ռւղդանկյան (քո-
լոր անկյուններն ուղիղ են,
կազմերը հավասար են)

Նկ. 20. Սեղանանման (հիմքե- Նկ. 21. Շրջան
որ գուտանելու հետ)

II. Յերկրաչափական մարմիններ (նկ. 22—28)

Յերբ մարմնի մասին խոսելիս մենք նկատի ունենք բացառապես նրա ձեր, ապա այդ մարմինը կոչվում է լերկրաչափական մարմին:




Նկ. 22. Խորանարդ Նկ. 23. Գը-
(բոլոր վեց հիստերը լան (հիմքե-
ժառակուսիթեր են) քում՝ հավա-
սար շքչան.
ներ)

Նկ. 24. Կոն (հիմքում շրջան)	Նկ. 25. Հատու կոն (հիմքերու անհավասար շրջաններ)
-----------------------------------	--

10

Մարմնի ձևը նկարից պետք է հասկացվի: Վորոշ դեպքում նկարը լը-
րացվում է մարմնի առանձնահատկության ցուցմունքով (լրիկ բնորոշ-
չությը չի տրվում):



՚Կ. 26. Պրիզմաներ (հիմ-
ֆերում՝ յեռանկյուններ
ֆառանկյուններ յևլ այ-
բազմանկյուններ)

Նկ. 27. Գունը

Նկ. 28. Բուրգ (հիմ-
ֆերում՝ յեռանիյուն
յիշլ այլ բազմաթիվյուն-
ներ)

Q u h b r h b r b w s w g n t g g b r p

Ա	Աշանակում	և	մետր
ԱՄ	»	»	սանտիմետր
ԱԲ	»	»	միլիմետր
ԿԻ	»	»	կիլոմետր
ՏԱՐ. Ա	»	»	քառակուսի մետր
ՏԱՐ. ԱՄ	»	»	քառակուսի սանտիմետր
ԽԱՐ. Ա	»	»	խորանարդ մետր
Գ	»	»	գրամ
ԿԳ	»	»	կիլոգրամ
Ո.	»	»	ոտոնիմ (մատնաչափ):



ՆԵՐԱԾՈՒՅԹ ՅՈՒՆԻ

Վիլարանի (мотальное отделение) №ենաների վրա աշխատելիս, բանվորը գործ և ունենում պատրաստի մանածի հետ։ Ուստի այս գրքում մենք գլխավոր ուշադրությունը կդարձնենք մանածի և այն մերենաների վրա, մորոնցով մանածը վիլակվում է։

Սկզբնական նյութը, վորից մենք մանած ենք ստանում, հանդիսանում են բույսերի և կենդանիների թելիկները։ Նայած թելիկների հատկություններին և առանձնահատկություններին, մանածը կամ գործվածքն ունենում է այս կամ այն բնորոշ նշանները։ Այդ նշաններով մենք հեշտությամբ աչքով կամ շղափելով տարբերում ենք բորի մանածը՝ բամբակի մանածից, վուշինը՝ մետաքսից և այլն։

Թելիկները, կամ, ինչպես ասում են, թելիկավոր նյութերը հետեւ դաշտ խմբերի ի են բաժանվում.

1. Բաւսարանական ծագում ունեցող թելիկներ: Սրանց թվին են պատկանում բամբակի, վուշի, կանեփի, ջութի, քյանդիրի, կենափի, ռամիի և տորֆի մանրաթելերը:

2. Կենդանական ծագում ունեցող քելիկներ են—բուրդը, միտաքսը և արհեստական բռւրդը:


3. Արհեստական թելանման նյութեր են—արհեստական մետաքսը:

4. Համեմային ծագում ունեցող թեկիքներ—ազգեստը*):

Սի քանի խոսք ասենք այս թելրկսորի սամրա, գլուխք առաջ
շատ են գործածվում տեքստիկ գործարաններում։ Այդ թելիկների
թվին ե պատկանում առաջին հերթին բամբակը։


Բամբակին ստացվում ե բամբակի բույս կոչվող հատուկ բույսից: Բամբակի բույսի սերմերը պատված են սպիտակ և գեղնավուն մազեկ-ներով: Հենց այդ մազեկները բամբակի թելիկներն են: Յեթե բամ-բակի թելիկը միկրոսկոպով (մանրազիտակով), շատ մանր մարմինները չափազանց մեծացնող գործիքով) զննենք, կտեսնենք, վոր այդ թելիկը

տափակացրած, վոլորած խողովակի ձև ունի, վորի մի ծայրը սուր և (նկ. 29): Բամբակի թելիկի յերկարությունը լինում է 6-ից մինչև 50 միլիմետր: Նայած թելիկի յերկարությանը, բամբակը լինում է՝ յեր-




July, 29.

Բամբակը բուսական ծագում ունեցող մյուս թելիկներից՝ վուշից, կանեփից, ջուրից, լյանդիրից, կենաֆից, ռամիից նրանով և տարբեր վում, վոր նա վոչ թե ցողունից և ստացվում, այլ սերմերից։ Ցողունից ստացվող բուլոր թելիկները կոչվում են լուբային թելիկներ։ Լուբային թելիկները ցողունի մեջ խրձիկներով են զասավորված և կեղեի յիս թելիկները ցողունի մեջ խրձիկներով են զասավորված և կեղեի



July, 30,



卷 31.

միջոցով կպած են բնափայտին, այլև իրար հետ Ուստի ցողունից թելիկներ ստանարու համար, ցողունները նախ թրջում են, հետո չորսացնում, ճմլում և գզում են. Մանվածքում գործ ածվող լուբային թելիկը բավականաչափ յերկար է. Որինակ՝ վուշի թելիկը 650-ից

*) Առաջականություն կազմում ե առարկայի ընդունակությունը՝ ձգվելուց հետո նորից գերականգներու իր սկզբնական ձևը: Ընետինան, որինակ առաջական է:

մինչև 1250 մմ յերկարություն ե ունենում: Այդ յերկար թելիկը (սեխի թիկական թելիկը) բաղկացած ե մի քանի տարրական թելիկներից: Այդ յերկում ե 2 նկարից, վորտեղ վուշի թելիկը խիստ մեծացրած է պատկերացված, այլև նրա խոտանակ տրամատ, այսինքն՝ թելիկի տեսքը լայնքով կարած: Վուշի թելիկն անհամեմատ ավելի դիմացկուն ե բամբակի թելիկից: Այս պատճառով ել վուշի գործվածքներն ավելի դիմացկուն են լինում: Վուշի տարրական թելիկը դիմանում է 10-ից մինչև 15 քր ծանրության: Վուշի թելիկի առաձգականությունն այնքան մեծ չե:

Կենդանական ծագում ունեցող թելիկներից ամենատարածվածը բուրդն ե: Բուրդ անվանում ենք այն մազերը, վորոնցով ծածկված են կենդանիների, որինակ՝ վոչխարի, ուղտի, այծի և ուրիշների մարմինները: Չանազան կենդանիների բուրդն իր հատկություններով տարբեր է լինում: Նույնիսկ միևնույն կենդանու, բայց նրա մարմինը զանազան մասերում բուսած բուրդը լինում է յերկար ու կարճ, հաստ ու բարակ, կոշտ ու փափուկ: Բրդի վերեկի շերտն ավելի յերկար ու կոպիտ ե, իսկ դվթիկը կամ աղվամազն ավելի յերկար, փափուկ և կարճ ե: Բրդի մազը խոշորացույցով զննելիս յերկում ե, վոր վերեկի շերտը բերուկներով (փարաներով) ե ծածկված (նկ. 31), վորոնք մի կողմից պոկված են: Յեթե վերցնենք թաղիքե վորեն իր, որինակ՝ կաճյակներ (ՅԱԼԵՒԿԱ), թաղիք, մահուցե թաղքած գործվածքներ և այլն, ապա կտեսնենք, վոր նրանք բոլորն ել բրդից են և վոչ թե վուշի կամ բամբակի թելիկներից: Այդ բացատրվում ե նրանով, վոր շնորհիվ թեփուկներով պատած մակերսուի՝ բուրդն ընդունակ է կրպչելու, բաղելու:

Թաղքման դեպքում բեփուկներն իրար մեջ են մտնում, միապաղադմասսա կազմելով: Ոսք—մազի յերկարությունը լինում է մինչև 300 մմ, իսկ աղվամազը կարճ ե՝ 15-ից մինչև 80 մմ: Բրդի մազը վալորվելու հատկություն ունի (ինչպես մարդու խուճում, զանգուր մազերը): Նորմալ վոլորնության բուրդը բանեցնում են բրդե գործվածքների մասած պատրաստելու համար, իսկ քիչ վոլորունը՝ կամվոլ մանածի համար, չժաղքվող գործվածքի համար (որինակ՝ քիշմիրի և ուրիշ գործվածքների համար): Վորքան վոլորնությունը մեծ էինի, այնքան բուրդը կյենթարկվի թաղքման: Բրդի մազը կարող է դիմանալ 3-ից մինչև 46 քր ծանրության: Բրդի առաձգականությունը շատ մեծ է, բուրդը կարող է ձգվել իր յերկարության մոտ 30—40 տոկոսի չափ:

Դրանով ե բացատրվում, վոր բրդի գործվածքները չեն ճմլվում: Արհեստական կոչվում ե այն բուրդը, վոր վերամշակման ճանապարհով ստացվում է հին բրդե կամ կիսաբրդե բուրջերից և մանված-

քային ու գործվածքային գործարանների այլ թափթփուկներից, որի նաև՝ փրթած, խճալած թելերից, թելի կտորտանքից և այլն:

Մետաքսը միակ նյութն ե, վոր պատրաստի թել և տալիս: Մետաքսն ստացվում է շերամի վորդից, վոր վորոշ հասակում իր շուրջն առանձին պատյան ե գործում, վորը կոկոն, կամ բաժն և կոչվում: Իր շուրջը բոժոժ հինելիս, շերամի վորդը ներքեւի շրթունքի տակի յերկու խողովակներից գուրս ե թողնում մեկական մետաքսս թել: Այդ թելերը դուրս գալուց հետո իրար են կպչում: Այդպիսի մետաքսի թելը չափանց բարակ է: Ուստի բոժոժը յետ տալու ժամանակ սովորաբար իրար են միացնում մի քանի բոժոժների թելեր: Մետաքսի թելի հաստությունն սկզբում և վերջում տարրեր ե լինում: Մետաքսի թելի յերկարությունը բոժոժի մեջ լինում է 1000 մ և ավելի, սակայն ամբողջ թելը վելակելը (յետ տալը) անհարին ե, վորովհետև սկզբում և վերջում բոժոժի թելը շատ է խճալած: Վելակելուց հետո մնացորդները վելացած բոժոժների հետ միասին վերամշակմոն են յենթարկվում, այսինքն՝ առաջ քրքրում են և հետո մանում: Այդպիսի մետաքսի թելը կոչվում է շապ կամ բուրդեառա:

Արհեստական մետաքսը գասվում է արհեստական թելային նյութերի շարքը: Արհեստական մետաքսը զանազան ձևերով է մշակվում: Մեզանում, ԽՀՀՄ-ում, այժմ աշխատազ Մըտիշինի գործարանում պատրաստում են վիսկոզայից (այսինքն՝ մածուցիկ հատուկ մասսայից), այսպիս կոչվող վիսկոզային յեղանակով:

Ա Ռ Ա Զ Ի Ն Բ Ա Ժ Ի Ն

Լ Մ Ա Ն Ա Ծ

1. ՄԸՆԵՑԻ ՍՅՈՐԱԲԱԺԵՆՈՒՄԸ

Մանած ասում ենք այն թելերին, վորոնք ստացվում են վորոնք տեսակի թելիկ մանելուց: Մանածն իր արտաքին տեսքով, նյութով, նպատակով, վորորքով, ամրությամբ և այլ հատկություններով շատ տարբեր են լինում:

Հայ նյուրի՝ մանածը բաժանվում է—բամբակի, վուշի, բրդի, մետաքսի, կանեփի և այլ տեսակների: Որինակ՝ մետաքսե թելը կարող է լինել բնական մետաքսի, արհեստական մետաքսի, բուրդեսուա (շատ կամ մանած մետաքս) և այլն:

Բրդի մանածը մազի յերկարությամբ, վորորնությամբ և պատրաստվելու ձևով նույնպես բաժանվում է ապարատային և կամին մանածների:

Յերբեմն թելերը մանաւմ են մի հանի բելիկավոր նյուրերի խառնուրդներից, որինակ՝ բրդի և բամբակի, մետաքսի և բրդի և այլն:


Մենք արդեն ասացինք, վոր վոչ միայն տարբեր թելիկավոր նյուրերի մանրաթելերը տարբեր յերկարության են լինում, այլ յեվ նույն բելիկավոր նյուրի թելիկներն ել իրենց յերկարությամբ տարբեր են:

Ուստի, ըստ հումույթի տեսակի, վորից պատրաստված և մանածը, նա բաժանվում է յերկարամազ, միջակ մազավոր յեվ կարհամազ նյուրերի մանածների:

Բացի գրանից, մանածը պատրաստում են ուգարներից, այսինքն՝ մանվածքային, նույնպես և գործվածքային արտադրության թափաթփուկներից: Այդպիսի մանածը կոչվում է ուգարային մանած: Ամենից հաճախ մանածը պատրաստում են թերամշակ նյուրերից: Մի քանի գեղքերում մանվածքային նյութը գեռ մանելուց առաջ են ներկում: Յեթե մանելու ժամանակ ներկած նյութի մասը չներկված է

հետ խառնեն, մանածը խայտաբղետ գույն կունենա և մելանժային կամ խառնուրդային մանած կկոչվի:

Գործվածքը նպատակի տեսակետից, մանածը բաժանվում է՝ իների յիշ միջնարելի: Հենքի մանածը ջուրհակի դաղդյանի վրա ձգված վիճակում և գտնվում: Բացի դրանից, հենքի թելերն անցնելով սպառարքի և վոստայնասանրի միջով, նրանց հետ շփվում են: Ուստի հենքի թելերը պետք է բավականաչափ դիմացկուն լինեն, ավելի



Նկ. 32.

Նկ. 33.

դիմացկուն, քան միջնաթելի մանածը: Միջնաթելն, ընդհակառակը, պետք է ավելի փափուկ և խոսվար լինի: Այդ հանդամանքը գործվածքին տալիս է լավ փուլելու ու լավորակության հատկություն: Վաճելու յեղանակի տեսակետից մանածը բաժանվում է վատերի յիշ վիճակների մանածների: Վատերի մանածը մյուլի մանածի համեմատ սովորվուի մանածների: Վատերի մանածը մյուլի մանածի համեմատ սովորաբար ավելի յեւ վորորած, ուստի և ավելի դիմացկուն և մյուլի մանածից:

Մանածի մի շարք սորոբաժանումներ կարելի յեւ անել ըստ վոլորգի յեղանակների՝ աջ վորորքի (Նկ. 32 Ա), ձախ վորորքի (Նկ. 32 Բ), խիստ թույլ վորորած, ձեավոր (Նկ. 33) և այլն:

2. ՄԸՆԵՑԻ ՎՈԼՈՐՔԸ

Ինչպես ասացինք, մանածի վորորքը կարող է աջ և ձախ լինել: Թելի վորորքի տեսակը վորոշելու համտը, պետք է թելը մի քիչ յետ վոլորել և հետևել փաթերի ուղղությանը: Յեթե փաթերն անցնում են վոլորել և հետևել փաթերի ուղղությանը: Յեթե փաթերն անցնում են վոր թելը աջից—ներքեցից՝ վերից—դեպի ձախ (Նկ. 32 Ա), ասում են, վոր թելը աջից վոլորգ ունի: Իսկ յեթե փաթերն անցնում են ձախից ներքեցից՝ դեպի աջ՝ վերե (Նկ. 32 Բ), այդ արդեն կիրանի ձախ վոլորգի թելը:

Նայած թե մանածն ինչ նպատակի յեւ ծառայում, նրան ավելի կամ պակաս վոլորք են տալիս: Հենքի մանածից ավելի շատ դիմացկուն նություն է պահանջվում: Ուստի հենքի մանածը ավելի շատ են վոլորում, քան միջնաթելի մանածը: Չանազան թելերի վոլորքներն են

տարբեր են լինում. բարակ մանածը շատ են վոլորում, քան հաստ մանածը: Վոլորքի աստիճան կոչվում է վոլորքերի կամ փարերի հանակը, վոր ընկնում ե թելի յերկարության 1 ամ-ին: Ասում են՝ վոլորքը մեկ ամ-ի վրա 20-ի: Այդ նշանակում ե, վոր թելի 1 ամ յերկարության ընկնում ե 20 վոլորք:

Տարբերում են պարզ (յեղակի, մետակ) մանածը վոլորածից: Պարզ, մետակ մանած անվանում են գործարանում թելիկներից պատրաստած թելը: Այդպիսի մանածը նշանակում են պարզ համարով, որին նաև՝ № 32, № 16 և այլն: Իսկ յեթե մի քանի առանձին թելեր իրար հետ վոլորեն, ապա կստանանք, այսպես կոչվող՝ վոլորած թել: Թելը կարելի յել վոլորել 2, 3 և ավելի յեղակի թելերից: Վոլորած մանածը կարելի յեղակում են կոտորակային համարով, որինակ՝ № 32/2, № 15/3: Ուստի և ասում են, վոր թելը վոլորած է 2,3 թելերից: Իրար հետ վոլորում են նույն թելիկի և նույն գույնի թելեր, նույնպես և տարբերում են նույն թելիկի և նույն գույնի թելեր: Տարբեր գույնի թելերից վոլորած թելը մուլին յել կոչվում:

Զեխավոր մանածն ստացվում է վոլորող վատերի վրա տարբեր յեղանակներով՝ 1) քիչ վոլորած թելը սովորական վոլորած թելի հետ վորելով (նկ. 33 A), 2) տարբեր լարվածք տալով վոլորվող թելերին, վորի շնորհիվ թելերից մեկը հանդույցներ կամ մերք և կազմում (նկ. 33 B):

3. ՄԱՆԱԾԻ ԱՐԹՈՒԹՅՈՒՆԻ

Մանածի ամրությունը նրա կարեռագույն հատկություններից մեկն ե: Մանածի ամրությունն ամենից առաջ կախված է նրա հաստությունից: Հաստ մանածը միշտ պետք ամուր և նույն տեսակի բարակ մանածից: Բացի գրանից, մանածի ամրությունը կախված է այն թելիկների հատկություններից, վորոնցից նա վոլորված ե, նրանց յերկարությունից, նրբությունից, ամրությունից, միատեսակությունից և վոլորնությունից: Վերջապես մանածի ամրությունը կախված է նաև այն բանից, թե վորչափ ուժեղ և վոլորած թելը:

Մանածի ամրությունը վորոշվում է նրա այն հատկությամբ, վոր առանց կտրվելու նա դիմանում է վորոշ ծանրության: Որինակ, 500 մմ յերկարությամբ թելն առանց կտրվելու դիմանում է մինչև 200 գ ծանրության: Հետևողապես այդ թելի ամրությունը հավասար է 200 գ-ի:

Ուրեմն թելի ամրությունը չափվում է ծանրության միավորներով: Մանածի ամեն մի համարը պետք է ունենա վորոշ ամրություն, լավագակություն, այսինքն՝ առանց կտրվելու դիմանա վորոշ ծանրության: Ուստի պատրաստած մանածը գործարանում փորձում են

ամրության տեսակետից: Փորձում են կամ մի թելի, կամ ամբողջ պասմանը (120 յարդի) ամրությունը: Վորպեսզի հեշտ վորոշվի, թե պատմական (լուսական) մանածի (միջակ համարի և վորակի) ամրությունը արդյոք փորձվող մանածի (միջակ համարի և վորակի) ամրությունը բավարար է, թե վոչ, կարելի յել դեկավարվել հետեւյալ նախապես հաշված ալյուսակով:

ԱՄՐՈՒԹՅՈՒՆ Ի ԱՄԵԼԻԱՏԵԼՈՒ ԱՊՅՈՒՍԱԿ

Հոս Դրեկերի, բարերակի մանածի համար	1920 անգլ. ֆունտ
անգլիական համարակալման	1737 » »
(լուս հին համարակալման)	4590 » »
Վուշ, կանեփաթել	1180 » »
Բուրգ, ուստական համարակալման	1360 » »
» մետրական »	0,4 » »
Մետաքս (հենք և միջնաթել)	1620 » »
Մետաքս (բուրգեսուա) անգլիական	
համարակալման	
Արեւստական մետաքս՝ անգլիական	
համարակալման	2000 » »

Ինչպես պետք է ոգտվել ալյուսակից: Մանածի ամրությունը վորոշելու համար աղյուսակում բերած թվերը պետք է բաժանել մանածի համապատասխան համարը վրա: Մետաքսը բացառություն է կազմում: Մետաքսի ամրությունը վորոշելիս, աղյուսակի համապատասխան թիվը բազմապատկում են մանածի համարով: Բերենք մի որինակ: Յենթագրենք, թե գործարանում ստացվել է № 30 բամբակի մանած: Այդ մանածի փորձարկման ժամանակ ստացել են, վոր պասմայի ամրությունը հավասար է 55 անգլիական ֆոնտի: Մենք չգիտենք, այդ ամրությունը բավարար է, թե՞ վոչ: Ուստի ստուգման նպատակով մեր ստացած արդյունքը համեմատենք աղյուսակի հետ: Բամբակի մանածին համապատասխանող աղյուսակի մանածի մանածը մանածին համարի № 30-ի վրա: Ստացենք 1920 թիվը բաժանում ենք մեր մանածի համարի № 30-ի վրա: Ֆոնտի: Հետևապես, № 30 բամբակի մանածի ամրությունը պետք է լինի 64 անգլիական ֆունտ, իսկ մեր մանածինը՝ ընդամենը 55 անգլ. ֆունտ ե, հետևապես մանածի ամրությունն անբավարար է:

4. ՄԱՆԱԾԻ ԽՈՆԿԱԹՅՈՒՆԻ


Թե թելիկները և թե մանածը խոնավամես են, այսինքն՝ ընդունակ են խոնավությունը ներս ծծելու: Տարբեր թելիկների խոնավամիտությունը տարբեր է լինում: Այսպես, որինակ՝ բուրդը կարող է ջուր ծծել իր քաշի մոտ 40% չափ: Այդ նշանակում ե, վոր 100 կգ բուրդը կարող է 40 կգ ջուր ծծել, այսինքն՝ 140 կգ-ում 100 կգ բուրդ և 40 կգ ջուր:

Վորպեսզի գնորդը չտուժի, ջրի համար փող չվճարի, ամեն մի թելիկավոր նյութի, հետևապես և մանածի համար սահմանված ե խոնավության տոկոս—խոնավության նորմա:

Խոնավության նորմաների աղյուսակը

Բամբակի մանածի համար	8 1/2 0/0
Մետաքսի և մանածի »	11 »
Վուշի և կանեփի մանածի համար	12 »
Զութի մանածի »	13 3/4 »
Ապարատի բրդի մանածի համար	17 »
Բրդի կամվոլ մանածի »	18 »

Գործվածքային գործարանը մանվածքային գործարանից մանած ստանալիս, գիտե, թե տված մանածի համար վորքան պիտի լինի խոն է վությունը: Ուստի ստացած մանածը գործարանում փորձում են:



Կ. 34

Յեթե փորձելիս յերեսում ե, վոր խոնավությունը նորմայից բարձր ե, ապա ի հաշիվ մանվածքային գործարանի համապատասխան գեղջ են անում: Մյուս կողմից, յեթե մանածի խոնավությունը պակաս ե, այդ ել ցանկալի չե արտադրության համար: Խոնավ վիճակում բաժ-

բակը, վուշը և այլ թելիկներ անհամեմատ ավելի դիմացկուն են լինում: Ուստի և մանվածքային ու գործվածքային գործարաններում խոնավացում են տարեվում, այսինքն՝ հատուկ խոնավացնող ապարատներ են դնում: Տամկիչները (խոնավացնող ապարատ) շենքի ողը վորոշ չափով խոնավացնում են, այդպիսով խոնավացնում են թելիկներն ու մանածները: Բացի գրանից, բամբակի մի քանի գործվածքային գործարանների մանածի դիմացկունությունն ուժեղացնելու համար, մանածը խոնավացնում են հատուկ տամկիչ ակութեալում (կամերա): Այդ նպատակով մանածը զետեղում են փակ ակութեալում (պառկեցրած պահամանի (ճակ) ձև ունեցող), վորտեղ նաև յենթարկ: Վում ե գորորշու աղղեցության: Յեղբ. Ծերդեկերի սիստեմի այդպիսի հարմարանքներից մեկը կարելի յե տեսնել 34-րդ նկարում:

5. ԻՆՉՊԵՍ ՊԵՏ Ե ՏԵՐԲԵՐԵԼ ԶԵՆԵԶԵՆ ԹԵԼԻԿԱՎԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՆԵՑՆԵՐԸ

Դրա համար կան շատ պարզ միջոցներ: Բուսական ծագում ունեցող թելիկներից պատրաստած մանածը կենդանական ծագում ունեցող թելիկների մանածից տարբերելու համար սպառաբար դիմում են ալրման լիցողին: Բուսական ծագում ունեցող թելիկներից (բամբակի, վուշի, կանեփի) պատրաստած մանածը շատ շուտ և այրվում և այրվելուց հետո փոշենման մոխիք եղանակում: Այդ մոխիքն իսկույն փուլ գալուվ թափվում ե: Ընդհակառակը, կենդանական ծագում ունեցող թելիկների մանածը վատ և այրվում և այրվելուց հետո յել գոյանում և պինդ ստած կաթիլ — գնդիկ, վորը գժվարությամբ և փոշականում: Այրվելիս, կենդանական ծագում ունեցող թելիկներն այրված յեղջուրի հոտ են ունենում: Փոքր ինչ գժվար և վուշի թելը բամբակի թելից զանազանելը: Դրա համար հարկադրությունը կ բեն այնպես լիս վորորել, վար հնարավոր լինի առանձին թելիկները հանելու: Յեթե թելիկների յերկարությունը և ամրությունը մեծ ե — այդ վուշ ե, իսկ յեթե թելիկները կարճ են, ամենաշատը 4—5 սմ (սովորաբար ավելի կարճ են) — այդ բամբակի մանածին փայլ տալու համար, նրան մշակում են կառատիկով — յենթարկում են մերսերիքացիալի (համառատասած մերսերում են): Դրանից հետո նա արտաքին տեսքով նմանվում ե բուրդեսուա մանածին: Մի մանածը մյուսից կարելի յե տարբերել թելիկի յերկարությամբ: Բուրդեսուայի թելիկներն ավելի յերկար են (6—15 սմ) և բավականաշափ բարակ: Բացի գրանից, թելիկը կարելի յե վորոշել և այրման միջոցով, բուրդեսուան այրվում է կենդանական ծագում ունեցող թելիկի նման:

Իսկական կամ բնական մետաքսը հեշտ ե տարբերել ուրիշ մանածից իր նրբությամբ, փայտով և ամրությամբ:

Իսկական մետաքսն ել արհեստականից կարելի յե տարբերել այլաման միջոցով։ Արհեստական մետաքսն այլպում և բուսական ծագում ունեցող մանրաթելի նման։ Բացի դրանից, արհեստական մետաքսն ավելի կոշտ և և արտաքինով ավելի փայլուն ելինում։ Արհեստական մետաքսի ամրությունը ջրով թրչելիս բավականաչափ նվազում է, նամանավանդ տաք ջրով թրչելիս։ Այսպես, յեթե վերցնենք այդ մետաքսի թելը, լորձունքով թրչենք և ձգենք, նա կքայքայվի։ Այդպիսի բան չի պատճի իսկական մետաքսի հետ։

II. ՄԱՆԱԾԻ ՀԱՄԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Ի՞նչ է ՑՈՒՅՑ ՏԵԼԻ ՄԵՆԱԺԻ ՀԱՄԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԸ

Տեկստի գործարանում աշխատող բոլոր բանվորներին լավ հայտնի յե, վոր մանածը, բացի ըստ տեսակների բաժանվելուց, բաժանվում և նաև ըստ համարների։ Համարը նույն երեխի հաստությունը։ Վորքան թելը հաստ, այնքան նրա համարը ցածր է, իսկ ծանրությունն՝ ավելի։ Հետևապես, յեթե հավասար յերկարության № 1 և № 10 թելեր վերցնենք, № 10 թելը տասն անգամ պակաս կլցափ № 1 թելից։ Ընդհակառակը, յեթե վերցնենք մեկական կիրոգրամ № 1 և № 10 թելերից, ըստ յերկարության № 10 թելի մեկ կիրոգրամը տասն անգամ յերկար կլինի № 1-ի մեկ կիրոգրամ թելից։ Սրանից կարելի յե յեղբացնել, վոր մանածի համարը ցույց ե տալիս բելի յերկարության յել բուշի հարաբերությունը, այսինքն՝ յեթե թելի յերկարությունը բաժանենք նրա համարի վրա, կստացվի մանածի համարը։

2. Ի՞նչո՞ւ ՀԱՄԱՐ Է ՀԱՐԿԱՎՈՐ ՄԵՆԱԺԻ ՀԱՄԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԸ

Կյանքում գործածվող զանազան առարկաներ ունեն իրենց համարագրությունը։ Համարագրումը հեշտացնում է ընտրությունը, գաղափար և տալիք տված առարկայի չափերի, հաստության, յերբեմն և նրա տեսակի մասին։

Յերբ խանութ ես մտնում կոշիկ գնելու, վորոշ համարի յես պահանջում, վարովհետև գիտես, վոր նա պետք ե համապատասխանի վոտիդ։ Նույնը և մանածի վերաբերյալ Գործվածքների վորոշ տեսակներ պետք ե պատրաստվեն վորոշ համարի մանածներից։ Ուստի գործվածքային գործարանը մշակելիք ապրանքների ասորտիմենտը*), սահմանելիս, մանվածքային գործարանին նախորոք կարող ե պատվիրել իրեն հարկավոր մանածի համարները։

*) Ասորտիմենտ — նշանակում է՝ միանման, բայց տարբեր տեսակների ապրանքի ժողովածու («չեշիդ»)։

3. ՄԵՆԱԺԻ ՀԱՄԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՍԻՍՏԵՄՆԵՐԸ

Մանաժի համարագրման մի քանի սխատեմներ կան։ ԽՍՀՄ-ում այժմ մացվում է մանածի մետրական համարագրում։ Սակայն թե մեղնում և թե արտասահմանում դեռ պահպանվել են և կիրառվում են նախկին համարագրումները։ Այսպես՝ բամբակի մանածը գեռ մինչև այժմ ել համարագրվում ե անզիփական համարագրուրյամբ, ապարատային բրդի մանածը՝ ռուսական համարագրուրյամբ, մետաքսի համար հատուկ մանածին և այլն։ Այժմ ուսումնասիրենք ամեն մի համարագրումն առանձին-առանձին։

Մետրական համարագրումով առաջին համարի մանածը կոչվում է այն մանածը, վորի 1000 մետր կըուում ե մեկ կգ (1000 գ)։ Քննենք այդ որինակով։ Վերցնենք կշեռքը։ Մի նժարի վրա դնենք 1 կգ, իսկ մյուսի վրա՝ 1000 մ յերկարության կամը։ Յեթե կշեռքը հավասարաշատվի, այդ նշանակում է, վոր 1000 մ յերկարությունն՝ ավելի։ Հետևապես, յեթե հավասար յերկարության № 1 և № 10 թելեր վերցնենք, № 10 թելը տասն անգամ պակաս կլցափ № 1 թելից։ Ընդհակառակը, յեթե վերցնենք մեկական կիրոգրամ № 1 և № 10 թելերից, ըստ յերկարության № 10 թելի մեկ կիրոգրամը տասն անգամ յերկար կլինի № 1-ի մեկ կիրոգրամ թելից։ Սրանից կարելի յե յեղբացնել, համարների համար նժարներից մեկի վրա գրել են մեկ կիրոգրամ, իսկ մյուսի վրա 1000 մետրանոց 12 կաժ, այսինքն՝ մեկ կիրոգրամ, իսկ մյուսի վրա 1000 մետրանոց 60 կաժը (60×840=50400 յարդի) կշռում է մեկ անգլիական ֆունտ, ուրեմն նշանակում է պատրակը (60×7=420 յարդ)։

Բամբակի մանածի անզիփական համարագրուրյան։— Անզիփական համարագրումով № 1 մանած կոչվում է այն մանածը, վորի 840 յարդը (768 մ) կըուում է մեկ անզլ։ Ֆունտ (106 մսխալ, 454 գ)։ Յեթե 840 յարդանոց 5 կաժը կշռում է մեկ անգլիական ֆունտ, ուրեմն նշանակում է, վոր մեր վերցըրած բամբակի մանածը № 5 է։ Յեթե 840 յարդանոց 60 կաժը (60×840=50400 յարդի) կշռում է մեկ անգլիական ֆունտ, ուրեմն մանածը № 60 է։ (Կաժը բաղկացած է 7 պասմայից, 120 յարդանոցը՝ 120×7=840 յարդ)։

Վուշի, կանեփի յել զուրի մանածի անզիփական համարագրությամբ կանեփի և ջութի մանածի № 1՝ անգլիական համարագրությամբ կոչվում է այն մանածը, վորի 300 յարդանոց (274 մ) կաժը կշռում է 1 անզլ. Փ. (454 գ)։ Յեթե 15 պասման (300 յարդանոց, այսինքն՝ 4500 յարդը) կշռում է 1 անզլ. Փ., այդ նշանակում է, վոր մենք անգլիական համարագրությամբ ունենք № 15 վուշե մանած։

Անզիփական համարագրուրյանը բրդի համար։ Անզիփական համարագրուրյամբ № 1 կոչվում է բրդի այն մանածը, վորի 560 յարդը (512 մ) կըուում է 1 անզլ. Փ.։ Յենթաղբենք, վոր 22400 յարդը կշռում է 1 անզլ. Փ.։ Մանաժի համարը վորոշելու համար 22400 յարդը պիտի բաժանել 560 յարդի վրա։ 22400 : 560 = 40։ Ուրեմն մանածի համարը 40 է, այսինքն՝ № 40 է։

Ռուսական համարագրություն: Համարակազման ռուսական սիստեմով № 1 մանած համարվում է այն վաճածը, վարի 1000 արշինը (712 մ) կը ըստ 1 ռուսական ֆունի (410 գ): Իսկ յեթե 1000 արշինանոց 7 կաժը, այսինքն՝ 7000 արշինը կը պահ մեկ ռուսական ֆունու, մենք ասում ենք, վոր տվյալ մանածը № 7 է, կամ, ինչպէս ընդունված է ռուսական համարագրման մեջ, յորկաժանց է:

Մետափի համարագրումը: Մետաքսի մանածը մյուսների համեմատ մի քիչ տարբեր ձևով է համարագրվում: Մետաքսի համարագրման ժամանակ կերցնում են վոչ թե քաշի և յերկարության հարաբերությունը, այլ ընդհակառակը, քաշի հարաբերությունը յերկարության նկատմամբ: Մետաքսի մանածի № տիպը արտահայտում է վորոշ յերկարության կաժի քաշը: Կաժի այդ քաշը ընդունված է արտահայտել առանձին միավորներով, դենյեներով (դենյեն՝ 0,0531 գ):

Ֆրանսիական սիստեմի համարագրությամբ՝ կաժի յերկարությունը վերցնում են 450 մ, իսկ նրա քաշը՝ դենյեներով, այսինքն՝ նրա քաշի դենյեների քանակը կլինի մանածի համարը: Սովորաբար այսպիսի են ասում՝ մետաքս 30 դենյե, 20 դենյե և այլն: Այդ նշաններում է, վոր 450 մետր յերկարության կաժը կը ուղարկ 30, 20 դենյե: Մետաքսի թելի հաստությունը նրա ամբողջ յերկարությամբ միատեսակ չի: Որինակ՝ նրա մի մասում և՛՛ համապատասխանում է 20 դենյեյի, մյուսում՝ 22-ի: Ուստի մետաքսի մանածը սովորաբար կոտորակով են նշանակում, որինակ՝ 20/22: Այդնշանակում է, վոր տված թելի №-ը տարածվում է 20-ից 22 դենյեյի միջև:

Բացի ֆրանսիական սիստեմից, գոյություն ունի նաև, այսպէս կոչվող, որինական (լեզալ) տիպ: Որինակ՝ տիտրի հիմքը կազմում է վոչ թե 450-նոց կաժը, այլ 450×20=9000 մ-ը: Դրա համապատասխան ել տիտրը վորոշվում է վոչ թե դենյեներով (0,0531 գ), այլ 20 անգամ մեծ թվով, այսինքն՝ գրամներով:

4. ՄԻ ՀԵՄՐԸԳԻՐՄԱՆ ՓՈԽԸՆՑՈՒՄԸ ՄՅՈՒՄ

Աշխատանքի ընթացքում շատ հաճախ գեպքեր են լինում, յերբ մանածի մի մասը մի սիստեմով է համարագրված, իսկ մյուսն՝ ուրիշ սիստեմով: Այդ շատ և շփոթում և դժվարացնում հաշիվները և քիչ փորձառություն ունեցող աշխատակիցը դժվարանում է համարը շուտ գտնել: Վորպեսզի հնարագորություն ստեղծվի համարները համեմատելիս համարը շուտ իմանալու և մի սիստեմի համարագրությունից հեշտությամբ մյուսին անցնելու, արգում է հետևյալ ոժանդակ աղյուսակը:

Ինչպես պես ե օգտվել աղյուսակից: Վերցնենք մի որինակ: Մետաքսան սիստեմով № 50 բամբակի մանած ունենք: Պետք է իմանալ նրա №-ն՝ անգլիական սիստեմով:

Տարբեր համարագրությունների փոխանցման աղյուսակը

Բ ա մ բ ա կ ի			Վ ո ւ շ ի		Բ ր դ ի		Շ ա պ պ բ ու ր դ ե ս ու ա մ ե տ ա ք ս		
Անդ կան	Բ ու ս տ ե մ կ ա ն	Մ ե տ ա ք ս	Անդ կան	Մ ե տ ա ք ս	Անդ կան	Բ ու ս տ ե մ կ ա ն	Մ ե տ ա ք ս	Անդ կան	Մ ե տ ա ք ս
1	0,975	1,693	2,8	1,693	1,5	0,975	1,693	1	1,693

Բամբակի մանածի համար աղյուսակում գրված է մետրական սիստեմի փոխանցման թիվը՝ 1,693, իսկ անգլիականի համար՝ 1: Մետրական սիստեմի համարը պիտի փոխել անգլիականի, ուստի մանածի համարը կը բաժանենք 1,693 և կը պահպատկենք 1-ով: Կստանանք 50×1
 $\frac{1}{1,693} = 30$: Հետևապես մետրական № 50-ը հավասար է անգլիական № 30-ին:

Այժմ յենթագրենք, վոր մենք ունենք անգլիական համարագրությամբ № 32 բրդե թել: Պետք է գտնել նրա համարը մետրական համարագրությամբ: Աղյուսակում անգլիական համարագրման փոխանցման թիվը է 1,5, իսկ մետրականը՝ 1,693: Վորպէս հետև համարն անգլիական համարագրումից պետք է փոխվի մետրականի, ուստի պետք է այդ բաժանել անգլիական համարագրման համապատասխանող թվի վրա և հետո բազմապատկել մետրական համարագրման համապատասխան փոխանցման թվով, այսինքն՝ $\frac{32 \times 1,693}{1,5} = 36$: Ուրեմն անգլիական № 32-ը հավասար է մետրական № 36-ին: Աղյուսակի միջոցով մի սիստեմի համարը մյուս սիստեմի համարի փոխելիս, պետք է №-ը բաժանել սվյալ համարագրման փոխանցման թվի վրա յեկ բազմապատկել սված №-ի համապատասխան համարագրության փոխանցման թվով:

5. ՎՈՂՈՐԸ ՄԵՆՃԻ ՀԵՄՐԸԳԻՐՄԱՆ ՎՈՂՈՐԸ

Մանածին վերաբերող գլխում ասված է, վոր վորած մանած կոչվում է 2 կամ ավելի թելերից վոլորած մանածը: Յենթագրենք, վոր մանածը վոլորած է յերկու միատեսակ թելերից: Յենթագրենք՝ վերցրել են յերկու հատ № 52 թել: Հետևապես նրա համարը վոչ թե 52 է, այլ 52 : 2 = 26: Սովորաբար արտադրության մեջ ընդունված է վոլորած մանածի համարը կոտորակով նշանակել: Համարիչում գրում են այն մանածի համարը, վորից ստացված է վոլորած թիվը, իսկ հայտարարում գրում են, թե քանի թելերից է վոլորած: Մեր որինակում համարը նշանակվում է 52/2 կոտորակով: Յեթե վերցնենք № 60

մանածը և այդպիսի 3 թելերից մեկ թել վորոբնք, վորորած մանածի համարը կնշանակենք 60/3 և այլն:

Հաճախ գործարաններում կոտորակը հակառակ ձեռվ են գրում 2/52 կամ 3/60:

6. ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՎՈՐՈՇԵԼ ՄԵՆԾԻ ՀԵՄԵՐԻ, ՎՈՐ ՎՈԼՈԲՎԵՑ Ե ԶԱՆԶԱՅՆ ՀԵԾՈՒԹՅՈՒՆ ԱՐՆԵՑՈՒ ԾՐԵՆՁԻՒՆ ԹԵԼԵԲԻՑ

Յենթագրենք, զոր իրար հետ վորորված են Ն 40 և Ն 45 թելերը: Այդպիսի մանածը գործարաններում հաճախ նշանակում են 40/45 կոտորակով: Սակայն այդ ճիշտ գաղափար չի տալիս մանածի համարի մասին: Վորորած մանածի համարը վորոշելու համար այսպես են վարվում: Վորորած թելերից մեկի համարը բազմապատկում են մյուսի համարով, ստացած արտադրյալը բաժանում են վերցրած թելերի համարների գումարի վրա: Յեթե բառերով արտահայտածը ձեւակերպենք ֆորմուլայի ձեռվ, կստանանք՝

$$\frac{\text{Մանածի } \text{Ն} \times \text{Մանածի } \text{Ն}}{\text{Մանածի } \text{Ն} + \text{Մանածի } \text{Ն}} = \text{վորորած մանածի } \text{Ն}$$


Մեր որինակում $40/45$ մանածի թելերից մեկի համարը 40 է, մյուսինը՝ 45 : Այդ թվերը ֆորմուլայի մեջ տեղադրելով, ստանում ենք՝ $\frac{40 \times 45}{40 + 45} = 21,2$, այսինքն՝ $40/45$ համարի մանածը համապատասխանում է մի տակ թելի Ն 21-ին:

Յերկու տարրեր թելերից վորորած մանածի Ն հեշտ և արագ հաշվելու նպատակով ոգտվում են հետևյալ ձեռվ: յերկու համարները գումարում են և ստացած գումարը բաժանում են 4-ի, այսինքն՝ $45 + 40 = 85$, $85 : 4 = 21,2$:

7. ԱՉՔԻ ԶԵՓՈՎ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՎՈՐՈՇԵԼ ՄԵՆԾԻ ՀԵՄԵՐԻ

Կարող ե պատահել, զոր նոր մանած ստանալիս կասկածեն պիտակի (յարևակ) վրա նշանակված համարի նկատմամբ: Յենթագրենք, վոր հենց նոր փաթաթվող մանածի համարը 32 յի: Նոր ստացած մանածի համարը ստուգելու նպատակով, նախորդ մանածից կտրում են 10 թել և նույնքան թելել նոր ստացած մանածից, փնջիկներ կազմելով՝ անց են կացնում իրար միջից, ինչպես ցույց ե տրված 35 Ա նկարում: Ստացած հանգույցների ծայրերը բռնում են բթով և ցուցամատով և սկսում են դանդաղ վորորել մատներով իրար հետ համեմատելով նրանց հաստությունը (նկ. 35 Բ): Յեթե թելերի յերկու փնջիկների հաստությունները մոտավորապես հավասար են, այդ նշանակում ե, վոր յերկուսի համարն ել 22 յի: Խսկ յեթե նախորդ մանածի 10 թելերը բարակ են, այդ նշանակում ե՝ նոր ստացածը հաստ է, համարն ել ցածր է: Յեթե

այնուամենայնիվ, ցանկանում են վորոշել (թելուկ մոտավորապես) նոր ստացած մանածի համարը, այսպես են վարվում: Հաստությունը հավասարեցնում են, հաստ մասից մեկ մեկ թել հանելով: Յենթաթրենք, վոր Ն 32 10 թելի ընդհանուր հաստությունը հավասար է անհայտ համարի 9 թելի հաստության: Այժմ մնում է համարը վորոշել Այդ նպատակով հայտնի համարը բազմապատկում են անհայտ համարի մանածի թելերի թվով և բաժանում են հայտնի համարի վրա: Մեր որինակում՝ $\frac{32 \times 9}{10} = 28,8$, այսինքն՝ նոր մանածի համարը 28,8 է:



Նկ. 35

III. ՎԻԼԱԿՎՈՂ ՄԱՆԱԾԸ ՅԵՎ ՆՐԱ ԱՐԱՏՆԵՐԸ

1. ԻՆՉ ԶԵՎՈՎ Ե ՄԵՆԾԻ ԳՈՐԾՎԱԾՔՆԵՐԻ ԳՈՐԾՎԱԾՔՆԵՐԸ

Մանածը գործարան է մտնում կաֆերով, վատերի կամ մյուլի պահերի (մասուրների) ձեռվ, վորոնք բերվում են հակերով կամ արկղներով, նույնպես և կողովներով, կամ բաց արկղներով: Կաֆերը փաթեթներով են կապվում: Կապոցի մեջ լինում են մանածին համապատասխան կութաներ: Ամեն մի կութայում լինում է 5 կաժ: Կաժը սովորաբար բաղկացած է լինում մի քանի պասմաներից: Սովորական զուգահեռ վիլակման դեպքում, կաժի մեջ պասմաներն իրարից լարելով են բաժանված: Այդ այն նպատակով է արվում, վոր յետ տալիս թելերն իրար հետ չխառնվեն: Բացի դրանից, գոյություն ունի խաչաձեկ վիլակման յեղանակ: Այդ գեպքում ել թելերը խաչաձեկ են զասավորվում, շնորհիվ այդ բանի քիչ են խճճվում: Խաչաձեկ փաթեթում կտրված թելի ծայրը գտնելն ավելի հեշտ է: Ուստի խաչաձեկ փաթեթի գեղքում պասմաներն իրարից լարով են բաժանվում:

Մեծ մասամբ կաֆերով գործարան են բերում այն մանածը, վոր նախապես ներկվելու յի: Այսպես կոչվող գումավոր (զոլավոր կամ ցանցավոր, «բողչա-բողջա») կտորները գործվում են ներկած մանածից: Ուստի գործարանում կաֆերով ստացված մանածը նախապես

ներկվում է, և հետո միայն կաժերի թելերը վելակում են կամ կծկում:

Գործվածքային գործարան բերվող մասուրները զանազան տեսակի և չափերի յեն լինում: Վատերի պաճերը բերվում են փայտյա հաստ կամ թղթե փամփաշի վրա փաթաթված: Մյուլի մանածը (մեջիոն) բերում են կարծ թղթե փամփուշների՝ կոպիկների վրա փաթաթած, կամ թե առանց փամփուշտի փաթաթված ձեռվ: Վերջին գեղքում պաճի ներքերի ծայրը մասամբ սոսնձվում ե (ոօդկլեյկա): Մանարանում բոլոր պաճերն այնպես են մշակվում, վոր մանածը հեղությամբ յետ գա վերերի կոնածե ծայրից, և միայն մի քանի ամերիկական գործարաններում ե մանմծը յետ տրվում մասուրներից՝ վերջինս պատելով:

2. ԻՆՉՈ՞Ւ ԶԱԼԱԿԵՐԸ ՄՌԱՅԵՆ ԸՆՊԵՏՔ Ե ՀԵՑԻ ՄԹԱԿՄՅՆ ՀՅՄԱՐ

Մանածը վելակելուց հետո ուղարկում են հենք պատրաստելու բաժինը: Հինելիս մի շարք թելերից պետք ե հենք ստացվի, այսինքն՝ զուգահեռ դասավորված թելերի շարքեր: Այդ նպատակով փաթաթած կոճերը կամ կծիկները դասավորում են հասուկ մասրականերում և նրանցից թելերը յետ տալով փաթաթում են հենքավլանի վրա: Այդ ժամանակ ել, ավելորդ ուզար առաջացնելուց խուսափելու նպատակով, ձգում են, վորքան կարելի յետ յերկար հինք պատրաստել: Յերբ կոճերի կամ կծիկների թելերը հատնում են, կոճերը հանում են և փոխարինում նոր և լիքը կոճերով կամ կծիկներով: Կոճերի փոխարինումը, կամ ինչպես ասում են, շարվածքի փոխարինումը ծանր աշխատանակ ե, և այդ ժամանակ հենող մեքենան կանգ ե առնում: Հետևա- պես արտադրողականությունն ավելացնելու տեսակետից ձեռնուու յետ, պատարագողականությունն ավելացնելու տեսակետից ձեռնուու յետ, վոր կոճերի թելերը հարաբորության չափ յերկար լինեն: Վորքան թելերը յերկար լինեն, այնքան ուշուու կկատարվի շարվածքի փոխարինումը, և այնքան ել քիչ ոդուտ կատացվի հետաքա մշակման ըն- թացքում: Այժմ պատկերացնենք, թե ինչ կլիներ, յեթե հինվածքն անմի թացքում: Այժմ պատկերացնենք, թե մոտ 1000 – 1300 մետր (ամեն պաճի վրա կփաթաթվի մինչև 22 պաճ թել): Ուստի պաճերից հինելու գեղքում կարեք կլիներ հաճախակի փոփոխել, իսկ այդ կապված ե մեքենայի ավելացնելու պատրաստելու մասին: Անմիջապես պաճերից հենք պատրաստելու փորձեր կատար- վել են, բայց անհաջողության են հանդիպել: Կաժերից հինելը միան- գամայն անհարին ե, նրանց տեղավորման անհարմարության և կա- ժերից թելը յետ տալիս հաճախակի կտրատվելու պատճառով:

3. ԳԱՐԺՎԱԾՔԱՅԻ ԴՈՐԺԱՐԵՆ ՄՏՆԱՂ ՄՌԱՅԵՆ ՀԵԶՊԻ ԻՆՉՊԻՄ ԱԲԱՏՆԵՐ Ե ՈՒՆԵՆՈՒՄ

Գործարան մտնող մանածը սովորաբար ունենում ե մի շարք թե- րություններ՝ հաստացում, նուրբ և թույլ տեղեր, հաստ ու բարակ մասեր, խիկներ (ասակ), գնդիկներ, կաժավոր մանածներում՝ խոշոր հանգույցներ և այլն:

Հաստացումները կամ հաստ տեղերը թելի վրա գոյանում են այն պատճառով, վոր մանելիս յերկու հարկան թելեր միանում, յերկտակ թել են կազմում: Հաստացումները նաև այն պատճառով են առաջա- նում, վոր բանկաբոշիչ*) վրա կտրված թելը թռչում, միանում ե կողդի նախամանածի հետ: Մանվածքային գործարաններում հաստացում- ներն ել թելի վրա առաջանում են նախամանածներն անփույթ կեր- պով միացնելու գեղքում:

Բանկաբոշիչ վրա նուրբ յեվ բոլով տեղերն այն ժամանակ են ստաց- վում, յերբ իրար միացվող նախամանածներից մեկը կտրվում ե: Այս- պիսի արատը սովորաբար բացթող և կոչվում:

Մանելիս բարակ տեղեր կարող են ստացվել մի շարք թերու- թյունների պատճառով՝ թելիկները վատ խառնելուց, յերբ աղվամազի կտրները պատահաբար թելի մեջ են ընկնում ու նրա հետ մանվում: Աղվամազը կարող ե լինել սպիտակ, զորշ կամ սև (յուղոտ): Ուստի խիկներն ել կարող են լինել սպիտակ, զորշ և սև:

Գնդիկներ կոչվում են աղվամազի և աղրի, նույնպես և բամբակի կնգուղի պատահաբար կպած, բայց չոլորված գնդիկները: Գնդիկները համեմատաբար հեշտ են հասացվում մանածից, յերբ թելերն անց- նում են վիլակող մեքենաների մաքրիչներից:

Խոշոր ու յերկարածայր հանգույցները բանվորուհու անորակության և անփութության արդյունքն են:

4. ՄՌԱՅԵՆ ԱՐՄՑԵՆԵՐՆ ԻՆՉՊԵՏՔ ԵՆ ԸՆԴԻՐԾԵՐՆԱԽՄ ԱՊԻԱՆՔԻ ՎՐԱ

Գործելիս հենքի թելերն անց են կացնում ասպասարքի (քեմազ) և վուսայնասանի (ծերծօ) միջով: Թելի հաստացումբ, խոշոր կամ յեր- կարածայրի հանգույցը չի կարողանում անցնել ասպի և սանրի միջով: Այդ պատճառով նա կտրվում ե: Թելի հատումների համարյա կեսը գործվածքային դազգյանի վրա տեղի յետնուու խոշոր հանգույց- ների պատճառով: Յեթե նույնիսկ թելը չի կտրվում, այնուամենայնիվ

*) Բանկաբաշը մանվածքային մեքենա յետ, վորով մանրաթելերի փնջից (ժապա- վենից) ձգման և թույլ վորքի միջոցով նախամանած են պատրաստում: Նախամա- նածը ժապավենի և պատրաստի թելի միջինն ե:

ապրանքը մաքուր ու կոկ չի լինում: Բացի զբանից, հաստացումները գործվածքի մեջ անցնելով՝ նրա հյուսվածքի նկարն են փշացնում:

Թելի նուրբ տեղերը կտրվում են, չդիմանալով անհրաժեշտ ձգման: Գործելուց առաջ ել նուրբ և թույլ տեղերը կարող են կտրվել այսինքն՝ վիլակելու և հենք պատրաստելու ժամանակ:

Հաստ ու բարակ թելը նախորդ յերկու թերություններն ունենալով, յերբեք բավարար դիմացկունություն չի ունենում և հաճախակի կտրատվում է:

Խլիկների պատճառով ել թելը կարող է կտրատվել: Բացի զբանից, Խլիկներն ապրանքին տալիս են անմաքուր և խորդուրորդ տիսք:

Թելի մեջ մնացած աղբը, աղվամազը յել գնդիկները — կտորի հետ գործվում են և նրան անմաքուր տեսք են տալիս: Շոծման ժամանակ գնդիկները կպչում են չորացնող թմբուկներին և խանդարում են հենքի շարժումը:

Ասածից պարզ ե, վոր վիլակելիս անհրաժեշտ է թելը մաքրել հանգույցներից՝ հաստ ու բարակ տեղերից, հաստացումներից, թույլ տեղերից, նաև աղբից ու աղվամազից: Այլապես հետագա մշակման ժամանակ թելերը կսկսեն հաճախակի կտրատվել, գործվածքն ել անհավասար և կեղտոտ կտրացվի:

Ուստի կամարանի բոլոր բանվորուհիները պարտավոր են առանձնապես ուսադրությամբ հետեւիլ, վար վիլակելիս թելերը մաքրվեն վերոհիշյալ բոլոր բերություններից:

IV. ԿԱԺԵՐԻ ՅԵՎ ՊԱՃԵՐԻ ԶԵՏԵՂՄԱՆ ՀԱՐՄԱՐԱՆՔԸ ՎԻԼԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ


1. ԿԱԺԵՐԻ ԶԵՏԵՂՄԱՆ ԿՐՈՆԱՆԵՐԸ (ՊՍԵԿ)

Մահածը վիլակելիս կաժերը հազցնում են հատուկ հարմարանքների վրա, վորոնք կոչվում են՝ պատկ (կրօնա), չիո (վորոբա), ձեւիկ յել գառնուկ:

Ամենից հաճախ կրոնաներ պատճառում են մեր գործարաններում, բաղկացած են 6 զույգ փայտյա կլոր ձաղերից (նկ. 36), վորոնց ծայրերն ամրացած են անվի C «թոփի» միքա: Ձաղերի մյուս ծայրերը միացրած են Բ լարերով, վորոնց վրա հազցնում են կաժերը: Լարավոր կրոնայի թերությունն այն ե, վոր կաժը վիլակելիս հավաքվում ե մեջտեղում, այս պատճառով ել թելերը խճճվում են: Այս բանից խուսափելու նպատակով, լարի հետ փոքր տախտակներ են հյուսում: Ցերեմն ել այնպիսի կրոնաներ են շինում, վորոնց ճյուղերը զույգություն ունենալու համար պահպանում են անհանդատ առանձինությունը:

զույգ կլոր ձողիկներով են միացրած: Այսպիսի կրոնաներում կաժը չի խճճվում, բայց հենց իրանը կրոնաները հեշտությամբ ջարդվում են:

Կաժերը հազցնելու հարմարության համար սկսեցին ծալովի կրոնաներ շինել: Ծալովի կրոնաներում միայն ճաղերի մի զույգը կա-



Նկ. 36




Նկ. 37

բելի յետ ամրացնել, իսկ մնացած՝ հովհարի ճաղերի նման կարող է ծալովի և բացվել: Կաժը հազցնելիս ճաղերը ծալվում են: Իսկ կաժը հազցնելուց հետո՝ ճաղերը նորից են բացվում:

Գուստավ Ռատոյի Փիրմայի կրոնաների ճաղերը բացվովի յեն: Նայած կաժի չափերին, կրոնայի ճաղերը կարող են յերկար ու կարծինել: Ճաղերը բացվում են կրոնայի C թոփի մեջ դրած զապանակի և ժամանակի միջոցով:



Նկ. 38.



Նկ. 39

Կան նաև առաջիկ կրօնաներ: Այս կրոնաների մետաղյա ճաղերի ծայրերում դրված են զապանակող Դ բռնիչներ: Այս կրոնայի առաջիկները կազմությունն են 1) բռնիչները զապանակելով հեշտացնում են կաժի հազցնելը, 2) կաժին հավասարաշափ ձգվածք են տալիս:

Գլանիկավոր կրոնաներն ամենից շատ պատճառում են տնայնագործ ժական արտադրություններում: Այդ կրոնաները բաղկացած են Ե1 և

Ե2 թմբուկներից (գլանիկներից): Գլանիկներից մեկը (Ե1) անշարժ է, յերկորորդը (Ե2) վեր ու վար և շարժվում, նայած կաժի չափերին:


2. ՊԱՏԵՐԻ ԶԵՏԵՂՄԱՆ ԲՈՆԻՉՆԵՐ

Մանածը պաճերից վիլակելիս, սովորաբար պաճերը հագցնում են անշարժ ձողիկների (իլիկների) վրա, զորոնք ամրացրած են հատուկ բռնիչներում։ Իլիկները (նրանց հետ և պաճերն) ուղղաձիղ (կանգնած), թեք և հորիզոնական դիրքով են տեղավորվում։

Կաժարանի (վիլարանի) բանվորութիներին լավ հայտնի յե, վոր ցածր համարի մանածի դեպքում, յերբ պաճի թելը համեմատաբար կարծ ե լինում, պաճերը բավականաչափ շուտ շուտ են փոխվում։ Յեթե միաժամանակ մի քանի պաճեր հատնեն, բանվորութուն համար դժվար կլինի մի քանի տեղ՝ ասցնել։ Այդ պատճառով առաջանում է իլիկների պարապուրդ։ Այս յերևույթից խուսափելու նպատակով, արտասահ-



Vol. 40.



'Uk. 41


մանում Շլաֆհորստը հատուկ հարմարանք է շինել։ Ամեն մի կոճի
(իլիկի) դիմաց դրվում է Պահպանակ (բունը, նկ. 40) մի քանի
(շեյք մինչև 6) պաճի համար։ Բնի մեջ միաժամանակ յերկու և ավելի
պաճեր են դնում։ Առաջին պաճի թելի ծայրը կապում են յերկրորդ
պաճի թելի ծայրից, նույնպես և յերկրորդ պաճը կապում են յեր-
րորդի հետ և այդպես շարունակում են մինչև վերջը։ Բոլոր պաճերի
իրար կապած թելերը կազմում են մի թել։ Առաջին պաճի թելը հատ-
նելիս խակույն սկսում է յետ գալ նրան կապած յերկրորդ պաճի թելը
և այդպես շարունակ։ Պաճերը հատնելիս, բանվորուհին նրանց փո-
խարինում է նորերով, նոր պաճի թելը կապելով հին պաճի ծայրից։
Իհարկե, այս հարմարանքների կիրառումը նպատակահարմար է ամուր
մանաժի համար, վորի հատումները քիչ են լինում։ Այս հարմարանքի
թերությունը հետեւյալն է։ Պաճերը մեկը մյուսից կապելիս, մանաժ-
քային գործարանում (գատերի վրա) պաճն այնպես պիտի մշակեվ

վոր նրա ներքեխց թելի մյուս ծայրն ազատ լինի: Այս հանգամանքն
արդեն ըստ ինքյան դանդաղեցնում ե (մանարանի) աշխատանքը և,
բացի դրանից, անփուլթ պատրաստած պաճերը հաճախակի փշանում
են: Վերջապես մի պաճից թելլ մյուսին անցնելիս, հաճախակի հան-
գույցներ են առաջանում:

Թելը մի պաճից մյուսին անցնելու ժամանակ, հանգույցներից լուս-
սափելու նպատակով, առանձին աստիճանավոր պահպանակներ են
շինում (նկ. 41): Այս պահպանակների վրա պահերն այնպես են դա-
սավորված, զոր առաջին պաճի մյուս ծայրը գտնվում է յերկրորդ
պաճի վերևի ծայրի բարձրության վրա: Յերկրորդի ներքեւի ծայրը
գտնվում է յերրորդի վերևի ծայրի դիմաց և այլն: Այսպիսի դասա-
վորման շնորհիվ, մի պաճից մյուսին անցնելիս թելը չի թուլանա:

42-րդ նկարում տպած ե Ռաբետ սիստեմի բռնիչը: Պահերը հագցնում են թեք դրված շարժական իլիկների վրա: Թելլ վիլակելիս պահերը պտտվում են: Վորպեսզի իլիկը պահի հետ միասին հեշտությամբ չպտտվի, թելն ել չթուլանա, կամ վրա չգա, իլիկները հատուկ արգելակող հարմարանք են ունենում: Այդ հարմարանքի եյությունը հետեւյան ե. Ցուրպաքանչյուր իլիկի վրա դրվում ե մի փոքր ձախարսկ: Ձախարսկների վրայից խաչաձև քաշված ե լարը, վորի ծայրից ծանրություն ե կախած: Ծանրության շնորհիվ լարը մասամբ դանդաղեցնում է իլիկի պտտումը և այդպիսով վիլակվող թելին պահանջվող ձգվածք ե տալիս: Ծանրությունը ավելանալով և պակասեցնելով, թելին ուժեղ կամ թույլ ձգվածք կարելի յե տալ:

Պաճերը ձողիկների կամ իլիկների վրա հազցնելը վրոշ ժամանակ սպահանջում: Աւտոի նորագույն մեքենաներում իլիկները և ձողիկները փոխարինված են հատուկ հարմարանքով: Այդ հարմարանքը բարեկը և կոլման գործարանի վիճակով մեքենայի վրա մոռավորապես հետևյալ ձեռվ և շինված: Մեքենայի ամբողջ յերկարությամբ փորակ կա: Փորակի վերև լայն ե, ներքեւ՝ նեղ (հիշեցնում ե ձիերի՝ մեջտեղից բաժանված կերամանը): Ամեն մի բաժինը համապատասխանում ե իր կծիկին: Ամեն մի բաժանմունք հատուկ կափույր ունի, վոր բացվում ե թելը կտրվելիս կամ հատնելիս: Հատած, կամ թելը կարված պաճը կափույրի միջով վայր ե ընկնում: Կիրակողը նոր պաճերն ուղղակի գցում ե փորակի ամեն մի բաժանմունքի մեջ: Փորակի բաժանմունքի չափի և ձեռի համեմատ պաճերը պաճանջվող դիրք են ընդունում:



Եկ. 42

Այսպես վոր վելակողը ժամանակ չի կորցնում պաճերը իլիկների վրա հազգնելու և փամփուշտները հանելու: Նույնպիսի, բայց պաճերի բաժանմունքների այլ ձևի հարմարանք ել կառուցել ե Եթու գործարանը (նկ. 70):

3. ՊԵՏԵՐԻ ԶԹՓԵՐԸ ՅԵՎ ՏԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՔ

Ինչպես վերելում առացինք, լինում են վատերային պաճեր, այսինքն՝ պաճեր, վորոնք ստացվում են մանվածքային գործարանում ողակա-

վոր վատերներից, և մյուլային պաճեր, վորոնք ստացվում են սել-փակորդից: Վատերային պաճերը լինում են փայտյա կամ թղթե փամփուշտներով (նկար 43 A) և մյուլային թղթե փամփուշտներով (նկ. 43 B), առանց փամփուշտների, բայց ներքեւից սոսնձած:

Վատերային պաճերի չափերը, ըստ վերելքի, լինում են հինգ, վեց, յոթ և այլն դյումանոց (դյումը = 2,54 մմ):

Մանտծի քաշը կախված է փամփուշտի չափից, յերկարությունից,


նրա տրամագծից և փաթեթի խտությունից: Այսպես, որինակ՝ 5"-նոց փամփուշտը բամբ. № 20 մանածի պարունակում ե մոտ 20—25 գ

6"	"	№ 20	"	"	25—30	"
7"	"	"	№ 20	"	30—37	"

Մյուլի պաճը պարունակում ե՝
բրդի մանած (սաքսոնական) № 24 մոտավորապես 15—17 գ
" " " № 35 " 14—16 "
" " " № 50 " 13—15 "

Թելի յերկարությունը փամփուշտի վրա կախված է նրա վրա պարունակող թելի քաշից, նրա համարից: Փամփուշտի վրա յեղած մաշնածի քաշը և նրա համարը իմանալով, կարելի յե վորոշել մանածի յերկարությունը, առանց թելը յետ տալու: Դրա համար պանի մանածի հաշը բազմապատճում են մանածի մետրական համարով յել ստանում են թելի յերկարությունը մետրներով:

Յենթաղբենք՝ պաճի թելի մաքուր քաշը 25 գ ե, նրա մետրական համարը 20 է, այստեղից թելի յերկարությունը պաճում = $20 \times 25 = 500$ մետրի:



նկ. 43


V. ՄԱՆԱԾԸ ՎԻԼԱԿԵԼԻՍ ԻՆՉԻ ՎՐԱ ՅԵՆ ՓԱԹԱՅՈՒՄ

Մանածը կաժերից կամ պաճերից յետ տալիս, կոճերի վրա զուգահեռ են փամփուշտների վրա—խաչաձեւ:

1. Կ Ո Ճ Ե Ւ

Հինվածի կոներ կոչում են այն կոճերը, վորոնց վրա փաթաթում են յետ աված մանածը: Հինվածքի կոճը խողովակի ձև ունի, յերկու ծայրերում Երջաններն են, վորոնք ֆլանց են կոչվում (նկ. 44):

Կոճի նյուրը: Կոճերը շինում են փայտից և պապյեմաշեյից (պապյեմաշեն—մամրած ստվարաթղթի մի տեսակն է): Վորպեսզի կոճերը չչորանան և չծովեն, ֆլանցները շինում են մի քանի շերտ տախտակ սոսնձելով, փաներայի նման: Կոճերն ավելի դիմացկուն դարձնելու նպատակով, յերբեմն ֆլանցների յեզրերը թիթեղապատում են: Ֆլանցներն ամրացվում են խողովակին՝ փայտյա կոնածե խցանի (Ո) մի-



նկ. 44.

նկ. 45

Հոցով: Յերբեմն այդ խցանը վերեւից ծածկվում է մետաղյա կափարիչով, վար նրան պաշտպանում է ձեղքվելուց՝ հարվածների մամանակ: Խողովակի ներսում, անցքի ծայրերում (զարձյալ գիմացկունությունն ավելացնելով) մետաղյա վաններ են հաղցվում:

Չայած այդ բոլորին, կոճը հարվածից ելի կարող է ձեղքվեր Ռւստի կոճերը յերբեք չի կարելի վայր զցել վորովնետե նրանք այդ Ռւստի կոճերը կշարդվեն: Բացի զրանից, այդ հարվածներից մանածն ել է փշանում:

Կոների չափերը բազմազան են: Այդ կախված է այն թելի նյուրից և հաստությունից, վորի համար շինված է կոճը:

Կոճերի ֆլանցների բարձրությունը լինում է 7-ից մինչև 23 մմ: Շատ հաճախ կոճի բարձրությունը լինում է 10-ից մինչև 15 մմ:

Ֆլանցների արամագիծը լինում է 4-ից մինչև 14 մմ, սակայն մեծ մասամբ այդ արամագիծը հավասար է 7-ից մինչև 10 մմ-ի:

Կոճերի համբ ել զանազան և լինում: Սովորական փայտյա կոճը միջին հաշվով կշռում է մոտ 200—210 գ: Պապյանաշեյից շինած կոճերը փայտյա կոճերից թեթև են լինում:

Մետախի թելի կոճերը մի քիչ տարբերվում են թելիկավոր այլ սյութերից պատրաստած թելերի կոճերից: 17 նկ. պատկերացված են մետախի թելի կոճերի յերկու տեսակները: Նրանց գլանցները սովորական կոճի ֆլանցներից բավականին փոքր են և շինված են նույն կտորից, ինչ կառորից խողովակն է շինված: Մետախի թելի կոճերը սովորականից փոքր են լինում: Մետախի կոճի բարձրությունը լինում է 8-ից—10 ամ, ֆլանցների արամագիծը՝ $2^{1/2}$ -ից մինչև $3^{1/2}$ ամ:


Մանածի համարի ու տեսակի համեմատությունը կոճի համեմ ու չափերի հետ: Կոճերի քաշը և չափը սովորաբար կախված է լինում մանածի համարից և տեսակից: Ավելի հաստ մանածի կոճերը մեծ չափեր են ունենում: Ընդհակառակը, նուրբ և թույլ մանածի համար հանձնարարվում է ավելի թեթև կոճեր բանցնել:

Ուստի վորուե տեսակի մանած յետ տալու համար դրված կոճերը յերբեք չպետք է շփոթել այլ տեսակի մանածի կոճերի հետ: Կոճերը հեշտ տարբերելու համար սովորաբար զանազան քաշի և չափի կոչ ձերի ֆլանցները տարբեր գույն են ունենում, կամ վորուե այլ նշան:

2. Փ Ե Մ Փ Ո Ւ Ց Ե Ե Ր

Փամփուշտներ կոչվում են ֆլանց չունեցող խողովակները, վորոնց վրա մանածը խաչաձև են փաթաթում:

Փամփուշտների ձեմքը յել նյուրը: Փամփուշտները շինում են՝ գլանածե (նկ. 46 Ա), այսինքն ուղիղ՝ խողովակի նման, կամ կոնածե (նկ. 46 Բ), դարձյալ խողովակի նման, վորի մի ծայրը լայն է, մյուսը՝ նեղ: Փամփուշտները լինում են՝ թղթից, փայտից և մետաղից: Վորակեսպի առաջին շերտերը չսովան, փամփուշտի վրա յերենին գողեր (փորակ) են շինում, վորոնք մակերևույթի վրա դասավորված են հատակին զուգահեռ ողակների ձևով:



Նկ. 46

Յերբեմն մանածը պաճերով միասին են ներկում: Այդ գեղությունը մանածը փաթաթում են հատուկ մետաղյա փամփուշտների վրա: Այդ փամփուշտները շատ հաճախ գլանածե են լինում և ծակոտիներ են ունենում, վորոնց միջից ներկն անցնում է մանածը ներկելու

(նկ. 46 Բ): Վերջերու ամերիկական (ֆրանկլինի) գործարանը բաց է թողել առանձին փամփուշտներ, վորոնք հատկապես շինված են ներկելու համար: Դրանք բաղկացած են պողպատյա զսպանակից և գործած գուլպայով են ծածկած: Դրանց վրա կծկած մանածը, մանելով ներկող տպարատի մեջ, կարող է ուժեղ սեղմվել իսկ ապարատից դուրս գալուց հետո նորից նախկին ձեռն ընդունել:

Փամփուշտների չափերը: Փամփուշտի յերկարությունը (կոճի յերկարության նման) կարող է լինել 7-ից մինչև 27 ամ: Ամենադուշական յերկարությունն է 11-ից մինչև 14 ամ: Գլանածե փամփուշտի յերկարությունն է 1-ից մինչև 2 ամ: Կոնածե փամփուշտի նեղ ծայրի տրամագիծը՝ մոտ 2 ամ, իսկ լայն ծայրինը՝ մոտ 5 ամ:

VI. ԿՈՃԵՐԸ ՅԵՎ ԿԾԻԿՆԵՐԸ ՓԱԹԱԹԵԼՈՒ ԶԵՎԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՏԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

1. ՄԵՆԵՐՆ ԻՆՉՊՈՅ ԵՆ ՓԵԹԱԹԵԼՈՅ ԿՈՃԻ ՎՐԱ

Մանածը կոճի վրա զուգահեռ շարքերով են փաթաթում: Թելի մի փաթը մյուսի կողքին և դասավորվում, թելերի շերտ կազմելով: Յերբեք փաթերը շերտշերտ իրարից հավասար հետագա վրայության վրա յեն դասավորվում, այդ դեպքում կոճը դասավագի ձեմք է ստանում (նկար 47 Ա): Իսկ յեթե թելի փաթերը մեջտեղում ավելի խիտ են դասավորվում, կոճի մեջտեղը հաստանում է, դրա շնորհիվ կոճը տակտի ձեմք է ստանում (նկ. 47 Բ):



Նկ. 47.

Հետեւապես, նայած փարաբեր ձեմին, կոճերը կարող են լինել՝ գլանածե յել տակտուածեվ: Արտադրության մեջ մենք պատահում ենք յերկու տեսակներին ել:

2. ՄԵՆԵՐԸ ԿՈՃԵՐԻ ՎՐԱ ՓԵԹԱԹԵԼՈՒ ԶԵՎԸ ՅԵՎ ԱԹԵՎՆԵՐԻ ԹԵՇՈՒՆԵՐՆ ԱՅ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յեթե կոճի մեջտեղը հաստ է (տակտուածե փաթաթելու դեպքում), ապա այդպիսի կոճի վրա ավելի շատ մանած է տեղավորվում, քանի մետածե կոճի վրա: Հենց այդ է տակտուածե փաթաթման առավելագույնը: Մյուս կողմից ել՝ այդ հաստացումը միաժամանակ և թերությունը են հանդիսանում: Կոճերը փաթաթելուց հետո ուղարկում են բարությունը գալուց հետո առաջանակ անհրաժեշտ է, վոր թելը կոչ հինվածքի բաժինը: Հինվելու ժամանակ անհրաժեշտ է, վոր թելը կոչ


ճից հավասար ձգվածքով գա: Տեսնենք այժմ՝ ի՞նչ կկատարվի, յեթե մանածը յետ ե զալիս տակառածե կոճի վրայից: Կոճի մեջտեղում փաթեթը հաստ է, հետևապես փաթն ել յերկար ե: Վորովեսպի թելի ձըդ-վածքը միատեսակ լինի, թելը հավասար արագությամբ պետք ե յետ գա: Իսկ վորովինեաւ մեջտեղում փաթերը յերկար են, ուստի կոճերի պտույտը պետք ե դանդաղանա: Իսկ ծայրերում, ընդհակառակը, փաթը կարճ է: Հետևապես, վորովեսպի կոճից այնքան թել փաթաթվի, վորքան թել զալիս ե կոճի մեջտեղից, ապա կոճը վոչ թե մեկ անգամ պիտի պտույտի, այլ ասենք, $1\frac{1}{2}$ անգամ: Ուրեմն կոճի մեջտեղից թելը յետ զալիս, կոճը քիչ պտույտ պետք ե անի: Իսկ մեջտեղից դեպի ծայրերը մոտենալիս պտույտների թիվը պետք ե ավելանա: Պտուման արագությունը պակասելիս, իներցիայի շնորհիվ կոճն առաջ կանցնի: Դրա հետևանքով թելերը մասսամբ կթռւանան: Հինվածքի ժամանակ, յերբ թելերը մեկ ձգվում, մեկ թուլանում են, ամբողջ հինքի թելերի լարվածքն անհավասարաշատ՝ կլինի: Ուսափ վերոհիշյալի հիման վրա, պետք ե գլանածե փաթեթը գերազասելի համարել տակառածե փաթեթի հանգեց:

3. ՄԱՆԵՐԻ ԻՆՉՊԵՍ ԵՆ ՓԱԹԱԹՈՒՄ ՓԱՄՓՈԽԾՅԻ ՎՐ Ը

Մանածը փամփուշտի վրա միշտ խաչածե են փաթաթում: Փամփուշտի վրա այսպես փաթաթած մանածը բորին ե կոչվում: Թելը խաչածե բորինի վրա միշտ փաթաթում են 45^o անկյունով՝ բորինի առանցքի նկատմամբ (նկ. 48 A): Յեթե առաջի շարքի թելերը դեպի ձախ են թեքված, յերկրորդ շարքի թելերը՝ նրանց նկատմամբ խաչածե կնսուեն, այսինքն՝ դեպի առաջ: Հենց այս պատճառով ել փաթեթը խաչածել է կոչվում: Մի շերտից մյուսին անցնելիս, թելը բորինի ծայրում թեքվում է, այսինքն՝ վոչ թե դեպի ձախ ե գնում, այլ դեպի աջ: Դրա շնորհիվ ել թելերը ծայրերից չեն սողում, յել մանածը փամփուշտների վրա կարող ե փարարփել նայել Ֆլանցենը շինելու դեպիում, մի բան, վոր անհնարին ե զուգահեռ փաթեթի ժամանակ:

Բորիները լինում են գլանածե, այսինքն՝ ուղիղ (նկ. 48 A), կոնածե, այսինքն՝ մի ծայրում լայնացրած (նկ. 48 B) և արևանման (նկ. 48 C): Բորինի ձեւը կախված ե փամփուշտի ձեից: Յեթե փամփուշտը զլանածե ե, բորինն ել նույն ձեւը կունենա: Իսկ յեթե փամփուշտը կոնածե ե, ապա կոնածե կլինի և բորինը:

Արևանման անվանում են զլանածե, կամ մասսամբ կոնածե բորինը, վորի տրամագիծն անհամեմատ մեծ է նրա բարձրությունից, այդ պատճառով նա սկավառակած է դառնում (նկ. 48 B): Արևանման բորիներ պատրաստում են Շլաֆհորստի տիպի մեքենաները, վորոնք կլիմի՝ մեր գործարանում են կառուցվում:



Նկ. 48

4. ԻՆՉԻ ՑԵՆ ՊԵՏՔ ԿՈՆԵԶԵԼ ՑԵՆ ԵՐԵՎԱՆՄԵՆ ԲՈԲԻՆԵՐԻ

Սովորական ձեի (վոչ կոնածե) կոճիներն ու բորիները պտույտելով են վիլակվում: Ուստի անհրաժեշտ ե հետևել վոր կոճերը չափազանց ծանր չլինեն: Հակառակ դեպքում թելը չի կարողանա կոճը պտտել և ձգվելուց կարող ե կտրվել: Նույնպես վատ ե, յեթե կոճը բորինը թեթե ե, վորովինեաւ վրա համեմատ՝ կոճի թելի յերկարությունն ել քիչ կլինի: Իսկ այդ, ինչպես ասացինք, ցանկալի չե:

Կոնածե խաչափաթ բորինից թելը վիլակվում է, ավելի ճիշտ՝ սուզում ե բորինի բարակ ծայրից, առանց նրան պտտելու: Հստ վորում կամ բորինից իջնում ե (չենթարկվելով վորեւ ձգվածքի), անկախ թելը բորինից յել կլինի: Իսկ լերե ալդպես ե, ուշեմն խաչափար բորինի չափերից, իսկ նետվապես յել նրա վրայի թելի յերկարությունը, կարող ե ըստ կերոք, հետեւվապես յել նրա վրայի թելի յերկարությունը, կամ վերաբերյալ:

Արևանման բորբիններն ել վորոշ առավելություն ունեն հասարակ գլանածե բորբինների հանդեպ, վորովիճետն սկավառակաձև լինելու պատճառով՝ առանցքի ուղղությամբ վիլակումը հեշտանում է։ Արևանման բորբինները հարմար են մանածի ապարատային ներկվածքի միքանի ձևերի տեսակետից, վորովիճետն ներկը հեշտությամբ ե անցնում ամբողջ բորբինի միջից։

5. Ի՞նչ է ԽԱԶԱՀԵՎ ՓԱԹԱԹՄԱՆ ԱՌԵՎԵԼՈՒԹՅՈՒՆԸ

6. ԿՈՐՎԵՐԻ ՅԵԼ ԲՈԲԻՆՆԵՐԻ ՏԵՐՊՈՂԱՒԹՅՈՒՆՆԵՐ

Բորինի կամ կոճի տարողությունն ամենից առաջ նրա չափերից են կախված: Մեծ կոճը բնականորեն կարող է շատ մանած պարունակել: Կոնի տարողությունը սովորաբար գրամմերով է փորակում: Նախապես հայտնի յեւ, վոր վորոշ չափի կոճը, ասենք, միջին թվով պարունակում է 300 գրամ մանած: Ավելի խիտ վիլակման դեպքում կարող է 300 գ-ից մի քիչ ավելի պարունակել խիտ ավելի նոսր փաթեթի գեղքում՝ մի քիչ պակաս: Որինակ, յիթե կոճի բարձրությունը 11 մմ, խիկ ֆլանց-ների տրամագիծը $8^{1/2}$ ամ է, կարող է պարունակել 400 գ բարձրակե մյուլի հենքի մանած և 450 գ նույնախիսի, բայց վատերային մանած:

Այդ բացատրվում են նրանով, վոր վատերային մանածը յուր կառուց-
վածքով ավելի խիստ են մյօւլի մանածից: Ուստի կոճի վրա ըստ քաշի
ավելի շատ մանած են տեղափորվում:

Բորբինների տարողությունը կախված են թե նրանց բարձրությու-
նից և թե փաթեթի տրամագիծից: Որինակ՝ զլանաձև բորբինը, վորի
բարձրությունը 11 ամ են, իսկ փաթեթի տրամագիծը՝ 11 ամ, կարող ե-
պարունակել մոտ 425 գ բամբակե հենքի մանած: Կոնաձև բորբինը, վորի
պարունակել մոտ 11½ ամ են և լայն կողմի տրամագիծը 15½ ամ (հա-
նած 5 ամ փամփուշտի տրամագիծը), իսկ նեղ կողմի տրամագիծը՝
13 ամ (հանած փամփուշտի 2 ամ տրամագիծը), պարունակում են մո-
տավորապես 900 գ բամբակի մանած: Նույն չափերի կոնաձև բո-
րբինը պարունակում են բրդի (կամկոլ) մանած 800 գ ծանրությամբ:
Կոճի կամ բորբինի թելի յերկարությունը կախված են թե կոճի կամ
բորբինի տարողությունից են թե մանածի համարից: Վորքան բարակ
լինի մանածը, այնքան մեծ կլինի կոճի վրա տեղափորած թելի
յերկարությունը:

7. ԿՈՅԻ ԿԱՄ ԲՈՐԵՆԻ ԹԵԼԻ ՅԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆ ԿԱԽԱՌԸ ՆԻԾ
ՀԱՐՄԱՔՅՑ


Իմանալով բորինի կամ կոճի վրա տեղավորված թելի քաշը և նրա համարը, առանց թելը յետ տալու, կարելի յեւ վորոշել նրա յերկարությունը: Վերևում ասացինք, վոր համարը թելի յերկարության և նրա քաշի հարաբերությունն ե, այսինքն՝ թելի համարն իմանալու համար քաշի հարաբերությունը պետք է բաժանել իր քաշի վրա: Ուստի կոնք թելի յերկարությունը պետք է բաժանել իր քաշի վրա: Անսի կոնք կամ բորինի վրայի բեկի յերկարությունն իմանալու համար, սկզած կոնք մտնածի՝ գրամեներով արտահայտած հաջը պետք է բազմապատճել իր մեջ, բայց համարով: Ցենթագրենք բորինի վրայի թելի քաշը 450 գ ե, իսկ համարը՝ 52: Այն ժամանակ բորինի վրայի թելի յերկարությունը հավասար կլինի $450 \times 52 = 23400$ ամ-ի: Պետք է նկատել, վոր այս հաշվիը միշտ չի կարող կատարելապես ճիշտ լինել, վորովհետև շատ հաճախ մանածի համարն այնքան ել ճիշտ չի լինում (մանածի կամ մանարանի խոնավության փոփոխության պատճառով): Սովորաբար համարը ցածր ե լինում տեսական համարից, այսինքն՝ կոճի վրա նշանակած համարից: Ուստի հաշվելու միջոցով ստացվող թիվը համարյա միշտ ել ցույց կտա ավելի մեծ յերկարություն, քան փաստական լինում ե կոճի վրա: Ուստի կոճի կամ բորինի վրա յեղած թելի յերկարությունը հաշվելիս, նկատի պիտի ունենալ վոր հաշվելիս յերկարությունը հաշվելիս, նկատի պիտի ունենալ վոր հաշվելիս յերկարությունը մետրների թիվը բացարձակ ճիշտ լինել չի կարող, այլ մոտավորապես ճիշտ:

VII. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՎԻԼԱԿՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. ԻՆՉ ՍՏՈՐԵՐԸ ՓԱՄԱԿՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կոճերը փաթաթելիս, նրանք կարող են լինել կամ կանդնած (ուղղաձիգ), կամ պառկած (հորիզոնական) դիրքում: Նայած կոճերի դասվորմանը—կոճերը փաթաթելու ժամանակ՝ վիլակող մեքենաները լինում են ուղղաձիգ յեվ հորիզոնական:

Վորովհետև մանածը կարող է զուգահեռ, կամ խաչաձև փաթաթվել, ապա վիլակող մեենաներն ել լինում զուգահեռ յեվ խաչաձև փաթաթող մեքենաներ: Զուգահեռ վիլակող մեքենաները կոչվում են կոճավոր, իսկ խաչաձև փաթաթող մեքենաները՝ բորբինավոր:



Նկ. 49.

2. ԻՆՉՊԵՄ Ե ԹԵԼՆ ԱՆՑՆՈՒՄ. ՎԻԼԱԿՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ

Պահից կամ կաժից մանածը վիլակելիս՝ նախ թելն անցնում է արգելակող հատուկ սկավառակներով, կամ պատվում է մահուդով ու թափով պատած Բ դաշնակների շուրջը (նկ. 49), վորոնք միաժամանակ թելը թե ձգում, թե մաքրում են: Հետո թելն անցնում է թելատարի միջով կամ ուղղիչ Ռ ձողիկներով և հասնում է Ա թելատարին: Թելատարները յետ ու առաջ անցնելով, թելը հավասարաչափ շերտերով դասավորում են կոճի վրա, թելատարից դուրս գալով՝ թելը փաթաթվում է կոճի վրա:

3. ԻՆՉ ՍՏՈՐԵՐԸ ՓԱՄԱԿՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մենք արդեն ասացինք, վոր թելը յետ տալու նպատակն են արագակութափեր ավելի յերկար թել ստանալու, վոր կարելի յեվ հավասարաչափ շերտերով փաթաթել կոճի կամ բորինի վրա՝ միատեսակ շարժածքով՝ բացի զրանից, վիլակելու ժամանակ պետք է մաքրել թելի վրա յեղած պաճերի կտորատանքը, աղբը, աղվամազը և վերացնել խոշոր հանգույցները, խլիկները, հաստ ու բարակ տեղերը:

Դրան համապատասխան, ամեն մի տեսակի վիլական մեքենայի մեխանիզմները կարող են ստորաբաժանվել՝ 1) կոնի (բորինի) վրա մանած փարարող մեխանիզմներ, 2) մանած կոնի յերկարությամբ հատվածաչափ դասավորող մեխանիզմներ, 3) թելը ձգելու գործիքներ:


4) մաժրիչ գործիքներ: Նոր կառուցվածքի փաթաթող մեքենաները, բացի դրանից, ունենում են ամենա 1) փամփուշաները և բորինները մուտեցնող և հեռացնող մեխանիզմներ, 2) թելը կտրատվելու դեպքում բորինը կանգնեցնող մեխանիզմներ, 3) այնպիսի մեխանիզմներ, վորոնք բորինն անջատում են, յերբ նրա վրա փաթաթվող թելի հաստությունը պահանջվող չափի յեվ հասնում, 4) մեխանիզմներ, վորոնք ավտոմատ կերպով կապում են թելը, յերբ վերջինս կտրվում է:

Ա. ՈՒՂՂԱՋԻԳ-ՎԻԼԱԿՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐ

VIII. ԿՈՃԸ ՇԱՐԺՈՂ ՄԵԽԱՆԻԶՄ

1. ԻՆՉՊԵՄ Ե ԹԻՆՎԵՐ ԻԼԻԿ ՋԱՐԺՈՂ ՄԵԽԵՆԻԶՄԸ

Ուղղաձիգ վիլական մեքենաների կոճի շարժամամբ հիմքից և ստացվում: Իլիկի վերին մասում դրված է Տ ափսեն (նկ. 50), վորի վրա դրվում է Կ կոճը: Իլիկի ներքեւում կա Բ ճախարակը, վոր Ա լարով միացված է թիթեղյա Հ թմբուկի հետ: Ներքեւ մասը (իլիկի կրունկը) դրվում է Ռ կրնկակալի մեջ: Ճախարակից բարձր իլիկը դրվում է վուանի (անուր) մեջ՝ ուղղաձիգ (կանգնած) դիրքում պահպելու նպատակով: Վուանը գտնվում է հատուկ իլիկային Ջ ձողանի վրա, վոր անցնում է մեքենաների նայի ամբողջ յերկարությամբ: Իլիկները շարվում են Հ թմբուկի յերկու կողքերում: Վորոշ սիստեմի մեքենաների իլիկ ները մեկական շարքերով են գասավորվում, իսկ ուրիշներինը՝ յերկուական շարքերով:



Նկ. 50.


Կոճը պատկերակաղի (առակա) կար գով են շարվում (ինչպես պատկերակաղի քառակուսիներն են գասավորվում): Հ թմբուկը փոկանվի հետ միասին ամբացված է միւնույն գլանի վրա: Հ թմբուկը պատվելիս Ա լարի միջոցով շարժումը հաղորդում է իլիկներին, վերջիններս ել իրենց հերթին հաղորդում են իրենց վրա հազցըրած Կ կոճերին: Սովորաբար այն լարը, վոր իլիկի ճախարակը միացնում է թմբուկին, շարժում է յերկու իլիկները, վորոնք գասավորված են իրար դիմաց և թմբուկի յերկու կողմերում:

Վերջին ժամանակներս կոճը շարժող մեխանիզմում մի քանի կատարելագործություններ են մտցրած: Ուշնակ՝ Սակո-Լոռուել ֆիրմայի մեքենան, վոր շարժումը լարի միջոցով իլիկներին հաղորդելու փոխարեն, հաղորդում ե ժապավենի միջոցով: Այդ Ծ ժապավենը միանդամից (նկ. 51) ընդգրկում ե 4-ից մինչև 6 Բ իլիկ: Թե լարը, թե ժապավենը ժամանակի ընթացքում ձգվում, յերկարում են և այդ պատճառով թուլանում: Վորպեսզի թուլանալիս հնարավոր լինի ժապավենը ձգել առանց կարելով դրստելու, Սակո-Լոռուել մեքենայի վրա հատուկ ձգող Մ հախարակներ են դրված: Ժապավենավոր փոխանցման առավելությունը լարավոր փոխանցման հանդեպ այն ե, վոր տվյալ գեղքում պահպանվում է ձգվածքի հավասարաչափությունը: Բացի այդ ժապավենն այնքան շուտ չի մաշվում և ավելի ուշ ե փոխարինվում, քան լարը:

Հին կառուցվածքի մեքենաներում իլիկները յերկար եյին շինում: Այդ պատճառով դըժվարանում եր իլիկների կենտրոնացումը, վորի շնորհիվ իլիկները թրթուում եյին (դողում եյին): Հին մեքենաների յերկար իլիկների թերությունների թվին եր պատկանում նաև կրընկակալների կառուցվածքը, վորոնք բաց եյին և հեշտությամբ եյին կեղտուփում, աղվամազով լցվում և հաճախակի պիտի մաքրվեյին: Նորագույն կառուցվածքի ուղղածիդ վելակող մեքենաները սովորաբար ունեն Ռաբբետ տիպի կատարելագործված իլիկներ: Այս իլիկները հներից անհամեմատ կարձ են (նկ. 52): Իլիկի ներքեւ ծայրը դրվում ե վոչ թե կընկակալի, այլ Ե վուանի մեջ, վորը և իլիկին պահում ե ուղղածիդ (կանգնած) դիրքում: Ինքը Ե վուանը ամրացված ե իլիկային Ո ձողանին: Ուստի նկարագրված կառուցվածքում իլիկները չեն դողում (թրթուում) և ամեն կողմից ծածկված վրանի մեջ աղը և աղվամազ թափվել չեն կարող:

Բացի դրանից, իլիկի կրկնակալը յուղփում ե ավտոմատ կերպով (ինքն իրեն) յուղն անընդհատ տալով վուանի մեջ: Վորովհետև իլիկն այնքան յերկար չի լինում, ուստի պետք ե միայն մի պահող ձողուն:

Վիլակման սկզբում թելը փաթաթվում ե կոճի վուանի վրա: Թելը փաթաթվելիս, կոճի հաստությունն ավելանում ե, և ամեն անգամ



Նկ. 51.


կոճը պտտվելիս, ավելի շատ թել ե փաթաթվում, քան նախորդ պտույտի դիրքում: Ուստի կոճը լցվելու հետ զուգընթաց, փաթաթման արագությունն ել ե աճում: Դրա հետ ել փոխվում ե թելի ձգվածքը և կաժի խոտությունը: Վորպեսզի թելի վիլակման արագությունը մասմբ կանոնավորվի, իլիկների վրա դնում են տարբեր տրամագիծը ունեցող յերկու ճախարակներ: Իլիկների առաջի շարքի ճախարակների տրամագիծը վորը ե, յերկրորդ շարքին՝ ավելի մեծ: Վիլակման սկզբում առաջ կոճերը դնում են մանր ճախարակավոր իլիկների վրա, վորոնք ավելի արագ են պտավում: Քանի կոճերը լցվում են և թելը կոճի վրա սկսում ե ավելի արագ փաթաթվել կոճերը տեղափոխվում են դանդաղ պտավող իլիկների վրա: Այսպիսով վորոշ չափով հավասարեցնում են վիլակման արագությունը և նրա խոտությունը:

Մյուլի պաճերից թելը վիլակելիս (պաճի ամենացածր տեղից), թելը դժվարությամբ ե գալիս՝ մեծ ձգվածքով ե իջնում: Ավելացած ձգվածքի պատճառով ել թելերը հաճախակի յեն կարվում: Ուստի պաճերի վրա վորոշ քանակությամբ չվիլակված թել ե մնում, վոր ընկնում ե ու-

գարի մեջ: Այդ բանից խուսափելու նպատակով, մեքենաներում հաստուկ իլիկներ են զատում, վորոնց վրա լրացուցիչ կերպով փաթաթում են պաճերից թելի մնացորդները: Այս իլիկների ճախարակների ամենը պաճերի մեջ են, և նրանք ավելի դանդաղ են պտավում մյուսների համեմատ: Մնացորդները լրացուցիչ կերպով վիլակող իլիկները վորոշ տարածությամբ դասավորում են մեքենայի ամբողջ յերկարությամբ այն հաշվով, վոր ամեն մի վիլակունի իր տրամադրության տակ ունենա մի քանի (3—4) դանդաղ պտավող իլիկներ: Յերբեմն լրացուցիչ վիլակումը կատարում են՝ պաճերից թելը յետ տալով և վոչ թե նրանց վերևից քաշելով:

2. ԽԵԶԳԵՍ ՊԵՏՔ Ե ՀԱՅՎԵԼ ԻԼԻԿԻ ՊՏՈՒԵՑՆԵՐԻ ԹԻՎԻ

Իլիկի պտույտների թիվը հաշվելու համար պետք ե գիտենալ թիվոյա թիվունիկի պտույտների թիվը, թիվունիկի յեվ իլիկի հախարակի տրամագիծը:



Նկ. 52.

Բազմապատկերով բմբուկի պտույտների թիվը նրա տրամագծով յեկ բաժանելով նախարարի տրամագծի վրա, կոտանանք իլիկի պտույտների թիվը:

Հենց նոր ասածը կարելի յէ ձևակերպել այսպես՝

թմբուկի պտույտների թիվը \times թմբուկի տրամագիծ = իլիկի ճախարակի տրամագիծ
պտույտների թիվն:

Պարզեցր համար բերենք մի որինակ: Յենթադրենք թիթեղյան թմբուկի տրամագիծը (նկ. 50) 160 մմ (16 սմ) և 1 բոպեյում կատարում ե 180 պտույտ: Թիթեղյան թմբուկից շարժումը հաղորդվում է իլիկի վրա ամրացված ճախարակին: Ճախարակի տրամագիծը 30 մմ (3 սմ) ե: Հարկավոր ե իմանալ քանի՞ պտույտ կանի Յ իլիկի վզորվեան իլիկի պտույտների թիվը հավասար ե թմբուկի պտույտների թվին՝ բազմապատկած թմբուկի տրամագծով և բաժանած ճախարակի տրամագիծ վրա, ապա 180-ը բազմապատկում ենք $\frac{180 \times 160}{30} = 960$: և ստացած թիվը բաժանում ենք 30-ի, այսինքն՝

$$= 960: 30 = 32$$

վորը ցույց ե տալիս, թե քանի՞ պտույտ կանի մեր իլիկը 1 բոպեյում:

Պետք ե նշել, վոր իլիկի իրական պտույտների թիվը քիչ պակաս ե վերոհիշյալ կանոնով հաշվածից: Վերջինս այն բանով ե բացատրվում, վոր լարը ձգվում ե սկսում ե սկզեր դրա շնորհիվ պտույտների վորոշ քանակը կորչում ե: Նայած լարն ինչ չափով ե ձգված, ըստ այնու ել սկսումը կարող ե շատ կամ քիչ լինել: Միջին թվով սկսումի կորուստը կարելի յէ ընդունել 1-ից մինչև 2⁰/0: Այդ նշանակում ե, վոր փոխանակ, որինակ, 800 պտույտի, իլիկը 8 պտույտ պակաս, այսինքն՝ 800 — 8 = 792 պտույտ կանի:

Յերբ լարը տեղ տեղ յուղոտվում ե, նա սկսում ե ավելի շատ սկզեր և իլիկի պտույտն անհավասարաշափ ե դառնում: Ուստի վիրակառ մետենաների յենրակարպետները, նույնպիս յեկ վիրակուհիները պետք ե հետեւ շարժող լարերի դրույյանը, ինը լարերը ձգեն, յերե նկատեն, վոր նրանի յերկարել են, կամ ժամանակին նորերով վիրակինեն:

Վերջապես սկզբումից առաջացած կորստի մի վորոշ տոկոսն ել ստացվում է վիրակման սկզբում, յերբ գեռ թեթև կոճը սկզբում ե իլիկի ափսեյի վրայով: Սյատեղից հետեւում ե, վոր ուղղաձիկ վիրակող մեջենաների արագությունը ե արտադրողականությունը հաշվելու համար, պետք ե վորոշ զեղջ անել սկզման համար:

Նայած վիրակող նյութի հատկություններին, իլիկները մեկ բոպեյում կատարում են 400-ից մինչև 1200 պտույտ: Միջին թվով կարելի յէ ընդունել վոր բամբակի մանածը վիրակելիս, իլիկի պտույտների թիվը լինում է 900-ից մինչև 1200 պտույտ 1 բոպեյում, իսկ բրդե թելի համար՝ 700-ից մինչև 1000 պտույտ մեկ բոպեյում:

3. Ի՞նչպէս զեօք ե չըթվել թելի վիրակման ԱՐԵԳՈՒԹՅՈՒՆ ՄԵԺՐԵՐՈՒ

ՈՒՂՂՋԻՑ ՎԻԾԿԱՅ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՀԱՄԲՐ

Վիրակման արագուրյունը հաշվելու համար անհրաժեշ է իմանալ վոչ միայն իլիկի պտույտների թիվը 1 բոպեյում, այլ յեկ այն, թե իլիկի մեկ պտույտի ժամանակ ինչ լերկարուրյան թել ե փարավում կոճի վրա: Թելի առաջին շերտերը դասավորվում են կոճի խողովակի վրա, հետեւ վյալները դասավորվում են թելի նախորդ շերտերի վրա, վերջապես (վիրակման վերջում) թելի փաթերը դասավորվում են համարյա լըց ված կոճի վրա: Բնական ե, վոր սկզբում կոճի հաստությունը (տրամագիծը) փոքր ե լինում, իսկ վերջում՝ ավելի մեծ: Ուստի սկզբում այն մի պտույտի ժամանակ կոճի վրա իչ թել ե փարավում, բայ վիրակման վերջում: Հետեւ վիրակման վերջում կոճի միջին հաստությունը:

Վորովհետեւ վիրակման արագությունն ել սկզբում և վերջում տարբեր են լինում, ապա արագությունը հաշվելիս պետք ե վերցնել միջին արագությունը: Այդ ժամանակ վերցնում են կոճի միջին հաստությունը:

Կոճի միջին տրամագիծը (միջին հաստությունը) վորոշելիս, այսպես են վարվում: Ըստունենք, թե տվյալ կոճի խողովակի տրամագիծը = 36 մմ (3,6 սմ), իսկ լիքը փաթաթած կոճի արագությունը = 80 մմ (8 սմ): Այսպիսով փաթաթած թելի բոլոր շերտերի հաստությունը հափառը կիմնի լրիկ փաթաթած կոճի հաստությանը՝ հանած կոճի խողովակի հաստությունը: Տվյալ զեպքում 80 մմ — 36 մմ = 44 մմ = 4 սմ: 44 մմ-ը կիսելով, սահանում ենք 44 մմ : 2 = 22 մմ, վոր կազմում ե փաթաթի հաստությունը և վորովհետեւ թելը փաթաթվում է խողովակի վրա, ապա կոճի փաթեթի միջին արագութիծն իմանալու համար ստացած թվին պետք ե գումարել խողովակի տրամագիծը: Ստանում ենք $22 + 36 = 58$ մմ: Հենց այս կիմնի փաթեթի միջին արագությունը:

Ուրեմն կոճի փարերի միջին տրամագիծը վարուելու համար, պետք ե՝

- 1) լիբը փարաբած կոճի տրամագծից հանել կոճի խողովակի տրամագիծը,
- 2) ստացած թիվը կիսել, 3) ստացած հանորդին ավելացնել խողովակի տրամագիծը: Վերջին թիվը կիմնի փարերի տրամագիծը:

Վորոշելով փաթեթի միջին տրամագիծը, գտնում են թելի փաթի միջին յերկարությունը, այսինքն՝ կոճի շրջանագծի յերկարությունը նրա միջին տրամագծի համար: Շրջանագծի յերկարությունը հավասար է տրամագծին՝ բազմապատկած 3,14-ով: Մեր որինակում միջին տրամագիծը = 58 մմ: Այստեղից, շրջանագծի յերկարությունը = $58 \times 3,14 = 182$ մմ:

Շրջանագծի յերկարությունը բազմապատկելով իլիկի մեկ բոպեյում կատարած պտույտների թիվը, ստանում ենք մետրի այն թիվը, վոր

Կարող ե փաթաթվել կոճի վրա մեկ ըոպեյի ընթացքում։ Յենթադա
ըենք թե իլիկը 1 ըոպեյում կատարում է 800 պտոյտ, այստեղից
յեզրակացնում ենք, վոր 1 ըոպեյում կոճի վրա կփաթաթվի
 800×182 մմ = 145600 մմ, կամ մետրերի վերածելով = 145,6 մ։
Վորովհետև վիլակման արագությունը հաշվում են վոչ թե միլիմետ-
րերով, այլ մետրերով, ապա կոտորակը մի անգամից բաժանում են
 1000 վրա՝ $\frac{800 \times 182}{1000} = 145,6$ մ։

Հետևապես ուղղաձիգ վիլակող մեթնաների վիլակման արագությունը մետրերով փորուելու համար՝ 1) գտնում են կոճի փարերի միջին տամագիծը, 2) միջին տամագիծը բազմապատկում են 3,14-ով յեկ սանում են շրջանագծի միջին յերկարությունը, 3) շրջանագծի յերկարությունը բազմապատկում են իլիկի 1 ռոպեյում կատարած պտույտների բիով յեկ սանում են վիլակման արագությունը 1 ռոպեյում, 4) յերեք շրջանագծի յերկարությունը արտահայտվում է մմ-ով, ապա սահցած արտադրյալը բաժանում են 1000-ի վրա, իսկ յերեք շրջանագծի արագությունը արտահայտված եր ունիթմետրերով, ապա սահցած արդյունիքը բաժանում են 100-ի վրա:

4. ԻՆՉԵ Ե ՈՒՂՂԱԶԻՔ ՎԻԼԱԿՄԱՆ ԹԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Ուղղաձիր վիլակող մեքենաների թերությունն եւ թել փաթաթելու տարբեր արագությունը վիլակման սկզբում և վերջում եւ, վորպես դրա հետեւանք, թելի վրա փաթաթման անհավասար խտությունն սկզբում և վերջում: Փաթաթման արագությունն սկզբում և վերջում չափա- զանց շրւտ ե փոխվում: Յենթադրենք, թե իլիկների պտույտների թիվը 600 եւ Փաթաթման սկզբում փաթեթի տրամագիծը 40 մմ ե, վերջում՝ 800 մմ ե: Հետևապես փաթաթման արագությունն սկզբում կլինի՝ $40 \times 3,14 \times 600 = 85360$ մմ ($85,36$ մ) մեկ րոպեյում: Վերջում կլինի՝ $80 \times 3,14 \times 600 = 170620$ մմ ($170,6$ մ) մեկ րոպեյում, այսինքն՝ արագությունն այստեղ կրկնապատճել ե: Թելի լարվածքը փաթաթ- ման արագությունից ե կախված: Ուստի արագության փոփոխությանը զուգընթաց՝ փոփոխ եւ թելի լարվածքը: Այս պատճառով կոճի փաթաթման խտությունն սկզբում և վերջում տարբեր է լինում, իսկ այդ բոլորովին ցանկալի չե: ∞


IX, թԵԼԸ ԿՈԶԻ ՅԵՐԿԱՐՈՒԹՅԱՄ ԴԱՍԱՎՈՐՆ ՄԵԽԱՆԻԿՈՒԹԵ

Վերեսում ասացինք, վոր վիլակելիս անհրաժեշտ են թելերը կոճի
վրա հավասարաչափ դաստիորվեն, փաթերն ել իրարից հավասար հե-
ռավորությամբ ընկնեն: Վիլակման մեքենաները, թելերը կոճի յեր-
54

կարությամբ հավասարաչափ դասավորվելու համար, հատուկ դասավորող մեխանիզմներ ունեն: Այդ մեխանիզմներն այլ ձևով կոչվում են «տանիշներ» (ՅՈԾԿՕՑԱՆ) և բաժանվում են արտակենութային և նաղան-վավոր մեխանիզմների:

1. ԻՆՉՊԵՍ ԵՆ ԿԱՌՈՒՑՎԱՆ. ՅԵՎ ԻՆՉՊԵՏ ԵՆ ԵՅԻՆՏՈՒՄ ԵՐՏԵԿԵՆՏՐՈՒԱՅԻՆ
ԴԱՍՎՈՐՈՂ ՄԵԽԱՆՉՐՄՆԵՐԸ

Մեր գործարաններում ամենից շատ տարածված արտակենտրոնային մեխանիզմի կառուցվածքը հետևյալն է։ Մեքենայի (նկ. 53) դլանի վրա դրված ե վորդանման Կ ժանանիվը, փոր կցված ե Ո ժանանվի հետ։ Ո ժանանվի առանցքի վրա դրված ե Մ ժանանիվը, փորը շարժում ե Ն բան կցված Հ ժանանիվը, Վ երջինս դրված ե սրտաձև։ Ե ալտակենտրոնի (սրտաձև արտակենտրոններն առանձին պատկերացված են 54 նկարում) առանցքի վրա։ Յերկու կողմից արտակենտ-




Ակ. 53.

կոճի նկատմամբ մեկ կը արձրանա, մեկ կիջնիւ. Այդ ժամանակ թելը կոճի վրա հավասարաչափ շերտերով կփաթաթվի:

Խոյակների շարժումը (նույնպես և փաթաթվող թելը) կախված է արտակենտրոնի ձևից, կամ, ինչպես ընդունված ե ասել, նրա պրոֆիլից (արամատ), վոր զանազան գեպքերում տարբեր ձև և ունենում: Նկարագրենք արտակենտրոնների յերկու A և B տեսակները (նկ. 54): A արտակենտրոնն ավելի կոր ձև ունի, ուստի տանիչներին համաչափ շարժում ե տալիս, դրանից ել կոճը գլանաձև և փաթաթվում: Իսկ B արտակենտրոնը մի քիչ յերկարացրած ձև ունի: Դրա շնորհիվ կոճի մեջտեղում տանիչը դանդաղ և շարժվում, և կոճը տակառաձև և փաթաթվում:

Մի քանի մեքենաներում T քանոնը պահելու համար հատուկ K գլանիկներ կան (նկ. 53), վորոնք T ատամնաձողի ծայրերի տակ են




Եկ. 54.

Դասավորված Շարժվելիս ատամնաձողը գլանիկների վրայով և սահում՝ Այս մեջքենաներում, վորտեղ այդպիսի գլանիկներ չկան, Դ քանոնն ուղղակի վրաված և յերկու P ժանանիթների (նկ. 56) վրա, վորոնց նա շարժում եւ Նկարագրած կառուցվածքն այնքան գործնական չե, վորովինետև ժանանիթների ատամները քանոնի ծանրությունից շատ են մաշվում:

Արտակենտրոնային դասավորող մեխանիզմի կառուցվածքներում
մի քանի փոփոխություններ են կատարված։ Այդ մեխանիզմներից
մեկը պատկերացված է 55 նկարում։ Մեքենայի գլխավոր գլանից
1, 2, 3 և 4 ժամանիվների միջնորդ շարժումը հաղորդվում է 5 ժա-
մանիվին, վորի գլանի վրա դրված են Ձ1 և Ձ2 արտակենտրոնները։
Ամեն մի արտակենտրոն ունի իր վոտնակալը Ռ1 և Ռ2։ Վոտնակալի
ծայրերը մեքենայի զանազան կողմերում ամրացված են առանցքին։
Վոտնակալերի շարժվող ազատ ծայրերը Ա շղթայով միացված են Բ
բ

պլանակի հետ: В գլանիկի առանցքի վրա զրված է ժանանիվը, փորը կցված է Հ տանիչների կրող յերկաթաձողի ատամներին: 5 ժանանիվը պտտվելիս, Թ1 և Թ2 արտակենարոնները փոխեփոխ կսեղմեն, ամեն մեկն իր վոտնակալին (Թ1-ը Պ1-ին, իսկ Թ2-ը Պ2-ին): Վոտ-




Ակ. 55

Նակալի ծայրն իջնելիս, ներքե .կճպի Ա շղթան և այդպիսով կպատի Բ գլանիկը՝ նրա առանցքի վրա դրած ժանանվի հետ։ Վոտնակալը բարձրանալիս, Բ գլանիկը հակառակ ուղղությամբ կպտտվի։ Բ զանիկը յետ ու առաջ պտտվելիս, տանիչավոր յերկարածողը վեր ու վարելարժվի և թելլ կդասավորի կոճի յերկարությամբ։

2. ԻՆՉՊԵՍ ԵՆ ԹԻՎԱԾԻ ՅԵՎ ԻՆՉՊԵՏ ԵՆ ՍԹԻՑՏՈՒՄ ՃԵՂԵՎՈՐ
ԺԱՆԱԿՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԴԱՍՎՈՐԱՂ ՄԵԽԵՆԻՉՄՆԵՐ


Ճաղավոր Ժանանիվ ունեցող՝ զասավորող մեխանիզմները. կարելի յէ տեսնել թէ ուզգաձիգ և թէ հորիզոնական վիլակող մեքենաներում: Ճաղավոր Ժանանիվ ունեցող՝ զասավորող մեխանիզմներից մեկի կառուցվածքը հետևյալն է: Թիթեղյա Ե թմրուկի առանցքի վրա դրած և Ը ժանանիվը, վորը Ի ժանանիվի միջացով շարժում է մեծ Ե ժանանիվը. Բ ժանանիվի առանցքի վրա դրված և վորը Ա ժանանիվը: Ի ժանանիվը ու Ե և Ա ժանանիվներն ամրացված են ճոճկող

Ո կախողի վրա, վորի վերևի ծայրը դրված է Ե թմբուկի լիսեռի (գլանիկ) վրա: Կախողը կարող է ընդունել մեկ 56 նկարում պատկերացված դիրքը, մեկ ել՝ 57 նկարում պատկերացված դիրքը: A ժանանիվը փոխեփոխ շարժվում է Ա ճաղավոր ժանանավի՝ մեկ դրսի, մեկ ներսի կողմերով և նրան փոխեփոխ մեկ աջ, մեկ ձախ և ատառում:



Նկ. 56

Հենքի բաժնում աշխատելու համար շատ կարևոր է, վոր բոլոր կուների և բորինների թելերը մոտավորապես միաժամանակ վերջանան կամ թե բորինները հավասար չափերի լինեն: Յեթե տարբեր կոների պատահել աշխատելու ժամանակ են վերջանում, հինողը (հենք պատրաստելերը տարբեր ժամանակ են վերջանում, կոները մաս-մաս փոխել: Իսկ այդ հանգամանքը մեքենայի ավելորդ պարապուրդ կառաջացնի: Բացի դրանից, հինեւուց հետո փամփուշտների վրա մնացած մանածը նորից փաթաթելիս կտափակի և բորիններն անկանոն ձեւ կտափանան: Ուստի նախափաթեթեները պետք են որից փաթաթել կամ կտրատել ու թա-

փել: Վերջապես այն դեպքում, յերբ բոլոր բորբնների թելերը հավասար են և հայտնի յե, ավելի ճիշտ կլինի, առանց շարժածքը փոխելու, հաշվել հենքի յերկարությունը, վոր կարելի յե ստանալ տված բորբններից: Բորբնների վրա հավասար յերկարությամբ և միատեսակ համարի թելեր փաթաթելու դեպքում, բոլոր փաթաթած բորբնների հաստության տրամագիծը հավասար կլինեն: Ուստի, վորպեսզի բոլոր բորբնների թելերը հավասարաչափ յերկար լինեն, անհրաժեշտ է, վոր վիլակ-ման ժամանակ նրանց տրամագիծը նույսաւար լինեն:



Ալ. 81.

Այն մեքենաներում, վորոնք ավտոմատ կերպով անջատում են բորբնը, հենց վոր նրանց տրամագիծը վորոշ չափի յե համում, նրանց վրայի թելերն ել հավասար կլինեն:

Նամ մեխանիզմներից մեկի կառուցվածքը հետեւյալն է. Բորբնի տրամագիծը հետզհետեւ մեծանալով՝ Շ շտիֆտը (նկար 80 Ա և Բ) բարձրանում է և իր հետ բարձրացնում է Կ շնիկի ծայրը: Կ շնիկի մյուս ծայրն այդ միջոցին ազատում է Բ լծակը: Բ լծակի վերեկի ծայրը թեքվում է և Բ ձողունը բերում բորբնի տակ և այդպիսով բորբնը բաժանում է թմբուկից:


81 նկարում (Ա և Բ ձեւերը) պատկերացված՝ բորբնն անջատող մեխանիզմը փոքր ինչ տարբեր կառուցվածք ունի: Դ բոնիչը ամրացված է Ա ձողիկին: Վորքան մանածն ավելի յե փաթաթվում և դրա հետ բորբնի տրամագիծը մեծանում, ձողիկը Դ բոնիչի հետ միասին բարձրանում է: Բարձրանալիս Ա ձողիկի ներքելի ծայրը սլկվում է անշարժ Ե շտիֆտի վրայով: Հետո Ա ձողիկն անցնում է Ե շտիֆտի վրայով, կպչում և ձգակավոր թմբուկի ակույցում գտնվող շարժական Ե

շտիֆտին: Ը շտիֆտը Ա ձողիկը բարձրացնում է Բ կամրջի վրա, վորի շնորհիվ բորբնը բաժանվում է թմբուկից (նկար 81 Բ):

5. ՀԱԿՈՒՑՑԱԿԱՊԵՐ

Արդեն ասել ենք, վոր հանգույցների պատճառով գործվածքի արտաքին տեսքը վատանում է: Մեծ հանգույցը, յերկար ծայրեր ունեցող հանգույցը, պատճառ և լինում նույնպես, վոր թելը խճճվի ու կտրատվի՝ գործվածքային դազդյանում, յերբ թելն անցնում է ասպից կամ սանրի ատամների արանքներից: Յեթե նույնիսկ թելը չի կտրվում, այնուամենայնիվ մեծ հանգույցներից գործվածքն անմաքուր տեսք և ստանում:

Ուստի ամեն մի վիլակումի պարտավոր ե կտրված թելի ծայրը սահմանված գործվածքային հանգույցով (նկար 82 Բ) կապել յեվ վոչ թե դերձակային հանգույցով, ինչպես պատճառում է համախ (նկ. 82 Ա): Նկարից յերևում է, թե վնրքան մեծ, այսինքն՝ ավելի ուսուցիկ և լինում գերձակային կապը գործվածքայինից: Այսեղից պարզ է, թե ինչու այդ հանգույցն ավելի դժվարությամբ կանցնի ասպով և, նամանավանդ, սանրի ատամների արանքներով, քան գործվածքային հանգույցը: Սակայն պետք ե նշել, վոր մեծ մասամբ բանվորուհիները թելը




Նկ. 82

գերձակային հանգույցով են կապում, վորովհետևն բանց թվում է, թե այդպես հանգույց կապելու համար ավելի քիչ ժամանակ և հմտություն և պահանջվում, քան գործվածքային հանգույցի համար. իրոք այդ սխալ է. սովորելուց հետո գործվածքային հանգույցն ավելի արագ և հեշտ ե կապվում, քան սովորական հանգույցը:

Վիլակունու աշխատանքը հեշտացնելու և հանգույց կապելն արակացնելու նպատակով, վերջերս արտասահմանում և մերգանում ավելի շատ են գործածում կիսամիխանիկական և մեխանիկական հանգույցակապեր: Հանգույցակապը վոչ միայն արակացնում և հանգույց կապելու աշխատանքը, այլ և լավ հանգույց և տալիս: Ներկայումս ամենից ավելի հայտնի յեն Ռիբկի, Բարբերի, Կոլմանի, Բոյսի, Կուկի և Լիբերտի հանգույցակապերը: Սրանցից մի քանիսը կանոնավոր գործվածքային հանգույցներ են տալիս, մյուսները հասարակ:

83 նկարում տրվում է Բարբեր-Կոլմանի հանգույցակապը: Նրա կառուցվածքը համեմատաբար բարդ է: Բացի դրանից, թանգ արժեք (կա-

պելու և ուղարկելու ծախսերով միասին արժե 36 ռուբլի): Այնուամենաշնիվ, այս հանգույցակապը շատ է տարածված չնորհիվ այն բանի, վոր արագ և կանոնավոր (թիւ պարզ) հանգույց ե կապում: Նկարուգրված հանգույցակապի կառուցվածքը և աշխատանքը հետեւյալն է: Կապվող թելերը զրվում են յերեք կարթերի վրա՝ *B₁* *B₂* և *B₃*: *B₁*



Նկ. 83.


ուաշ ե ճոճվում: Այսպիսով մկրատը բացվում ու խփվում է: *B₂* կարթն այսպես ե կեռված, վոր նա առաջին պտույտի ժամանակ կարթերի վրա դրված թելերից հանգույց ե կապում: Այդ միջոցին մկրատը փակ է լինում: Այն միջոցին, յերբ մկրատը հետեւյալ կես շրջանն է կատարում, *K₂* սայրը հեռանում է և բացված մկրատները բռնում են: *B₁* կարթի վրա ընկած թելի ծայրը: *B₂* կարթի հետեւյալ պտույտի ժամանակ մկրատը փակվելով, թելերը կարում են, միաժամանակ ամուր պահում ե սեղմած սայրերի արանքում: Դրանցից *B₃* սայրը հեռանում է՝ մեքքը *B₂* կարթի վրայից քաշելով, և ձգում է հանգույցը: Մկրատը բացվում է և կապած թելը բաց ե թողնում: Հանգույց կապելու գործությունն այսպես ե կատարվում: Հանգույցակապը հազցնում են ձախ ձեռքի վրա, և ինչպես ասված է, շարժվում է ձախ ձեռքի բութ մատով:

84 Ա նկարը ցույց ե տալիս Բոյս գործարանի հանգույցակապը: Այս հանգույցակապի առավելությունը Բարբեր-Կոլմանի հանգույցակապի հանդեպ այն է, վոր նա իսկական գործվածքային հանգույց ե կապում, այն ինչ Բարբերինը հասարակ հանգույց ե կապում: Բոյսի հանգույցակապի թերություններն են՝ 1) նրա մեծ ծանրությունը (Բարբեր-Կոլմանինը կշռում է 115 գ, իսկ Բոյսինը — 156 գ), դրա շընորհիվ վիլակուհու ձախ ձեռքն ավելի շատ ե հոգնում. 2) Բոյսի հանգույցակապն իր կառուցվածքով շատ բարդ է (նրա բաղադրիչ մասերի

թիվը հասնում է 60-ի, այն ինչ Բարբերինը — 43-ի), 3) հանգույց կապելու նպատակով թելը դրամելք Բարբերի հանգույցակապով ավելի պարզ է, քան Բոյսի հանգույցակապով (84 Ե նկարից պարզ յերեսում է, թե թելն ինչպես ե գնում հանգույցակապի մեջ). 4) Բոյսի հանգույցակապը ծրաբոցի և առաքման ծախսերով արժե 77 ռ., այն ինչ Բարբերինը — 36 ռ.:



Նկ. 84.




Բ.




Նկ. 85.

85 Ա նկարում ցույց ե տրված կուկի գործարանի հանգույցակապը: Այդ հանգույցակապերը 4 տեսակ են լինում՝ 1) պարզ հանգույցակապ, 2) գործվածքային հանգույցակապ, 3) ուղիղ հանգույցակապ, 4) բրդի հանգույցակապ: Կուկի հանգույցակապը հապլը բաղկացած է 34 մասից և արժե մոտ 27 ռ., 50 կոպեկ:


Մեխանիկական հանգույցակապերը մեղնում՝ ԽՍՀՄ-ում գեռ համեմատաբար քիչ են տարածված: Ուստի բանվարուհիները պետք ե լավ ծանոթ լինեն, թե կանոնավոր հանգույցը ձեռքով ինչպես պետք ե կապել: Հանգույցի ձեռը կախված է մանածի տեսակից: 86 Ա նկարում ցույց ե տրված, թե ինչ հաջորդականությամբ են կատարվում գործվածքային հանգույց կապելու գործողությունը, վոր կիրառվում ե բամբակի և վուշի մանածների համար: Պարզության համար նկարի վրա մի թելն սպիտակ ե պատկերացված, մյուսը՝ սև: Նկարում ցույց ե տված, թե ինչպիսի հաջորդականությամբ են կապում մահուգի, այլ և կամպուի հանգույցը: Յեթե կամպու մանածը (գարուսի տեսակ) կա-




Նկ. 86.



Նկ. 87.



Նկ. 88.



Նկ. 89.

պես մահուղի հանգույցի ձևով, ապա վերջինս գործելու ժամանակ հեշտությամբ կբացվի, վորովհետեւ նրա թելը շատ կոկ է: Ուստի վոլորածու կոկ կոմվոլ մահածը կապում են 88 նկարում ցույց տված հանգույցի ձևով:

Մետաքսի մանածն, իր աչքի ընկնող նրբության պատճառով, մետաքսային հանգույցով են կապում, ինչպես ցույց ե տված 89 նկարում:

ՀՐԱՑՈՒՄՆԵՐ

XV ՎԻԼԱԿՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿԸ

1. ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՀԱՅՎԵԼ ՀԱՐԻՉՈՒԵԿՆ ՅԵԼ ԽԱԶԱՉԵԼ ՎԻԼԱԿՈՂ ՄԵՔԵՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵջ:

Մեքենայի տեսական արտադրողականություն անվանում են այն արտադրողականությունը, վոր կարող է ունենալ մեքենան անընդհատ, առանց կանգ առնելու, աշխատանքի ժամանակի: Բայց վորովհետեւ մեքենան չի կարող առանց կանգ առնելու աշխատել, ապա իրական արտադրողականությունը միշտ քիչ պակաս կլինի տեսականից: Այս զբլուում մենք ցույց կտանք, թե ինչպես են կատարում տեսական արտադրողականության հաշվարկը:

Արդեն ասել ենք, վոր հորիզոնական խաչաձև վիլակող մեքենաներում կոճը թելի վրա փաթաթելու արագությունը վորոշելիս, հարկավոր է թմբուկի կամ շարժվող լիսեռի արամագիծը բաղմապատկել 3,14-ով և նրա պտույտների թվով: Այսպիսով ստանում ենք այն մետրերի թիվը, վոր կարող է փաթաթվել կոճի վրա 1 ըոպեյում, կամ մեքենայի մեկ իլիկի արտադրողականությունը 1 ըոպեյում, արտահայտած մետրերով:

Սակայն արտադրողականությունը սովորաբար հաշվում են վոչ թե 1 ըոպեյի, այլ 1 ժամի կամ 1 հերթի համար: Ընդ վորում, արտադրողականությունը հաշվում են վոչ թե մանածի յերկարությամբ, այլ նրա քաշով: Յենթադրենք, վոր թմբուկի արամագիծը 20 ամ է, պտույտների թիվը 1 ըոպեյում 300 է, վիլակող թելը և 20 է (մետրական համարագրումով): Գետք ե գտնել մեքենայի մեկ իլիկի արտադրողականությունը կիլոգրամներով՝ 8 ժամվա համար: Այդ նպատակով նախ վորոշում են մեկ իլիկի արտադրողականությունը մեկ ըոպեյում՝ $20 \times 3,14 \times 300 = 18840$ ամ (188,4 մ): Վորովհետեւ իլիկը վոչ թե մեկ ըոպեյ յե աշխատում, այլ 8 ժամ, ապա ստացած թիվը բաղմապատկում

են 60-ով (մեկ ժամ ունի 60 րոպե) և ութով (յեթե աշխատանքը 8 ժամյա յե): Այստեղից՝ $188,4 \times 60 \times 8 = 90432$ մմ: Այսպիսով մենք կստանանք մեկ իլիկի արտադրողականությունն 8 ժամյա բանվորական որում, արտահայտած մետրերով: Արտադրողականությունը գրամներով վորոշելու համար, ստացած արդյունքը պետք է բաժանել մետրական Ն-ի վրա՝ $90532 : 20 = 4521,6$ գ (4 կգ 622 գ):

Բերենք մի որինակ ևս: Գլանիկի տրամագիծը 1,8 մմ է, պտույտների թիվը 1 րոպեյում — 7500 հ, վիլակվող թելը № — 50 (մետրական համարագրումով): Գետք և գտնել մեքենայի 100 իլիկի արտադրողականությունը 7 ժամվա համար: Դրա համար՝

$$\frac{1,8 \times 3,14 \times 7500 \times 6 \times 7 \times 100}{100 \times 50 \times 1000} = 356,075 \text{ կգ}$$

Այսպես, մեմբռայի տեսական արտադրողականությունը փորուելու համար անհրաժեշտ է՝ 1) Խմբավական իլիկի տեսական արտադրողականությունը մետրով՝ 1 րոպեյում, դրա համար բմբուկի տրամագիծը բազմապահում էն 3,14 յեվ թիվուկի պառույների թվով: (Յերեք տրամագիծը արտահայտված է սանիտիստրերով, արդյունքը բաժանում էն 100-ի, իսկ յերեք արտահայտված եր միջիմետրով՝ 1000-ի վրա): 2) Գտնել 1 իլիկի տեսական արտադրողականությունը մի ներքի համար, դրա համար մեկ իլիկի մեկ րոպեյի արտադրողականությունը բազմապահում էն 60-ով յեվ ներքի ժամերի-թվով: 3) Խմբավական վիլակվող համարի տեսական արտադրողականությունը՝ գրամներով, դրա համար մի ներքի արտադրողականությունը մետրով արտահայտված, բաժանում էն վիլակվող մանածի մետրական համարի վրա: Արտադրողականությունը հաշվելու համար, արդյունքը բաժանում էն 1000-ի վրա: 4) Ամբողջ մեմբռայի արտադրողականությունը հաշվելու համար մեկ իլիկի արտադրողականությունը բազմապահում էն մեմբռայի իլիկների թվով:

2. ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՀԱԾՎԵԼ ՈՒՂՂԱԶԻ ՎԱԼԵԿԱՌ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՑԵՍԵԿՆ ԱՐՏԵԳՐՈՂԵԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ

Ինչպես տեսանք, ուղղաձիգ վիլակող մեքենայում թելի վիլակման արտագությունը մետրերով վորոշելու համար պետք է՝ 1) Գտնել կոճի վրայի փաթեթի միջին տրամագիծը: 2) Շրջանագծի միջին յերկարությունը գտնելու համար միջին տրամագիծը բազմապահում 3,14: 3) Թելի վիլակման արագությունը 1 րոպեյում հաշվելու համար շրջանագծի յերկարությունը բազմապահում իլիկի՝ 1 րոպեյում կատարվող պըտույտների թվով: 4) Յեթե շրջանագծի յերկարությունն արտահայտված եր միլիմետրերով, ստացած թիվը բաժանել հազարի վրա, իսկ յեթե շրջանագծի յերկարությունն արտահայտված եր սանտիմետրներով, ստացած արդյունքը բաժանել 100-ի: Յենթադրենք, որինակ,

$$\frac{\text{վոր կոճի միջին արամագիծը } 500 \text{ մմ } \times, \text{ իլիկի պտույտների թիվը } 50 \times 3,14 \times 900}{1000} = 141,3 \text{ մ, այսինքն՝ } \frac{\text{մեկ իլիկի միջին րոպեյի տեսական}}{1000}$$

արտադրողականությունը հավասար է 141,3 մ-ի:

Մի հերթի տեսական արտադրողականությունը մետրերով գտնելու համար, մեկ րոպեյի արտադրողականությունը բազմապատկում էն 60-ով և հերթի ժամերի թվով: Որինակ՝ $109,9 \times 60 \times 80 = 53752$ մ:

Մի հերթի տեսական արտադրողականությունը գրամներով վորոշելու համար, տեսական արտադրողականությունը (մետրերով) բաժանում են մետրական համարի վրա: Յենթադրենք՝ տեսական արտադրողականությունը 8 ժամվա ընթացքում հավասար է 53752-ի, վիլակվում էն 32 մանածը: Ստանում ենք՝ $53752 : 32 = 1680$ գ (1 կգ 680 գ):

Հետևապես ուղղաձիգ վիլակող մեքենայի վորոշ ժամերի արտադրողականությունը հաշվելու համար այսպես են վարվում: 1) Մեկ իլիկի մեկ րոպեյի արտադրողականությունը (մետրով) բազմապատկում էն 60-ով յեվ աշխատանքի ժամերի թվով ու գտնում են տեսական արտադրողականությունը (մետրով): 2) Ստացած թիվը բաժանում էն մետրական համարի վրա յեվ սանում են տեսական արտադրողականությունը՝ գրամներով: 3) Տեսական արտադրողականությունը կիրոգրամներով ստանում համար, ստացած թիվը բաժանում էն 1000-ի: 4) Ամբողջ մեմբռայի արտադրողականությունը բազմապատկում են մեմբռայի իլիկների կամ մեմբռաների թվով:

3. ԻՆՉ ԲԱՆ Ե ՈԳՏԸԿԵՐ ԳՈՐԾՈՂԱԹՅՅԸՆ ԳՈՐԾԸԿԻՑԸ ՅԵՎ ԻՆՉՊԵՏՔ ՎԱՐԹԵՎԼՈՒՄ ԵՅՆ

Յեթե, ասենք թե, 8-ժամյա աշխատանքային որում մեքենայի իլիկը շարունակ աշխատի առանց կանգ առնելու, ապա կարելի յեվ վոր իլիկն աշխատանքային ժամանակ 100 տոկոսը կրանի: Յենաթաղբենք, թե իլիկը 8 ժամվա ընթացքում միայն 6 ժամ և աշխատում, մնացած յերկու ժամը ընկնում և պարապուրդին (պաճերը փոխելու, թելը կտրվելու, բանվորունու բացակայության և այլ պատճառներով): Այդ գեպքում արգեն նա վոչ թե աշխատանքային ժամանակի 8/8-կանն և բանում, այլ 6/8-ը: Այստեղից պարզ է, վոր իլիկի աշխատած ժամանակն ամբողջ աշխատանքային ժամանակի վորոշ տոկոսն է կազմում: Այդ տոկոսը կոչվում է ոգտակար գործողության գործակից (*ո. գ. գ.*): Տվյալ գեպքում ո. գ. գ. կարելի յեվ գտնել այսպես՝ $x : 100 = 6 : 8$: Այստեղից՝ $x = \frac{6 \times 100}{8} = 75\%$, այսինքն՝ ոգտակար գործողության գործակիցը $= 75\%$:

Բերենք մի որինակ ևս: Յենթաղբենք, թե խրոնոմետրաժով, (ժամանակը հաշվելով) վորոշված ե, վոր 8-ժամյա բանվորական ժամանակից իլիկը կանգնած է լինում 1 ժամ 30 րոպե — կամ րոպեների վերածած՝ 90 րոպե: 8 ժամը բոլոր վերածելով՝ ստանում ենք $60 \times 8 = 480$ րոպե: 480 րոպեից մեր իլիկը 90 րոպե կանգնած ե, այսինքն՝ իլիկի աշխատանքը տեսում է $480 - 90 = 390$ րոպե: Ուստի իլիկը 100%-ով չի աշխատի, այլ պակաս, և այնքան անգամ՝ պակաս, վորքան անգամ՝ 390 փոքր է 480-ից: Վերոհիշյալի հիման վրա կազմում են հետևյալ համեմատությունը $x:100 = 390 : 480$, $x = \frac{390 \times 100}{400} = 81,3$ կամ

ո. գ. գ. = 81,3%: Յենթաղբենք, թե իլիկի խրոնոմետրաժը տարվել է վոչ թե ամբողջ 8 ժամվա ընթացքում, այլ միայն 2 ժամվա: Այդ 2 ժամվա ընթացքում իլիկը կանգնած է յեղել 20 րոպե, այսինքն՝ 120 րոպեից աշխատել է $120 - 20 = 100$: Ինչպես նախընթաց դեպքում, այժմ ել կազմում ենք հետևյալ համեմատությունը: $120 : 100 = 100 : x$:

$$x = \frac{100 \times 100}{120} = 80,3 \text{ կամ ո. գ. գ.} = 80,3\%: \text{Ուրեմն ո. գ. գ. վորոշելու համար հարկավոր են 1. Նախ իմանալ, թե իլիկն ինչին նամանակ է աշխատում յեվ ինչին կանգ է առնելու: Այս նպատակով պետք է չափել իլիկի աշխատանի տեսլուրյան յեվ պարապուրդի ժամանակը: 2. Իլիկի աշխատանի իրական ժամանակը բաժանել դիտուրյան վրա գործադրած ժամանակի վրա յեվ արդյունքը բաժանել 100-ի:$$

Այժմ տեսնենք, թե ինչից ե կախված ո. գ. գ.: Վերաբանի բոլոր բանվորուհիներն ել լավ գիտեն, վոր կամ մանած՝ շատ լավ ե վերակազմում, շատ քիչ հատումներ ե տալիս, իսկ մի ուրիշ մանած — վատ ե վերակազմում: Վորքան թելը շատ հատումներ ե տալիս վերական ժամանակ, այնքան իլիկը շատ պարապուրդներ ե ունենում: Հետևապես ամենից առաջ ո. գ. գ. պետք է կախում ունենա վերակազմ մանածի տեսակից և և-ից: Վորքան մանածը բարակ և թույլ ե, այնքան նա հեշտ ե կտրվում: Յեթե մանածը հաստ ու հավասար ե, ապա նրա պահանջը շուտ են հատվում: Ուստի պարապուրդի ժամանակը (պահելը փոխելու պատճառով) մեծանում է: Ո. գ. գ. նույնպես կախված ե բանվորունու փորձառությունից և հմտությունից, ամեն մի բանվորունունող իլիկների քանակից, շենքի խոնավությունից (խոնավ մանածն ավելի ամուր ե): Այնուհեաւ ոգտակար գործողության գործակցի տարբեր լինելու պատճառը կարող է լինել և այն, թե մանածը վերակազմ ե կաժերից, թե՝ պահերից, կամ ներկած ե, թե՝ վոչ: Վերջապես տվյալ դեպքում նշանակություն ունի մեքենայի սարքին լինելը կամ նրա մաշվածության աստիճանը, այլ և աշխատանքը կազմակերպումը:

4. ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՎՈՐՈՇԵԼ ՄԵՋԵՆԱՑԻ ԽՐԱԿՈՆ ԸՐՑԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Յեթե տված տեսակի և համարի մանածի վելակման համար հայտնի յեն իլիկի կամ մեքենայի տեսական արտադրողականությունը և նրա ո. գ. գ., ապա հեշտ կլինի վորոշել և մետենալի իրական արտադրողականությունը:

Յենթաղբենք, որինակ, մեկ իլիկի տեսական արտադրողականությունն 8 ժամում հավասար է 2000 գի (2 կգ): Ո. գ. գ. = 70%: Այստեղից իրական արտադրողականությունը վորոշելու համար պետք է՝ 1) զիտենալ տեսական արտադրողականությունը յեվ ո. գ. գ.-ի: 2) Ո. գ. գ. բազմապատկել տեսական արտադրողականությունը գիտենալով, յիշտ կարելի յեվ վորոշել ոգտակար գործողության գործակիցը: Վերցնենք նախք նախորդ որինակը: Տեսական արտադրողականությունը 2000 գ է: Իրականը 1400 գ: Այստեղից կազմում ենք հետևյալ համեմատությունը՝ ո. գ. գ. : $100 = 1400 : 2000$: Ուրեմն ոկտակար գործողության գործակիցը $= \frac{1400 \times 100}{2000} = 70\%$: Ո. գ. գ.-ի մեծությունը կախված է զանազան պատճառներից: Ուստի վորոշ տեսակների և համարների մանածի համար նախապես ճիշտ վորոշված ո. գ. գ. սահմանելը համարյա անհնարին է: Մի գործարանում վորոշ պայմաններում ո. գ. գ. կարող է մեծ լինել, իսկ ուրիշ գործարանում փոքր: Միևնույն տեսակի և համարի մանածը կարող է զանազան դիմացկունություն ունենալ: Այստեղից հետևում է, վոր վորոշ տեսակի մանածի համար ո. գ. գ. միայն մոտավորապես կարելի յեվ հաշվել:

Ոգտակար գործողության գործակիցների մուտքայի աղյուսակը

Մանածի տեսակները	Կաժերից առկուներով	Գաճերից առկուներով
Զվոլորած բամբակ	60—65	70—80
Վոլորած բամբակ	60—70	75—85
Սաքսոնական չվոլորած բուրդ	60—70	70—80
Սաքսոնական վոլորած բուրդ	65—75	75—85
Ապարատային բուրդ	60—70	70—80
Գարասի բուրդ	60—70	70—80

5. ԳՈՐԾՎԾՆՑԻ ՄԵԿ ԴԱԶԳԵՑԻ ԽՐԿՆԵՐԻ ՁՈՆԿԻ

Գործվածքային գործարանի համար վելակուր մեքենաների անհրաժեշտ քանակը հաշվելիս, յենում են գործվածքային ամեն մի գաղգրահին անհրաժեշտ իլիկների քանակից: Գործվածքային հին գաղգրահին մեկի համար բահանջմում եր 1-ից մինչև 1,3 իլիկ:

իսկ նոր, արագընթաց վիլակող մեքենաներն ամեն մի դաղդյանի համար պահանջում են 0,5 իլիկից վոչ ավելի: Այդ նշանակում ե, վոր 50 իլիկ կարող ե սպասարկել 100 գործվածքային դաղդյանի:

XV I. ՎԻԼԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՎԻԼԱԿՄԱՆ ՊԵԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վիլարանի աշխատանքի թերություններն են՝ բույլ փարաբելը, անհավասար փարաբելը, յերկու ծայրանի փարաբելը, մակածածկող (իրավա անցած) թելերը յեկ վերջապես վաս մամբված թելերը, կամ այն թելերը, փառնել պահպանել են վիլարանից բերած պակասուրյունները:

Թույլ փարաբելը կայանում ե նրանում, վոր թելերը կոճի վրա թույլ ձգվածքով են փաթաթվում: Հինվածքի ժամանակ վիլակող թելի ծայրը խրցում ե թույլ փաթաթված շերտի մեջ: Թելը կտրվելիս ծայրը դժվարությամբ ե գտնվում, փորովնեու նա մտնում ե թույլ փաթաթված շերտերի մեջ: Բացի կտրված ծայրը գտնելու համար ժամանակ կորցնելուց և այդ պատճառով թելն անխուսափելիորեն կըտրատվելուց, թույլ փաթաթված կոճերից հինելիս, հենքն անհավասարչափ ձգվածք ե ստանում: Թե ինչպես պետք ե անել՝ ավելի ձիգ փաթեթ ստանալու համար, մենք այդ մասին խոսել ենք թելը ձգելու գործիքների նկարագրության ժամանակի:

Զիր փարաբում: Զիր անվանում են փաթաթելը, յերբ թելերը կոճի վրա շատ ձիգ են փաթաթված, այսինքն՝ մեծ ձգվածքով: Զափազանց ձգված թելը փաթաթելիս, վերջինս շատ հաճախ ե կտրատվում: Հետեվանքը լինում ե այն, վոր ավելորդ ժամանակ ե ծախսվում կտրատված ծայրերը կապելու վրա, ավելի շատ փրթվածք ե առաջանում, միևնույն ժամանակ ավելանում են թելի հանգույցները: Բացի դրանից, շատ ձգված թելը գործվածքային դաղդյաներով վատ ե անցնում:

Անհավասար փարաբում առաջանում ե դասավորող մեխանիզմի անկանոն աշխատելուց: Կոճի վրա անհավասար դասավորված թելերը նրա ծայրերից մեկում կամ մեջտեղում դար ու փոսեր են գոյացնում: Այդպես փաթաթելուց հենքի թելերն անհավասարչափ են ձգվում: Գործվածքային դաղդյանի վրա թելերի մի մասը կախ կընկնի, մյուս մասն, ընդհակառակը, շատ ուժեղ կգտի: Դրա հետևանքը կլինի այն, վոր մագողը թուլացած թելերը կկտրատի և գործվածքին անհավասար տեսք կտա: Թե ինչպես կարելի յե շտկել փաթաթման անհավասարությունը, այդ մասին ասված ե դասավորող մեխանիզմներին վերաբերող գլխում:

Յերկատկ փարաբումն առաջանում ե այն դեպքերում, յերբ կոճի վրա փաթաթվող թելն իր հետ տանում ե կտրված թելը: Այդ գեղաքում թելը կոճի վրա տեղատեղ մի տակ ե փաթաթվում, տեղատեղ՝ յերկտակ: Հենքը պատրաստելիս այս թերությունը վերացնել չի կարելի: Խոկ գործելու ժամանակ նրանից խոտանք կստացվի, գործվածքում զույգեր կամ կրկնակի քելեր կառաջանան: Յերկատկ փարաբելը վիլակում անուշադրյան հետեւկան ե յեկ հետուրյամբ կլերազվեն, յերե վիլակումին ժամանակին նկատի, վոր բելը կողին քելին ե փարաբել:

Փարաբած թելեր: Կոճի վրա խոտանքը բացառապես վիլակունու պատճառով ե առաջանում, վորը փոխանակ կտրված թելը կապելու, ուղղակի կոճի վրա յե փաթաթվում: Հենքը պատրաստելիս փաթաթված թելերի պատճառով ավելորդ ժամանակ ե ծախսվում՝ այդ թելերը կապելու համար: Թելերը փաթաթվում են այն վիլակունիները, վորոնք անբարեխզ են իրենց պարտականությունների նկատմամբ: Այդպիսի չարարկություններից խուսափելու նպատակով, վիլակունուն հանձնարարվում ե նշաններ դնել, վորոնք ցույց կտան, թե վար վիլակունին ե փաթաթել այդ կոճերը:

Վաս մարդան թել: Բոլոր հանգույցները, իլիկները, «դուգարեները», հաստ ու բարակ տեղերը և այլ պակասությունը անպայմանորեն պեսք ե վերացվեն վիլակման ժամանակ: Նկատենք, վոր վատ մաքրված թելը կարող ե ստացվել կամ վիլակունու պատճառով, կամ մեխանիզմների անսարքության պատճառով: Թելն անմաքուր տեսք ե ստանում նաև վատ կապած հանգույցներից:

Ուստի վիլակունին ինքը թույլ չպետք ե տա, վոր թելի վրա խորը հանգույցներ գոյանան, այլ նա պետք ե հանգույցները կապի, ինչպես հարկն ե:

Ուրեմն պակասավոր են համարվում այն կոճերը, վորոնց վրա թելը կամ չափազանց թույլ, կամ շատ ձիգ ե փաթաթված, կամ այն կոճերը, վորոնց փաթաթվածքն անկանոն ե: Վիլարանի պակասությունների թվին են պատկանում նաև յերկտակ փաթաթման մաքրված թելերը:

2. ՎԻԼԱՐԵՆԻ ՈՐՈՒՑՆԵՐԸ

Ոգուտ կոչվում ե մանած քանակի այն կորուստը, վոր առաջանում ե վիլակելուց հետո: Կան տեսանելի և անտեսանելի ոգուտներ: Տեսանելի ոգուտների շարքին են պատկանում կտրվածնքը (թնջուկները) և մասսմբ թափթփուկը, իսկ անտեսանելի ոգուտների թվին ե պատկանում չորանալուց առաջացող պակասությունը:

Վիլակումից ստացվող փրթվածքի քանակը կախված ե մանածի թե տեսակից ու համարից և թե վիլակունու հմտությունից: Վիլա-

կուհին սովորաբար փրթվածքը քաշով և հանձնում վիլակած թելի հետ միասին: Հանձնած մանածի և փրթվածքի քաշը գումարում ու հանձնում են վիլակվող մանածի քաշից: Թաշի այդ տարբերությունը ընդունում են վրապես անտեսանալի ուգար: Յենթաղթենք, որինակ, 10 կգ մանած հանձնել են վիլակելու: Վիլակումից հետո կոճերի վրա (նրանց, այսինքն՝ կոճերի քաշը—տարան հանած) ստացել են 9 կգ 760 գ մանած և 200 գ փրթվածք: Ուրեմն անտեսանելի ոգուար կը լինի 40 գ: Փրթվածքի և ուգարի քանակները սովորաբար արտահայտում են վիլակվող մանածի քաշի տոկոսներով: Նախորդ որինակում վիլակման հանձնած 10 կգ (10000 գ) մանածից վերադարձել են 9760 գ մանած և 200 գ փրթվածք: Անտեսանելի ուգարի քաշը կը լինի 40 գ:

Փրթվածքի տոկոսային հարաբերությունը փառուելու համար, եթե բանակը բազմապատկում են 100-ով յեվ բաժանում են վիլակման համար հանձնած մանածի բաշի վրա: Տվյալ որինակում կլինի՝ $\frac{200 \times 100}{10000} = 2\%$

Ուրեմն վիլիակումից ստացված փրթվածքը 2% և կազմում: Անտեսանելի ոգուարի տոկոսը վորոշելու նպատակով այսպես են վարչում:

Մանածը յեվ փրթվածքը հանձնելուց հետո, մնացած պակասորդի բարքագմապատկում են 100-ով յեվ բաժանում են վիլակման համար ստացած մանածի ամբողջ բաշի վրա:

$$\text{Տվյալ դեպքում } \frac{40 \times 100}{10000} = 0,4\%, \text{ այսինքն՝ անտեսանելի ուգարը}$$

կազմում է մանածի $0,4\%$:

Գլխավորապես անտեսանելի ոգուարի մեջ և մտնում նաև չորանալուց առաջացող պակասորդը: Վիլակման ժամանակ առաջացող պակասորդի տոկոսը տարբեր և լինում, նայած մանածին և այն շենքի խոնավության աստիճանին, վորտեղ վիլակումն է կատարվում: Վիլակման ժամանակ մանածի՝ չորանալու պատճառով առաջացող պակասորդի աստիճանը հաշվելու հասրավորությունը ստեղծելու համար, հանձնարարությունը և վիլակումից առաջ և հետո փորձարկել մանածի խոնավությունը: Նամանավանդ այդ շատ կարևոր է բրդի և մետաքսի համար: Թե անտեսանելի ուգարի ինչ քանակ և թույլատրելի համարվում—այդ շատ դժվար է ասել: Յեթե մանածի և շենքի խոնավությունը նորմալ է, անտեսանելի ուգար չպիտի ստացվի: Թափթփուկի մեջ և մտնում մասամբ վիլակումու վատ ժողոված փրթվածքը և գլխավորապես թելից թուած աղվամազը: Թելից թուած աղվամազի քանակը այնքան անշան է, վոր հաշվի չպիտի առնելի փրթվածքը թափթփուկին լինելը բոլորովին անթույլատրելի յե: Փրթվածքը

գործարանը ծախում է, նրանից նորից մանած են պատրաստում, իսկ թափթփուկը փրթվածքից շատ ցածր և գնահատվում:

Ուստի ամեն մի վիլակունի պարտավոր է մեծ ուսադրությամբ ժողվել փրթվածքը յեվ չըողնել, վոր նա հատակի վրա բախվի:

Փրթվածքի քանակը կարող է կախված լինել վոչ միայն մանածի վորակից և տեսակից, այլ և մի շարք ուրիշ պատճառներից՝ մեքենայի խանգարվելուց, կաժերի խճճելուց: Ուստի փրթվածքի և ուգարի թույլատրելի քանակի ճիշտ սահմանված տոկոսներ առայժմ գոյություն չունեն: Ուգարների ստորև բերված տոկոսները կարելի յե միայն մոտավոր տոկոսներ համարել: Իվանովսկի պետական տրեստի 1929—30 թվի այդ դիմավանը տոկոսային հետեւյալ ցուցանիշներն ե տալիս.

Պաներից վիլակվող բամբակի մտնածը տախս և նետելյալ տոկոսներ՝

№ 6—№ 10	№ 12—№ 18	№ 20—№ 26	№ 28—№ 36	№ 38—№ 44	№ 44—№ 70
0,8%	0,8 %	0,5%	0,45%	0,37%	0,32%

Բրդի մանածի ուգարի տոկոսը մի քիչ ավելի յե: Այսպես, որինակ, սաքսոնական բուրդը պաճերից վիլակելիս ստացվում է 0, 5-ից մինչև 0, 8 տոկոս ուգար, կաժերից 0,75-ից մինչև 1 տոկոս: Գարուսե բուրդը՝ 0,5-ից մինչև 1 տոկոս, ապարատայինը՝ 0,5-ից մինչև 1,2 տոկոս:

XVII. ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԻՍԱՆԱ ԱՍԵՆ ՄԻ ՎԻԼԱԿՈՒՅՆԻ

1. ՎԻԼԱԿՈՒՅՆԻ ԸՆՎ ՎԻԼԱԿՈՒՆԻ ԱՅՆ ԱՅԼԻՇԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ*)

Բամբակագործական արդյունաբերության վիլակունի պարտականությունները.

Վիլակունիներն աշխատում են՝ մանածը փաթեթների կոճերից, բուրդներից և կաժերից հենվածքի կոճերի կամ միջնաթերային պաճերի և կոճերի վրա վիլակել: Հաճնաման տեղից մանածը բերում են իրենց մույկարատված թելերը կարգի յեն բերում գործվածքային հանգույցով՝ ձեռքով, կամ հանգույցակապերով: Հետևյում են, վոր թելերը հավասարաչափ ձգվեն, ամուր լինեն, փաթաթվածքը կանոնավոր և մանածը մաքուր լինի, չխողնելով, վոր ձգվածքը պակասի, կոճերը չափից ավելի լցվեն, մեծ հանգույցներ չտուածանանան: Փրթվածքը (թնջուկները) հանձնում են ըստ պատկանելույն, նշան են անում կոճերը, յիթե

*) Պազվածք զործվածքայինների արհմիության տարիքային տեղեկատուից

չկան հատուկ նշան անողներ և կապում են լարերը։ Սրբում են մեքենաների աղվամազը և պարբերաբար (կորոշ ժամանակից հետո) սրբում են մեքենաները և մաքրող գործիքները։

Կամվոյ յեվ մահուդի արտադրության վիլականությունները։

Վիլակուհները ծանոթ են իրենց մեքենայի կառուցվածքին և աշխատանքին։ Նրանք կարողանում են կապել լարերը և կանոնավորել փաթաթվածքը, մանածը բաժանում են ըստ մասնակի (ոարտայ), տեսակի, համարի և գույնի։ Մանածը դրսում են իլիկների վրա, հետեւում են փաթաթվածքի կանոնավարությանը և թելերի ճգլածքին, պաձերը և կաֆերը հատուկիս ժամանակին փոխում են և կտրված թելերը կապում են գործվածքային հանգույցով—ձեռքով, կամ հանգույցակապով։ Հետևում են փաթաթվածքի վորակին, թույլ չեն տալիս, վոր ձըգվածքը թուլանա, մանածը կեղտոտի, թուչքներ կատարի, անբավարար չափով վորովի, գերորոքներ (սուրբուահա), խոշոր հանգույցներ, թելի կտրտանք, կրկնակի թելեր առաջանան, կոճերը չափից շատ լցվեն և տյյն։ Իրենց մոտ են բերում մանածը և տարան, աշխատում ու կոճերն են նախապատրաստում, վիլակած մանածը, դատարկ կոճերը և փրթվածքը համապատասխան տեղերն են տանում և կշռերի հանձնում։ Մեքենաների աղվամազն են սրբում, յուղում են և նշանակված ժամերին մեքենաները և աշխատավայրն են սրբում։

Վաւեհի արտադրության վիլակուհու պարտականությունները։

Վիլակուհներն ինքնուրույն աշխատում են բոլոր սիստեմի մեքենաների վրա։ Ստանում ու բերում են մանածը, ծրարները քանզում ու բաժանում են, ամեն մի կաժ դրսում են ձողերի վրա և պասմաների բաժանելով՝ հագցնում են վիլակների վրա։ Կտրատում են կապերը, ծայրերը կտրում և մանածը փաթթում են կոճերի վրա, կամ գործվածքային հանգույցներով միացնում են թելերի նախափաթաթների ծայրերին։ Բատ համարի և գույնի հետեւում են վիրակիող մանածի հավասարաշափությանը և նկատած շեղումների մասին հաղորդում են հսկիչներին և յենթավարպետներին։ Թելերը կտրելիս, գտնում են նրանց ծայրերը, գործվածքային հանգույցներով կապում են։ Հետեւում են թելերի կանոնավոր ճգլածքին, կանոնավորում են բեռնաքարերը, թելն անց են կացնում խողանակների միջով, հետեւում են փաթաթվածքի կանոնավորությանը և թույլ չեն տալիս, վոր չափից ավելի փաթաթվի։ Պատրաստում են դատարկ կոճերը կամ նախափաթեթները, հանձնում են փաթաթած կոճերը և թնջուկները նշանակված բաժիններին, ստացած կտրատված տալիքը (կաժ) ցույց են տալիս վերակացուին և վերադարձնում են։ Հետեւում են մեքենաների կանոնավոր աշխատանքին և սարքավորությանը։ Հետեւում են կոճերի ամ-

բողջությանը, վիլակների, մաքրիչ խոզանակների և թելատարների սարքավորությանը, մաքրում են մեքենաները և աշխատավայրը։

Պահեստի վիլակուհների (ամեն տեսակի թելիկների) պարտականությունները։

Մշտական վիլակուհները բացակայելու դեպքում, պահեստի վիլակուհները նրանց տեղն են գրավում և կատարում են նրանց պարտականությունները։

Աշխատանքից ազատ ժամանակ գտնվում են բաժնի ավագի արամադրության տակ և նրա ցուցմունքով կատարում են վիլարանին վերաբերվող բոլոր աշխատանքները։

Կոճերը նշագրողները փաթաթած կոճերը հավաքում են բաժնի ավագի արամադրության տակ և նրա ցուցմունքով կատարում են վիլարանին վերաբերվող բոլոր աշխատանքները։

Կոճերը նշագրողները փաթաթած կոճերը հավաքում են վիլակուհներից, նշանում են սահմանված նշաններով, տանում են նշանակված տեղը, դասավորում են կոճերը փաթաթողների շրջանակներում և խառնած կոճերը ջոկում են։

Վիլարանի փարպետներ (ավագ վիլակուհու) պարտականությունները։

Ավագ վիլակուհներ հետեւում են մանածը ժամանակին մատակարարելու, հետեւում են վիլակուհների մեքենաների աշխատանքին, փաթաթվածքի կանոնավորությանը, կոճեր ծրաբելուն, մանածի մաքրիչներին, ուգարների և կտրված թելերի վորակին և ժամանակին ազդաբարում են բաժնի վերակացուներին՝ մեքենաների խանգարման մասին։ Խճած կոճերը և նախափաթեթներն աշխատանքի մեջ են դնում։

Վիլարանի վերակացուների (լենրավարպետների) պարտականությունները մեմբենաների սարբավորման հետ միասին։

Ցենթրալ վիլակուհները լավ ծանոթ են վիլակող բոլոր մեքենաների կառուցվածքին և աշխատանքին, սարքավորմանը ու նորոգմանը, հետեւում իլիկների և մեքենաների ժամանակին յուղելուն, հետեւում են, վոր թելերը կանոնավոր փաթաթվեն կոճերի վրա, պաճերը և շղուները զասավորում են մանածի մաքրիչի չափի և պահանջի համաձայն, հետեւում են նրանց վիճակին և աշխատանքի համար պիտանի լինելուն, պատասխանատու յեն մեքենաների աշխատանքի և ամբողջ բաժնի վիճակի համար։

Յուղով յեվ լարակապ բանվորուհների պարտականությունները։

Ցուղողները վիլակող մեքենաներին են յուղում, խնամքով սառուցում են ու մաքրում յուղելու անցքերը, հետեւում են կանոնավոր յուղելուն, չեն թողնում, վոր յուղը զես ու զեն ցայտի և կապում են արերը։

Վիլարանի բանվորների պարտականությունները։

Վիլարանի համար բանվարները մանած են բերում, կշռում են, մասնավոր լիքը արկղը բերում են վիլակուհների մոտ, փամփուշները և

կոճերն արկղներում դարսում և ամրացնում են, կշռում ու տանում են մեքը և դատարկ արկղներն իրանց նշանակված տեղերը, այնտեղ դարսում են, կոճերը բերում են հինողների մոտ ու սրանց մոտ յեղածը յետ են տանում:

2. ԱՅԽԵՑՆՔԻ ՊԱՅՄԱՆԵՐԻ ❶

Բամբակագործական արտադրության վիլակուհիները

№ 6—10	պաճերից վիլակելիս, ամեն մի վիլակուհուն	20—25	իլիկ, կոպարը	3
№ 10—16	»	»	»	»
№ 17—30	»	»	»	»
№ 30—40	»	»	»	»
Դունավոր մանածը կոճերից վիլակելիս	»	10—12	»	6

Վուշի արդյանաբերության վիլակուհիները

Թերամշակ, յեփած, չոր և թաց մանածները վիլակելիս, մեկ վիլակուհուն մինչև 12 վիլակ, կոպարը—4:

$\frac{1}{4}$ և $\frac{1}{2}$ սպիտակ մանած վիլակելիս, 1 վիլակուհուն մինչև 10 իլիկ կոպարը—5:

$\frac{3}{4}$ և $\frac{4}{4}$ սպիտակ մանած վիլակելիս, 1 վիլակուհուն մինչև 9 իլիկ կոպարը—5:

Սպիտակ ներկած մանածը վիլակելիս, 1 վիլակուհուն մինչև 9 իլիկ կոպարը—5:

Մահուդի յեկ կամվոլ արտադրության վիլակուհիները

Թերամշակ մանածը կաժերից վիլակելիս, 1 վիլակուհուն 10—12 իլիկ, կոպարը—4:

Ներկած մանածը կաժերից վիլակելիս, 1 վիլակուհուն 10—12 իլիկ, կոպարը—4:

Թերամշակ մանածը պաճերից վիլակելիս, 1 վիլակուհուն 20—25 իլիկ, կոպարը—4:

Մետախի արտադրության վիլակուհիները

Ներկած մետաքսը վիլակելիս, 1 վիլակուհուն 12—25 իլիկ, կոպարը—5:

Հում բոժոժը վիլակելիս, 1 վիլակուհուն 25—35 իլիկ, կոպարը—5:

Պահեստի վիլակուհներ, կոպարը—2:

Կոճեր զբոշմող բանվորուհներ, կոպարը—3:

Ավագ վիլակուհներ, կոպարը—7:

Յենթավարպետներ՝ մեքենաների սարքավորմամբ, կոպարը—14:

Յուղողներ և լարակապեր, կոպարը—4:

Վիլարանի ոժանդակ բանվորներ, կոպարը—4:

ՀԱՐՑԱՓԵՐԸ

- Ի՞նչպես և ի՞նչ նշաններով են ստորաբաժանում մանածը:
- Ի՞նչ և վոլորքի աստիճանը:
- Ի՞նչը նկատի ունենալով մանածին շատ կամ քիչ վոլորք են տալիս:
- Ի՞նչով և վորոշվում մանածի ամբությունը:
- Վորըն և խոնավության նորման և ի՞նչ նպատակով և սահմանված այդ:
- Ի՞նչ և մանածի համարը:
- Ի՞նչն և կազմում մետրական համարագրման հիմքը:
- Բամբակի, վուշի և բրդի վոր մանածը կունենա № 1 անգլիական համարագրությամբ:
- Ի՞նչով և տարբերվում մետաքսի համարագրումը թելիկավոր այլ նյութերի համարագրումից:
- Ի՞նչով համար և համարագրությունների փոխանցման աղյուսակը և ի՞նչպիս են ոգովում այդ աղյուսակով:
- Ի՞նչպիս և համարագրվում վոլորած մանածը և ի՞նչպիս են վորոշում վոլորած մանածի համարը:
- Ի՞նչ տեսք ունի գործվածքային գործարանի վիլարանը բերված մանածը:
- Ի՞նչով անմիջապես կաժերից կամ պաճերից չեն հինում, այլ մանածը նախ վիլակում են կոճերի և բոբինների վրա:
- Արդյոք մանածը հետագա գործողությունների համար կունենա՞ր պահանջնջող հատկությունները, յեթք չենթարկվեր վիլակման և այդ գեպքում նա ի՞նչ պակասություններ կունենա՞ր:
- Ի՞նչից վրա յեն տեղավորում կաժերն ու պաճերը վիլակելու ժամանակը:
- Ի՞նչ առավելություններ ու թերություններ ունեն գանազան կառուցվածքի պակները (բրոն):
- Ի՞նչ նպատակ ունեն և ի՞նչումն է կայանում պաճերի բռնիչների կատարելու գործությունները:
- Ի՞նչից ե կախված պաճի կամ շպուի թելի յերկարությունը:
- Ի՞նչպիս կարելի յե վորոշել պաճի թելի յերկարությունը:
- Ի՞նչից վրա յե փաթաթված մանածը զուգահեռ և խաչաձև վիլակման ժամանակը:
- Կոճն ի՞նչից ե շինվում, ի՞նչ ձե ունեն կոճերն ու փամփուշտները:
- Ի՞նչ առավելություններ ու թերություններ ունեն կոճի զուգահեռ փաթաթի գանազան ձեւերը:
- Այսաձև փաթաթման ժամանակ թելերը փամփշտի վրա ի՞նչպիս են դասարկում:

24. Ի՞նչ է խաչաձև փաթեթի առավելությունը:
 25. Կոնածեւ և արեանման բորբններն ի՞նչ առավելություն ունեն զլանածեւ բորբնների համեմատությամբ:
 26. Ի՞նչից է կախված և ի՞նչպես է վորոշվում կոճերի կամ բորբնների տարրությունը մետրերով:
 27. Ի՞նչպես են ստորաբաժմնվում վիլակող մեքենաներու:
 28. Վիլակող մեքենայում թելն լինչ հարմարանքների միջով և անցնում:
 29. Ուղղաձիգ վիլակող մեքենաներում կոճը վորտեղից և ի՞նչպես է շարժվում:
 30. Ի՞նչ տարբերություն կա հին և նոր տեսակի վիլկները կառուցվածքի մեջ:
 31. Ի՞նչ չափելու պատույների թվեր պետք և իմանալ՝ իլեկի պատույների թիվը հաշվելու համար:
 32. Իլեկի սրույցների իրական թիվը ճշտորեն կհամապատասխանի հաշվարկով ստացած թիվն:
 33. Ուղղաձիգ մեքենաների վրա ի՞նչպես են հաշվում թելի վիլակման արագությունը մետրերով:
 34. Ի՞նչպես ե ի՞նչի հարմարանքների շնորհիվ և թելը կոճի յերկարությամբ համասրաչափ շերտերով դասավորվում:
 35. Ճաղավոր ժամանիթերով գասավորող մեխանիզմները կառուցվածքային ի՞նչ տարբերություն ունեն արտակենտրոնային մեխանիզմների համեմատությամբ:
 36. Փաթաթվածքի մեջ ի՞նչ պակասություններ են առաջանում դասավորող մոխանիքների պատճառով:
 37. Վարտեղից և ի՞նչպես ե ստացվում կոճի շարժումը հորիզոնական վիլակող մեքենաներում:
 38. Ի՞նչպես են հաշվում թելի փաթաթվածքի արագությունը մետրերով՝ հորիզոնական վիլակման մեքենաներում:
 39. Ի՞նչպես են աշխատում բասավորող մեխանիզմները հորիզոնական վիլակման մեքենաներում:
 40. Վարտեղից և ի՞նչպես ե շարժվում բորբնը խաչաձև վիլակող մեքենաներում:
 41. Ի՞նչ լրացուցիչ հարմարանքներով են սժաված բորբնը շարժող մեխանիզմները:
 42. Ի՞նչ արագությամբ ե կատարվում թելի վիլակումը (մետրերով) մեկ ը առելում՝ զուգահեռ և խաչաձև վիլակման մեքենայում:
 43. Ի՞նչ հարմարանքների շնորհիվ և բորբնը խաչաձև փաթաթվում:
 44. Ի՞նչ առավելություն և թերություն ունեն գասավորող թելատար մեխանիզմները և ի՞նչ վեպերում ե հանձնաբարվում այս կամ այն մեխանիզմների կիրառումը:
 45. Ի՞նչ նպատակով են թելամաքրիչներ և թելաձիգներ զնում վիլակող մեքենաներում:
 46. Ի՞նչպես ելին մաքրում ու ձգում թելերը հին մեքենաներում և նոր մեքենաներում ի՞նչ հարմարանքների միջոցով են կատարվում այդ գործողությունները:
 47. Ի՞նչպես կարելի յե կանոնավորել թելի ձգվածքը:
 48. Ի՞նչ պահանջներ պետք ե բավարարի գառնուզի ձեր:
 49. Ի՞նչի համար ե ի՞նչպես ե գործում թելը կտրվելու դեպքում բորբնն ավտոմատ կերպով անջատող մեխանիզմը:
 50. Ի՞նչի համար ե և ի՞նչպես ե գործում ավտոմատ կերպով բորբնն անջատող մեխանիզմը, վորոշ արագություն թել փաթաթելուց հետո:
 51. Ի՞նչի համար են հանգույցակալերը:
 52. Ի՞նչ հետեվանք ե ունենում անկանոն կապված հանգույցը:
 53. Վեր արտադրողականությունն է կոչվում տեսական և զորը՝ իրական:
 54. Ի՞նչ պետք ե գիտենալ՝ տեսական արտադրողականությունը հաշվելու համար:

55. Ի՞նչ պետք ե անել՝ ոգտակար գործողության գործակիցը զանելու համար
 56. Ի՞նչպես են հաշվում ոգտակար գործողության գործակիցը:
 57. Ի՞նչպես են հաշվում մեքենայի իրական արտադրողականությունը:
 58. Ի՞նչ պակասություններ ունի վիլակումը և ի՞նչից են առաջանում այդ պակասությունները:
 59. Ի՞նչպես են հաշվում ուզարի 9%-ը:
 60. Ի՞նչից է կախված և ի՞նչ սահմաններում է տատանվում տեսանելի անտեսական սահմանների ուզարի քանակը:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հրատարակության կողմից	3
Մաթեմատիկական գիտելիքներ	5
Ներածություն	18

Առաջին բաժին

I. Մանած

1. Մանածի ստորաբաժանումը	22
2. Մանածի վորքը	23
3. Մանածի ամբողջունը	24
4. Մանածի խոնավությունը	25
5. Ի՞նչպես պետք է տարրել զանազան թելիքավոր նյութերի մանածները	27

II. Մանածի համարագրումը

1. Ի՞նչ է ցույց տալիս մանածի համարագրությունը	28
2. Ի՞նչու համար է մանածի համարագրումը	—
3. Մանածի համարագրման սիստեմերը	29
4. Մի համարագրման փոխանցումը մյուսին	30
5. Վոլորած մանածի համարագրումը	31
6. Ի՞նչպես պետք է վորոշել մանածի համարը, վոր վոլորված և զանազան հաստություն ունեցող առանձին թելերից	32
7. Աչքի չափով ի՞նչպես պետք է վորոշել մանածի համարը	—

III. Վիլակիող մանածը յեկ օրա պակասությունները

1. Ի՞նչ ձևով է մտնում մանածը զործվածքային գործարանի վիլարանում	33
2. Ի՞նչու չվիլակած մանածն անպետք է հետաքա մշակման համար	34
3. Գործվածքային գործարան մտնող մանածը հաճախ ի՞նչ պակասություններ է ունինում	35
4. Մանածի արատներն ի՞նչպես են անդրագանում ապրանքի վորակի վրա	—

IV. Կաժերի յեկ պաների գետեղման հարմարանքը վիլակման ժամանակ

1. Կաժերի գետեղման կրոնաները (պակ)	36
2. Պաճերի գետեղման բոնիչներ	38
3. Պաճերի չափերը և տարրողությունը	40

V. Մանածը վիլակելիս ինչի՞ վրա յեն փաքարում

1. Կոճեր	41
2. Փամփուշներ	42

VI. Կոները յեկ կծիկները փաքարելու ձեվը յեկ օրանց տարողությունը

1. Մանածն ի՞նչպես են փաթաթում կոճի վրա	43
2. Մանածը կոճերի վրա փաթաթելու զանազան ձեւերի առավելություններն ու թերությունները	44
3. Մանածն ի՞նչպես են փաթաթում փամփուշների վրա	44
4. Ի՞նչի յեն պետք կոնածե և արեանման բորբնները	45
5. Ի՞նչ ե խաչածե փաթաթման առավելությունը	46
6. Կոճերի և բորբնների տարրողությունը	47
7. Կոճի կամ բորբնի թելի յերկարությունը կախում ունի նրա համարից	47

Ըերկուրդ թագի 6

VII. Ընդհանուր գիտելիքներ վիլակող մեխենաների մասին

1. Ի՞նչ ստորաբաժանումներ ունեն վիլակող մեքենաները	48
2. Ի՞նչպես է թելն անցնում վիլակող մեքենայով	—
3. Ի՞նչ ստորաբաժանումներ ունեն վիլակող մեքենաները մասերը	—

Ա. ՈՒՂՂԱՉԻԴ ՎԻԼԱԿՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐ

VIII. Կոնը շարժող մեխանիզմ

1. Ի՞նչպես է շինված իլիկը շարժող մեխանիզմը	50
2. Ի՞նչպես պետք է հաշվել իլիկի ստորյաների թիվը	51
3. Ի՞նչպես պետք է հաշվել թիվը վիլակման արագությունը մետրերով՝ ուղղաձիգ վիլակող մեքենաների համար	53
4. Ի՞նչն է ուղղաձիգ վիլակման թերությունը	54

IX. Խնդը կոնի յերկարությամբ դասավորակ մեխանիզմներ

1. Ի՞նչպես են շինված և ի՞նչպես են աշխատում արտակենտրոնային դասավորությունները մեխանիզմները	55
2. Ի՞նչպես են շինված և ի՞նչպես են աշխատում ճաղավոր ժամանիվներ ունեցող՝ դասավորությունները	57
3. Դասավորող մեխանիզմների աշխատանքները թերությունները և նրանց վերացումը	59

Բ. ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ՎԻԼԱԿՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐ

X. Կոնը շարժող մեխանիզմ

1. Ի՞նչպես է շինված և ի՞նչպես է աշխատում կոճը շարժող մեխանիզմը	60
2. Ի՞նչպես պետք է մետրերով հաշվել վիլակման արագությունները	62
3. Վորոնք են հորիզոնական վիլակման առավելությունները և թերությունները	63

XI. Կոնի յերկարությամբ թիվ դասավորակ մեխանիզմներ

1. Ի՞նչպես են շինված և ի՞նչպես են աշխատում արտակենտրոնային դասավորություններ	64
--	----

2. Ինչպես են շինված և ինչպես են աշխատում ձաղավոր ժամանիվ ունեցող
դասավորող մեխանիզմները 65
3. Դասավորող մեխանիզմների թերությունները և նրանց վերացումը 66

Գ. ԽԱԶԱՉԵՎ ՎԻԼԱԿՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐ

XII. Բորբոք շարժող մեխանիզմներ

1. Ինչպես են կառուցված և ինչպես են աշխատում բորբոք շարժողմեխանիզմները 67
2. Ինչպես պետք է հաշվել խաչաձև վիրակող մեքենաների թմբուկի և սոնակ-ների պառայտների թիվը 74
3. Ինչպես պետք է մետրերով հաշվել թելի փաթաթման արագությունը 76

XIII. Թելը բորինի յերկարությամբ դասավորող մեխանիզմներ

1. Ինչպես են կառուցված և ինչպես են աշխատում ողակավոր թմբուկներով
դասավորող մեխանիզմները 77
2. Ինչպես են շինված և ինչպես են աշխատում դասավորող տանիչավոր
մեխանիզմները 78
3. Ի՞նչ առավելություններ և թերություններ ունեն դասավորող զանազան
մեխանիզմները 79
4. Դասավորող մեխանիզմների աշխատանքի թերությունները և նրանց վերացումը 80

XIV. Վիլակող մեմենաների բոլոր տիպերի ընդհանուր մեխանիզմները յիշ հարմարանքները

1. Թելը մաքրելու և ձգելու հարմարանքները 81
2. Ինչպես կարելի յէ կանոնավորել թելի ձգվածքը և մաքրությունը 85
3. Թելը կտրվելիս ավտոմատ կերպով բորբոք անջատող մեխանիզմ 86
4. Թելը վորոշ արամագծով փաթաթելուց հետո բորբոք ավտոմատ կերպով
անջատող մեխանիզմ 87
5. Հանգույցակապեր 89

I. ԱՅՍՈՒՄՆԵՐ

XV. Վիլակող մեմենաների արտադրանականության հաշվարկը

1. Ինչպես պետք է հաշվել հօրիզոնական և խաչաձև վիրակման մեքենաների
տեսական արտադրողականությունը 92
2. Ինչպես պետք է հաշվել ուղղաձիգ վիրակող մեքենաների տեսական արտա-
դրողականությունը 94
3. Ի՞նչ են զգուշակար գործողության գործակիցը և ինչպես են նաև գորոշվում 95
4. Ինչպես պետք է վորոշել մեքենայի իրական արտադրանականությունը 97
5. Գործվածքային մէկ զազգյանի իրեների քանակը 98

XVI. Վիլարանի աշխատանիքի բերությունները

1. Վիլակման պակասությունները 98
2. Վիլարանի ուղարները 99

XVII. Ի՞նչ պետք է գիտենա ամեն մի վիլականի

1. Վիլակունու և վիլարանի այլ աշխատակիցների պարտականությունները 101
2. Աշխատանքի պայմանները 104
3. Հարցաթերթ 105



2 4 8 6

Պատասխանատու խմբագիր Ա. Խանջյան
Լեզվական խմբագիր Հ. Գևորգյան
Տեխնիկական խմբագիր Հ. Տեր Դավթյան
Համանված ե արտադրության 24/I-1934 թ.
Ստորագրված ե տպիլու 4/III-1934 թ.
Ստատֆորմատ Ա5 148x210

Ծավալ 7 մմմուլ
Գլավիլս 8062 - Բ. Պատվեր № 454. Տիրաժ 1000
Տպոգрафия им. "Стачки 1902 г." АЧКПП Ростов-Дон

ՀՀ Ազգային գրադարան



NL0305477

24.300

10702

Т. А. Модестова

СПУТНИК МОТАЛЬЩИЦЫ



АРМЕНПРЕСС—ЭРИВАНЬ